



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

2-19



Հասարակօրին Սեփաննոս Գիւղձեանի

ԱՌՆԵՆԻ ՆՈՒՐԱՆԳԵՆԵՐ

# ԱՌՆԵՆԵՐ

ԳՐԵՆԼ

1900—1904

Բարձր հսկման համար շարժառայ գեներալ  
պէս կոռոզէն ընդարձակ դաշտեր.  
Իսկ համեմատ գրողները առումներում  
նման փոփոխ ազգայններ. շարժ թէ  
նեղ, իսկ թէ ծանծաղ ջուրը կենսա-  
րար է...

Հեղինակ

ԹԻՖԼԻՍ 1906

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մաղաքեան փող. 5.

(146)

6 NOV 2011

891.99

6-19 N: 9305  
4.11

Հրատարակչի և Մեկնանքի Գրքանոցի

ԲՈՒՔԻ ԵՆՈՐԱՆԳԵՆՆԵՐ



# Ա Ռ Ա Կ Ն Ե Ր

1001  
6587

ԳՐԵԱԼ

1900—1904



Թ Ի Ֆ Լ Ի Ձ  
Տպարան «ՀՆՐԱՄԱՆ» ԸՃԿ. Մաղաթեան փողոց № 5.  
1906 (116)

11750 V.001 #2013

45628

Дозволено цензурою 24 Декабря 1904 г. г. Тифлисъ.

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Առակախօսութիւնը առնասարակ սերտ յարաբերութիւն ունեցել է մարդկային կեանքի պատմութեան հետ: Այլաբանօրէն զրուցաարութիւնները կամ ուղղակի անշունչ էակներու և անբան անասուններու մտածել և խօսել տալը, բարոյախօսներու համար եղել է մի յարմար միջոց, որով ուզեցել են կենդանի օրինակներով, առաւել ազգու ըմբռնել տալ ճշմարտութիւնը և թողուլ առաւել երկարատև և հրահանգիչ տպւորութիւն:

Նախնական ժամանակները, երբ քաղաքական վարչութեան պայմանները դեռ մանկութեան մէջ էին, դեռ մարդ չէր ստացած իւր բարոյական անձնաւորութեան տիպարը և դեռ հասարակական կարծեաց և դատողութեանց ազատութիւն չկար, մարդկութիւնը մասամբ այդ յիշեալ թերութիւններով պաշարուած և մասամբ գերութեան ծանր շղթաներուն ներքև ճնշուած, ակամայ հլութեամբ, անլեզու և անբողոք կը տանէր իւր կեանքի դառնութիւնը: Այդ տխուր կացութեան մէջ և քաղաքական օրէնքներու ա-

նաչառ խստութեան ներքև ժամանակ՝ ժամանակ՝ երևել են խելացի և խորագէտ մարդիկ, որոնք չկարողանալով բացարձակապէս ասել իւրեանց կարծիքը, այլաբանօրէն պախարակել են թերութիւնները և բողոքել են խստութեանց դէմ, որով սկիզբն առել է առակախօսութիւնը:

Այս մատենագրական ձևը ամենից առաւել համարձակ՝ կորովի և համոզիչն լինելով, նորա սրախօսութիւնները, երգիծաբանութիւնները և հեգնութիւնները, ոչ թէ միայն չեն վիրաւորեր, այլ ընդհակառակն առաւել հետաքրքրական՝ գուարճալի և համբուրելի կանեն խրատն ու յանդիմանութիւնը: Առակները կը պարունակեն իւրեանց մէջ ամեն դարու, ամեն ժամանակի և ամեն մարդու առօրեայ կեանքի նկարագիրը, որով կարող են համարուել անժերանալի, միշտ նոր, արտրժելի և միշտ կրթիչ:

Պատմութիւնը հասուցել է մեզ պատկառելի առակախօսներու անունները, որոնք քաջ յայտնի լինելով ընթերցողներուն, աւելորդ կը համարենք ծանրանալ մասնաւոր տեղեկութիւններով: Այդպիսի հոչակաւոր առակախօսներ եղել են Յունաց մէջ Հայրն առակախօսաց Եզովբոսը, Հռովմայեցոց Փետրոսը, իսկ նորագոյն ժամանակներս Յրանսիացոց Լաֆոնտենը, Գերմանացոց Լեսինկը և Ռուսաց Կրիլովը Հայոց մասին պատմութիւնը կը լռէ, բայց մեզ անհատաւոր կերևի այդ բանը, վասն զի քանի որ Արևելեան ազգերու մէջ ընդունուած է առակաւոր խօսելը, այնպէս որ Երբայեցոց բարոյա-

խօսները Սողոմոնէն և մարգարէներէն սկսեալ մինչև հաւասարութեան և եղբայրութեան գերագոյն քարոզիչը Քրիստոս, բոլորն ալ իւրեանց խորին սկզբունքներու բացատրութեան մէջ ժամանակ՝ ժամանակ՝ գործածել են առակախօսութեան ձևը: Հետևապէս Հայոց ազգն ալ, որն իւր դրացի ազգերուն հետ շփուելով, որոշ չափով քաղաքականութիւն ձեռք բերել է, անշուշտ իւր նախնական ժամանակները, ի նկատի առնելով իւր քաղաքական պատմական վիճակը, յորում նիւթական ոյժը՝ դից պարզէն էր, բռնութիւնը՝ օրէնք, իսկ ազատութիւնը յանցանք, ՚ի հարկէ ունեցած լինելու է իւր Եզովբոսը. բայց ազգիս մտաւոր անմշակութիւնը կամ յանդուգն և նախանձոտ ձեռք՝ կամ մի ազգուրաց Մերուժան կամ շատ կարելի է սուրբ Գրիգորի ձեռամբ հեթանոս մատենագրութեան ջնջման ժամանակ, ոչնչացած լինի և Հայոց կարծեցեալ առակախօսը: Միայն Քրիստոսեայ յետագայ դարուց մէջ ունեցել ենք մի Մխիթար Գոշ և Վարդանայ հաւաքածոյն: Մխիթարայ առակները աւելի տոնմային են արձակ ձևով գրուած, համառօտ մի խմբագրութիւն չափաւոր ստեղծագործութեամբ, մեղմ բարոյական մը վանականութեան յատուկ լեզուով մը կը խօսի ընթերցողին հետ. կը պակասի աշխարհիկ հեղինակաց կծու ոճը և նրբին քանդակը: Մեր մատենագրութեան մէջ զգալի է այս ճիւղի աղքատութիւնը: Մենք՝ ուզելով փոքր ի շատէ նպաստել նորա ձօխացմանը և ՚ի լոյս ընծայելով համեստ եր-

կասիրութիւն մը, կանխենք ասելու, որ չենք համարձակիր դեռ զմեզ առակազիր անուանել, անոր համար, որ բազումամբ վերը յիշած հանճարեղ գրիչներուն, մենք ենք իբրև մոլորակ, որ մեր լոյսը նոցամէ ենք ստացել, նոքա են մեր ուսուցիչները. իսկ մեր աշխատութիւնը եղած է կարելոյն չափ մեր ինքնագիր առակներուն տալ հայկական ձև, ոճ և սգի, յարմարելով ազգային ճաշակին, բարոյից և սովորութեանց: Մեր նպատակն է օգտակար լինել աւելի մատաղերամ հասակին, կրթել զանոնք մայրենի լեզուի դպրութեանք և ներշնչել բարոյական ուղղութիւն գործնական կեանքի մէջ: Հետեապէս մեր այս ցանկութեան իրագործման համար կը խնդրուի բարեմիտ գաստիարակներու օժանդակութիւնը. որոնք իւրեանց փորձառութեամբ պարզեն մանուկ—աշակերտաց անակներու կըրթական և բարոյական իմաստները և շունչ տան մեր համը տողերուն:

Այս դիտաւորութեամբ մեր երկասիրութեան երախայրիքը յանձնելով հասարակաց դատաստանին կը փափագինք օգտուել անաչառ քննադատութիւնից, ապագային աւելի մշակուած և ճոխացած տպագրութեան մը հրապուրիչ յոյսով:

1904 Դեկտեմբեր  
Թիֆլիս

**ԱՌ ՍՏՈՒԵՐ ԻՄ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՈՐԴԻՈՅՆ**

Որդեակ Տիգրան, դու որ իբրև կոկոն վարդի փափկաթերթիկ,  
Քո վաղ կեանքի լուսնած ազին՝ մինչդեռ նոր՝ նաք՝  
Կը բանայիր բոսորնաթոյր գիրգ տերևներ նըրբածիլ,

Եւ քո շուրջը մինչ խընկէիք, բուբուռնք սիրոյդ բաղբրածաւալ,

Յանկարծ անագորոյն օրահասին շունչ մահահոտ,  
Խեռ փոթորիկ խաղաց, փետեց՝ բեզ մայրենի բուրաստանէդ,

Եւ սիրատրոփ սըրտիդ խամբեց ըզգացմունքներ նըւիրական:

Ո՛րչափ իղձեր գեղեցիկ, սրչափ յոյսեր ջերմատենշիկ,

Ո՛հ ՚ի դերև ելան բոլոր և ցըրուեցան երագի պէս:  
Ո՛վ ըստուեր սըրբազան, դու որ շըրջիս խորհրդաւոր,

Խոր գաղտնեաց ծոց տիեզերքին տնամաշելի,  
Է՛ջ առ իս մօտ և վառէ հոգւոյս լսպտեր աղօտալոյս,

Եւ ալևոր սըրտիս շարժէ թելերը թոյլ համրաշըշունչ,

Որ կարող լինիմ երգել անբաններուն կեանքն  
ու տարազ,

Բերելով 'ի հանդէո զանոնք կեանքիս բեմին  
վերայ.

Եւ անոնց կենդանի օրինակներով բազմատեսակ,  
Հայելոյ պէս ցոյց տալ մեզ մեր թերութեանանց  
տրգեղ պատկեր:

Արդ այս իմ ճիղմ երկունքը, յոգնավաստակ  
ճրգանցըս զին

Եւ ոռոգուած քրրտամբ ճակատիս բազմակնճիւ,  
Իմ հայրենի սրբբազորով սիրոյս նըշան անջնջելի,  
Կը կանգնեմ քո տըխուր շիրմիդ վերայ լուռ  
մահարձան,

Իսկ վըշտահար սըբտիս բոլոր ըղբացմունքեր  
Ղերմաբուբոք,

Բոլորելով թերթիկ՝ թերթիկ պըսակ համեստ  
սըգատեսիլ,

Տօղուած տկար աչերուս ցօղվն աղի սիրակայլակ,  
Կը ձօնեմ խաչիդ գագաթ նըւէր սիրոյս յաւեր-  
ժական:

Դեկտեմբեր 904.



Ա.

Պ Ս Ա Կ

ՆՈՒԻՐԵԱԼ ԿԵՆՍԿՑԻՆ ԻՄՈՅ ԱՆՆԱ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻՆԸ

Մի օր գարնան՝ ծաղկնոցին մէջ,  
Սովորական խընամքէն վերջ, ՝  
Գեղջկին կինը հիւսէր պըսակ  
Վարդերէ մոյգ կարմիր՝ ճերմակ:  
Այդ միջոցին ծառոց մէջէն,  
Եղնիկներու պէս արագ,  
Երկու կայտառ երեխաներ  
Հասան այդտեղ՝ առին կանգ:  
Երբ պըսակը տեսան սիրուն,  
— «Մայրիկ կ'ասեն-արդեօք որո՞ւն  
«Այդ պըսակը տաս պիտի».  
— «Անոր միայն-ասաց մայրը-նվ որ լինի արժանի»:  
«Ասէք տեսնեմ առուէն 'ի վեր,  
Ո՞վ ձեզանից՝ ի՞նչ տեսակ,  
«Կատարեց գործ, որ արժանոյն  
«Ըստանայ վարձ այդ պըսակ:  
«Ես՝ առտուէն 'ի վեր, ինչպէս եմ սովոր,  
«Փայտ և ջուր բերի՝ ծաղիկներ բոլոր  
«Ոռոգեցի ըստ կարգին»  
«Պատասխանեց մեծ որդին:  
«Իսկ ես՝—ասաց միւս երեխան,  
«Գետնին վերայ քարշ ու կոխան,  
«Տեսայ երկու ձագեր տըկար,

«Ընկած իւրեանց բոյնէն վայր:  
 «Հոն Մըւոտը մըտած դարան,  
 «Մինչ յարձակել թըռչնոց վերան  
 «Կը պատրասուէր, ես իսկոյն՝  
 «Փախ արւի այդ գարշելոյն,  
 «Իսկ ձագերը անտէր ու խեղճ,  
 «Իբրի իւրեանց բոյնինմէջ»:  
 «—Լաւ է—ասաց մայրը որդուն,  
 «Մեծ եղբայրդ ծառայել է իւր շահուն,  
 «Այլ դու՝ ինչպէս որ օտարին  
 «Պահպանել ես կեանքն ու բարին»  
 «Ուստի՝ պըսակն ես քեզ ՚ի վարձ  
 «Կուտամ գործիդ փոխադարձ»:  
 Ասաց՝ կապեց նորա ճակտին:  
 Իսկ որդին՝  
 «Մայրիկ—կ'ասէր— փնջեր վարդին  
 «Ծակծրկեցին ճակատս իսպառ»  
 Չարաշար»:—  
 Փըպտաց մայրը—ասաց— օրդի,  
 «Իրաւ է՝ որ նրման վարդի,  
 «Ամեն բարի գործ  
 «Ունի իւր խայթոց»:....  
 «Ուստի՝ ծանիր ուշով ուշի,  
 «Չընիր պըսակ առանց փուշի:—



Բ.

ՀԱՐՄՆԻՔԻՈՐ ԷՇ

Գեղջուկ Պեանն որդին կարգեց.  
 Եւ փառաւոր հարսնիք սարքեց,  
 Հըրաւիրեց գեղը բոլոր  
 Հարսնեւոր:—  
 Պար՝ խաղ ու տաղ, կէր՝ խուճ՝ առատ,  
 Գինին վազէր իբրև ջուր,  
 Խոհանոցէն խորտկին պարարտ,  
 Հոտը բուրէր ընդհանուր:  
 Կ'եռան կ'եփին կաթսաներ  
 Տիւ և գիշեր.  
 Խոհարարը քիրան ՚ի թաթախ,  
 Կը վազվըզէր լեզուն կախ,  
 Եւ անդադար ճըլար սաստիկ  
 Զերդ փըշուած տիկ,  
 —«Ծօ՛ մանչ՝ ուր ես, եկուր Կիկոս,  
 «Էջը բեր հոս»:  
 Էջն որ լըսեց ախոռէն՝  
 Այդ հըրաւէրն կարծեց իրեն,  
 Հեռ Կիկոսին գընաց հըլու,  
 Հարսնեց փառքին մասնակցելու.  
 Բայց փոխանակ հարսնեց փառքին,  
 Զինք լըծեցին ջըրակառքին.  
 Եւ մէկ մը ջուր, մէկ մը փայտ,  
 Զարկին խեղճը պատէպատ,  
 Քաղցած՝ ծարաւ՝ ակընկոր՝  
 Տարին ախոռ:

Երբ կեցել էր հոն խեղճ էշը,

Բոլորովին փրուած լէշը:

— «Եղբայր—ասաց ձին ծերունի,

«Կեր ու խուճըդ անուշ լինի,

«Պատմէ խընդրեմ, ի՞նչ տեսար,

«Ո՛րքան հարկինք՝ խաղ ու պար,

«Ե՛րանի քեզ, որ անկոչ

«Չըթողին մեր եղբայրքն անպոչ»:

— «Այո՛—ասաց էշը տըխուր,

«Երբ պակասի փայա կամ ջուր,

«Ան ատենը պատուաւոր

«էշը լինի հարսնետր...»:

Եւ իրաւ որ,

Այս էշուն պէս սրչափ մարդիկ

Կերթան հարսնիք:—



Գ.

### ՄԱՐԴԱՅԵԱԼ ԿԱՊԻԿ

Իշխան մի կար անառնասէր,

Որուն տունը կարծես Նոյեան տապանն էր,

Վճարելով շատ սուղ ու թանգ,

Գընեց մի լաւ Օրանգ-Ութանգ:

Առջի բերան

Կապկին վերան,

Կենդանիներ տանը բոլոր

Կը նայէին խոլոր-մոլոր:

Յետոյ քիչ քիչ ընտելացան

Եւ բակին մէջ ցիրուցան՝

Կայթեն՝ խաղան՝ երեկն ՚ի բուն,

Գործէ ազատ ժամերուն.

Եւ ժիր՝ ճարպիկ՝ կապկին վերան

Մատ խածնէին՝ ափ ՚ի բերան:

Օրը ըստ օրէ զարգանալով կապիկը,

Արժանացաւ հագնել կարմիր շապիկը,

Յետոյ բաճկոն, կապոյտ վարտիք,

Գըլխուն գըլխարկ խատուտիկ:

Տեսնաս կապկին տըձև՝ տըզեղ,

Ազամորդի դարձաւ շըքեղ:

Երբոր այդպէս հագւորեցաւ բարեզարդ,

Հըպարտացաւ ինք զինք կարծեց արդէն մարդ.

Թողուց իսկոյն ընկերները իւր բոլոր

Եւ մարդոց հետ ուզեց կազմել կապ մի նոր:

Բայց եղուկ՝ որ կարծիքն եղաւ տարապարտ,

՚ի գուր գացին ըզգեսան ու զարդ:

Զի արնեցիք սովորելով քիչ քիչ կապկին՝

Վարքին բարքին,

Չանձբանալով զինքն երեսէ թողուցին

Խեղճ կապիկը մընաց անտէր ռոտանձին:

Երբ՝ վերջապէս՝ զըզջալով խոր,

Ընկերներուն վերադարձաւ ակընկոր:

Հոն մի ծեր շուն— «ի գուր-ասաց-մեզ ուրացար,

«Եւ ուզեցիր մարդկանց լինել հաւատար.

«Բայց այ օրդի հագուստ ու զարդ

«Երբէք ըզքեզ չեն աներ մարդ.

«Մի մոռանար զի ունիս պոչ

Որ չի ծածկեր ըզգեստ մի ոչ:

Յաւալի է, որ կան մարդիկ  
Մարմնով անպոչ, հոգևով կապիկ:—



Գ.

ՔՈԹՈՏ ՄԵԾԱԽՕՍ

Օր մի կանուխ լուսածագին,  
Երկու եզներ քրքանաթոր,  
Քարշ կը տանեն ճիգը ճրգին,  
Ծանրակըչիս պինդ արօր:  
Կ'ալէկոծուի երկրին երես  
Ծովու նրման վեր ու վար,  
Ակոսները սև ալեաց պէս  
Ենեն իջնեն անդադար,  
Այդ ծանր ու զրժւար գործին ժամանակ,  
Գեղջկին քոթոտը անհոգ և զրոյանկ,  
Սայլի շքին տակ  
Կը լիգէր պընակ:  
Երբ պնակը մաքրեց բոլոր,  
Տարածուեցաւ և ըսկըսաւ քընել խոր:  
Այս էր գործը դատարկապորտ քոթոտին  
Իւր բարերար տիրոջ օգտին:  
Տիրեց երեկն, եզներ տոկուն,  
Յողնած՝ դադարած, դարձան տուն:  
Երբոր հասան բակին զիմաց  
Ձին ախոռէն խրխնջաց.  
«Եղբարք — կ'ասէր — ուստի կուգար,  
«Այսպիսի ուշ ժամանակ»:

«Մենք — ասաց քոթոտն — նեսուելով առաջ,  
«Քրքոտամբ լըւացինք արօրին չոր մած.

«Առտըւանց ց'իրիկուն

«Ո՛չ հանգիստ, ո՛չ քուն.

«Հերկեցինք դաշտեր,

«Բերինք տակն 'ի վեր:

«Ասածն էլ այն էր իսկոյն բակին խոր,

«Խոհարարն նետեց պընակ մի ոսկոր:

Քոթոտն երբոր տեսաւ, թըռաւ նէտի պէս

«Եւ ըսկըսաւ կըրծել անյադ ու չըտես:

Ձին ժըպտալով. բոթոտ ասաց,

Հիմայ գըտար արժանի վարձ:

Եզն է ըստեղծւած հերկելու յարմար,

Իսկ գու՝ կըրծելու հաշելու համար:



Ե.

ՍԱՐԴ ԵՒ ՃԱՆՃ

Սարդը պըպզած բունին խորը,

Հոգար միայն անկուշտ փորը.

Լուրջ և արթուն,

Հըսկէր անքուն:

Աչքը դուռը անհամբեր,

Իւր որսիկը կըսպասէր:

Նորա յոյսը 'չելաւ թերև,

Ձի ճանճին մէկն ակներև

Դատարկապորտ և յամառ,

Ձանձրացուչիչ բոլոր ամառ,


Եկաւ ընկաւ սարդին ոստան՝

Ուր տաղնապէր ընդունայն:  
Թըրթոացին իսկոյն թելեր փիւրաւոր,  
Գարանէն դուրս ցատկեց մամուկն ահաւոր  
Կայծակի պէս եկաւ զըրկեց ճանճիկը

Եւ թափելով վերջին ճիգը,  
Կը պատանդէր արագ արագ  
Իւր թելերով նուրբ և բարակ.  
«Հոգուս մեռնեմ— ճանճը կասէր,  
«Թո՛ղ արևուզ լինի ՚ի սէր,  
«Գըթն գույնիս և թո՛ղ ազատ,  
Ո՞վ վեհանձըն պայագատ:  
Իսկ սարդն անգուլթ՝ անողոք,  
Զուգէր լըսել ճանճին բողոք.

Կարելոյն չափ  
Կաշկանդէր կապ:

Այդ միջոցին մի ծեր բըզէզ  
Տեսնելով գայդ ողջակէզ.  
Կ'ասէր ազնիւ զըրացին,  
Թո՛ղ սը երթայ իւր գործին,  
Հոգուս համար բարէք մ'արն,  
Զի շատ մեղք կայ քո վերայ:  
«Բարիք» — կանչեց սարդը սըրտոս,  
«Գու խըրատըզ պահէ քեզ մօտ,  
«Չ'ես լըսած, որ բազմաց համար  
«Ճանճն է միջատ վընասակար.  
«Նա միշտ ազատ համարձակ  
«Ուստ՛ խըմէ՛ այլոց վաստակ:  
Ասաց՝ ծըծեց խեղճ միջատին  
Արիւնն իսպառ բազմաց օգտին:



Պարտէզի մ'էջ մշտադալար,  
Մի սըրբատաշ աւագան կար,  
Նորա վերկը վարսագեղ ոստեր  
Կապեն հովանի,  
Նորա բոլորը գոյնըզգոյն ծաղկներ  
Նագեն գեղանի:  
Բիւրեղի պէս ջինջ ջըրոյն մէջ թափանցիկ,  
Կայտուն ձրկներ գեղեցիկ,  
Զրկներուն այդ ուրախ խաղին ժամանակ,  
Ծաղկանց մէջէն մի օձ գազիր խորամանկ.  
Սողալով եկաւ աւզանին եզեր,  
Ուր դալարելով նա ձրկանց կասէր:  
«Ո՛ղջոյն ընդ ձեզ՝ ձրկանց աշխարհ,  
«Ի՞նչ բաղտաւոր աստղի տակ  
«Ծընեւ էք դուք, որ ձեզ համար,  
«Մըսխէն մարդիկ շատ ըստակ:  
«Մարմարիոն՝ բիւրեղ՝ ձեզ շըքեղ պալատ,  
«Եւ սընունդ առատ:  
«Հապա խընամք և սէր սըբան,  
«Ձեզ ցոյց կուտան որդիք մարդկան.  
«Իսկ մենք օձերս՝ ի՞նչով ձեզնից եմք պակաս.  
«Գեղեցկուլթիւն՝ ողորկ մարմին հեղանազ  
«Մորթ սահուն՝ ձրկուն՝  
«Կիտուած երփնագոյն.  
«Հապա խորին խելք միտք բարակ,

1001  
6582

«Զոր ցոյց տըւինք մենք գիտութեան ծառին տակ:

«Ատկէ 'ի զաա

Գիտեմք ազատ,

«Մըանել լողալ,

«Ելնել սողալ:

«Այդչափ յատուկ ձիրքերէն վերջ՝

«Չունեմք պատիւ մարդկանց մէջ,

«Ուր որ նորա տեսնեն մի օձ,

«Հոն տեղ կանեն զինք քարկօծ:

Այդ միջոցին

խօսքը բերանն մընաց օձին.

Զի պարտէզպանը անցնելով մօտից

Չըտեսաւ օձը ներքև իւր ոտից,

Կոխեց նորա

Պոչին վերայ:

Իսկոյն օձը դարձաւ կըրակ

Շարժէր սըլաքն արագ՝ արագ.

Պարտէզպանը այդ որ տեսաւ,

Հասոյց օձին հարուած մի լաւ:

Օձն հարուածէն շանթահար՝

Գըլորւեցաւ աւզանն 'ի վայր:

Հոն ծերունի ձուկ մի խոշոր,

Վըկայ գէպըին այդ բոլոր,

Կ'ասէր օձին «տեսա՞ր հիմայ,

«Մեր և քո մէջ շատ լեռներ կայ:

«Եթէ մէկ մը պոչիդ կոխէ՝

«Բերնէդ թոյնը դուրս կը բըղխէ»...

Մի՛ նախանձիր ուստի ձրկանց անվընաս,  
Քո սեպհական թոյնըդ է քեզ պատուհաս...



Է.

ԳԱՃԱՃ ԵՒ ՍԱՊԱՏՈՂՆ

Դու ուրիշները դատելէդ առաջ, )  
Քեզ լաւմը քըննէ՛ չափէ ձախ և աջ,

Յետոյ քո եղբօր

Եղի՛ր դատաւոր:

Գաճաճ մ'օր մի ելէր կերթար,

Անցւորներուն իրեն հաւսար,

Կը տեսնար:

Յանկարծ նորա դէմ յանդիման,

Մի սապատողն բըլրանման,

Ելէր կուգար ծանրաքայլ,

Որուն չըկար այլ և այլ...:

Դէմքը տըգեղ, գիթը անգեղ,

Քամակը կոր, սիրտը գերդ փոր,

Յըցւած ու կախ,

Մեր դաճաճին շարժեց ծիծաղ:

«Ո՛ւստի կուգաս նահապետ,

«Դու քամակիդ կապած համետ,

«Բեռնաւորւած ծանր սապատ,

«Կը զարնըւես պատ է պատ:

Սապատողն ասաց—«ազնիւ ամիրայ,

«Քո վսեմութեան ես խոնարհ ծառայ.

«Տեսայ ես քեզ խըղճացի,

«Որ չլինի թէ մարդ կամ ձի,  
 «Հոս ազմուկի ժամանակ  
 «Կոխկըխեն քեզ ոտից տակ.  
 «Ուստի արի՛ մըտի՛ր՝ սապտիս մէջ արագ,  
 Որ չըլինիս խայտառակ:



Ը.

ԳՈՐԾՈՒՆԵՍՅ ԿԱՏՈՒ

Ինքնահաւան մըռչոտ կատուն  
 Անգութ դահիճ մըլիներուն,  
 Օրին մէկը՝ յոգնած՝ դադրած և անքուն  
 Արշաւանքէն դարձաւ տուն:  
 Եկաւ կանգ առաւ մառանին դիմաց,  
 Ուր որ կատուներ խըմբովին կանգնած.  
 Թարթելով աչեր՝  
 Նային պատն 'ի վեր:  
 Հոն կախուած էր միս թարմ ու տաք,  
 Որ կը շարժէր պոչաւորացն ախորժակ,  
 Երբ գայն տեսաւ քաջ կատուն մեր,  
 Կաթկըթեցին բերնէն ջրեր,  
 — «Ի՞նչ կեցելէք այդպէս դըմլոշ  
 «Ականջներդ կախած լոշլոշ,  
 «Ե՞րբ կը կարծէք—կասէր—վերէն  
 «Կուգայ ձեր սոն միսն ինքն իրեն»,  
 Ասածն ալ այն էր՝ ոտից թափ տըլաւ  
 Զերդ խէժէ գընտակ դէպ 'ի վեր թռաւ:

Բայց եղուկ, որ նա չը հասաւ մըտին պարարտ,  
 Գըլորուեցաւ դատարկ ձեռք, տարապարտ  
 Վըրդովեցաւ աչքը մըթնեց,  
 Նորէն ցատկեց,  
 Դարձեալ 'ի գուր ընկաւ սաստիկ  
 Թընդաց իբրև պարապ տիկ:  
 Երբ տեսաւ նա, որ ճար չըկար,  
 Մըսին հասնելն էր անհրնար,  
 «Վայ ինձ, կասէր—ես անհաւատ,  
 «Մոռացել եմ որ է ուրբաթ,  
 Այն, երբ չեն հասնիր մըտին  
 Այս օր ուրբաթ է կ'ասին...:



Թ.

ԿԱՊԻԿ ԵՒ ՀԱՅԵԼԻ

Իշխան մ'ունէր խոշոր կապիկ  
 Ժիր և ճարպիկ  
 Օր մի գըտաւ սա դահլիճին դուռը բաց  
 Ըստուէրի պես մըտաւ կամաց:  
 Ուր շըբեղ՝ փարթամ կահ ու կարասիք  
 Զարդարեն բոլոր,  
 Թաւիշ՝ ծիրանի ոսկեթել նիտուած  
 Պըճնեն փառաւոր:  
 Հոն բարձրանար մի հայելի,  
 Ոսկեգօծիկ 'ի պատուանդան,  
 Անբիժ բիւբեղ ցոլայ փայլի

Զարդարելով անկիւնը տան:  
 Կապիկն երբոր անոր դիմաց՝  
 Իւր անճոռնի դէմքին տեսաւ անդրադարձ,  
 Զարհուրելով սոսկաց բոլոր՝  
 Ինք զինք կարծէր անաւոր:  
 Որքան նայէր լուրջ՝ ուշադիր,  
 Այնքան կարծես դէմքը զազիր  
     Կանէր նորա  
     Տակն 'ի վերայ:  
 Քանի գընաց բորբոքւեցաւ  
 Զըդիմացաւ վերջապէս  
 Վերուց ջրդոտ թաղն իւր ուժով  
 Խըփեց կատղած և կարծես,  
 Զինչ հայելին շանթահար,  
 Զարդ-բուրդ եղաւ շարաշար,  
 Հոն մի վարկեան՝ սիրտը տեղը գընաց կապկին,  
     Բայց քիչ վերջը եղկելին,  
     Վիրաւորւած հայելոյն  
     Մի կտորին մէջ խոշոր,  
     Դարձեալ տեսաւ սևագոյն,  
     Դէմքն առաւել անաւոր:  
 Զայն ալ ջարդեց կրտոր՝ կրտոր,  
     Բայց ափսոս որ  
 Որչափ ջարդէր և կտորէր,  
 Այնքան նորա տըգեղ պատկեր  
     Կըրկնապատկեր...  
 Զի կրտորուանք աստ անդ ցըւած  
 Ամեն կողմէն տային դէմքին անդրադարձ:  
 Խեղճն այն կէտին մանրը ջարդեց հայելին,

Որ անճոռնի տիպար դէմքին  
 Անհետացաւ բոլորովին:  
 Սիրտն է գահլիճ, խիղճն հայելի թափանցիկ  
 Եւ կտորիչ սև կապիկը՝ մենք—մարդիկ.



Ժ

ԿՈՅՐ ԵՒ ԿԱՂ

Ժամանակով Բաղդադի մէջ  
 Երկու մուրիկ կ'ապրէին խեղճ:  
 Սոքա իւրեանց հացը նըւազ՝  
 Մուրանային հազիւ հազ:  
 Մինն 'ի մօրէն կոյր էր ծընած,  
 Բայց մարմնով շատ քաջաուողջ.  
 Իսկ միւսը կաղ՝ մարմնով մեռած,  
 Միայն գըլխով թըւէր ողջ:  
 Օր մի կաղը ասաց կուրին՝ բարեկամ,  
 «Աստուած միտքս բան մը ձըգեց օգտակար,  
     «Բայց կը վախնամ  
 «Զըլինի թէ՛ կարծես՝ որ ես ինձ համար,  
 «Իմ անճնական օգտին 'ի սէր,  
 «Առաջարկել կուզեմ քեզ գործ ուժէդ վեր:  
     «Ահա ուշ դիր՝ դու կորովի  
     «Ունիս ոտքեր զօրաւոր,  
     «Իսկ ես աչեր իրաւի՛  
     «Հեռատես և լուսաւոր՝  
 «Բարձիր տա՛ր զիս ուսիդ վերայ  
 «Իբրև թեթև երեխայ.

Մեր երկուսէն կազմի ամբողջ՝  
 «Մի մարդ հրգօր և առողջ:  
 «Ես աչք, դու ոտք միատեղ  
 Մենք կը շըրջենք ամենհեղ:  
 «Ասաց և եղև,  
 «Թեթև գերդ կեղև,  
 Այն օրէն վերջ կոյրը կաղին  
 Տանէր՝ բերեր 'ի թաղին:  
 Այսպէս առանց այլոց ուժին,  
 Կամ օգնութեան ուրիշին,  
 Մեր մուրիկներն անբաժան  
 Շատ տարիներ ապրեցան:  
 Ահա ձեզի յատուկ պատկեր  
 Ընկերութեան զօրաւոր,  
 Որ կաղին ստք, կուրին աչեր  
 Կուտայ, կ'անէ բաղտաւոր:



**ԺԱ.**

**ՀՆԴԿԱՀԱԻ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ**

Հընդհանաւ օր մ'ի բակին,  
 Ճիշտ կէսօրուան սաստիկ տաքին,  
 Բացած պոչին ճախարակ  
 Կը հեշտանար և աչերէն ցայտեր կըրակ.  
 Թոս՝ թոս՝ կանէր մանուսան,  
 Ինք զինք կարծէր աննրման:  
 Նորա չորս զին սագ՝ բաղ՝ ճագար,  
 Հաւ՝ կատու՝ շուն խելաքար,

Ապշած նային ափ 'ի բերան  
 Հընդհանաւին պոչին վերան  
 «Կեցցէ կանչեն հընդհանաւը,  
 «Ձրկայ աշխարհ քեզնից լաւը.  
 «Դու պարծանք ես մեր բակին,  
 «Երկոտանի թռչնոց ազգին:  
 Այդ խնկերէն վեհն հնդհանաւ  
 Առագաստը բացած գերդ նաւ,  
 Սահէր արագ մանուսան՝  
 Ինք զինք կարծէր աննրման:  
 Բայց եղկելոյն՝ սաստիկ խանդին ժամանակ,  
 Բաղտը արաւ զինքը ծաղըր և ծանակ:  
 Ձի դըրացւոյն տանեաց վերան  
 Յանկարծ ելաւ յերևան,  
 Մի հեզանագ՝ հըրաշագեղ սիրամարդ,  
 Թռչնոց բոլոր ճըշմարիտ փառք:  
 Երբ սաւառնեց նա իւր պոչը գունաւոր,  
 Փայլատակեց կարծես ճաճանչ լուսաւոր:  
 Շողար 'ի ծածան  
 Իբրև ծիածան:  
 Կենդանիք՝ թռչներ՝ երբ զինքը տեսան  
 Ապշած հիացան...  
 Բոլորն ալ իսկոյն՝ նորա մօտ գացին  
 Խեղճ հընդհանաւը մընաց առանձին:  
 Թըլցան թևերն, ըզգաց ինք զինք նա չընչին,  
 Կործանեցաւ և ճախարակ իւր պոչին.  
 Ամօթհար չէր գըտնար տեղ,  
 Բոլոր բակը թըւէր նեղ:  
 Հոն մի աքլոր ծերունի՝  
 Ասաց ձայնով տէրունի:

«Մի նախանձիբ՝ այ որդի:  
 «Քեզնից բարձրը նախանձորդի,  
 Ան ստէնը հընդկահաւը ունի յարգ  
 «Երբ չը լինի սիրամարգ:



ԺԲ

ՄՍՍԳՈՐԾԻ ՈՐԴԻՆ

Մըսագործին մէկը հարուստ,  
 Շատ տարիներ ճարտար և չուստ,  
 Աշխատելով օր է օր,  
 Սարքեց վիճակ փառաւոր:  
 Եւ ապրեցաւ աղքատ բոշայ,  
 Բայց թաղուեցաւ հարուստ փաշայ:  
 Մեծ կայք՝ հող՝ փող՝ թողուց որդուն,  
 Եւ տասանորդ մի շրքեղ տուն,  
 Երբ ճարպիկ որդին յաջորդեց հօրը,  
 Նորա դանակը կոտրեց նոյն օրը,  
 Եղոտ հաշուեգիրքն տրրաւ անութը,  
 Փակեց խանութը...  
 Բացաւ նոր գործեր և մեծ առևտուր  
 Ամեն մեկ կողմէն ապրանքն իբրև շուր,  
 Հեղեղ կը վազէր  
 Ցորեկ և գիշեր...  
 Տեսնես իսկոյն ամեն մի ծուխ  
 Զինքն ընտրեցին քաղաքագլուխ.  
 Պաշտօններով պատուաւոր  
 Յարգէին զինքն, օր է օր:

Ամեն կողմէն գովեստ և խունկ,  
 Ամեն մի ոք խոնարհէր ծունկ:  
 Մի օր շրքեղ հացկերոյթի ժամանակ,  
 Մինչ մեր աղան լայն և արձակ  
 Մեծ՝ մեծ կը շարդէր,  
 Աչքն իսկ չէր թարթէր:  
 Եւ հիւրերն ամեն  
 Կասէին ամէն:  
 «Գիտէք ասաց վերջապէս  
 «Ի՞նչ վեր ցեղէ կիջնամ ես,  
 «Իմ նախնիքըս էին ազատ պայազատ,  
 «Այժմ չըկայ ուրիշ սերունդ ինձնից զատ:  
 «Վառած կերոն մ'էր մեր տոհմին նըշան,  
 «Զորն որ հաստատեց նահանգիս փաշան»:  
 Հոն մի ծերուկ իշխան ասաց սըխալես՝ ո՛չ,  
 «Այն կերոն չէր. այլ վեր ցըցւած կովու պոչ...»



ԺԳ

ԳՈՐԾՈՒՆԵՆԱՅ ԷՇԵՐ

Օրին մէկը քանի մ'էշեր դաշտին մէջ  
 Կարածէին անձրևէն վերջ:  
 Անդ նոցամէ հեռի ոչ շատ  
 Բանջարանոց կար ցանկապատ:  
 Ուր որ իշոց տէրը բոլոր  
 Ընտանիքով ամեն օր,  
 Հոգար՝ խընամէր՝ բանջարներ պիտան,

Մաքրէր ու ջնջէր խոտերը խոտան:  
 Երբոր հասաւ ժամ կէս օրուան,  
 Իշոց մինը մեծ ճարտասան,  
 Տեսնելով՝ որ տէրը գնաց,  
 Յանկին դուռը թողլով բաց.  
 «Տըղաք կանչեց մինչև երբ՝

Անասնակերպ,

«Մենք մեր տիրոջ գործին օրեր,  
 «Շըրջեմք պիտի անտարբեր:  
 Արիք՝ երթանք՝ օգնենք իրեն,  
 «Եւ չըլինեմք այն էշերէն,  
 «Որոնք միայն՝ ներքև բեռան  
 Կըզըռան:

«Թո՛ղ որ գիտնան, մաքրել բանջար,  
 Մմենք ալ ունիմք փոքր ինչ հանճար:

«Տեսնաս իսկոյն ձախ և աջ,

Ձըզըռացին քաջ է քաջ:

Այդպիսի տաք խօսքերէն վերջ

Գացին մըտան ցանկին մէջ:

Եւ ըսկըսան զըռալ՝ քալել վեր ու վար,

Կը կարծէին՝ թէ գործ կ'անեն օգտակար:

Եթէ ջնջէին մի անպէտ արօտ,

Տասն ալ լաւերէն կոխէին ընդօտ,

Լաւ՝ որ տէրը վըրայ հասաւ,

Երբոր տեսաւ.

Իւր տիրասէր հըլու իշոց

Ձեռացը գործ:

«Հասիք՝—կանչեց հանեց մեծ ճիչ,

«Հասան բերին՝ բահ՝ բիր՝ բըրիչ,

Եւ չարաչար տալով հարւած,

Վըռնտեցին էշերն ՚ի բաց:

Ահա այսպէս հասարակաց գործոց մէջ,

Տէրը փըրկէ մեզ մինչև վերջ,

Այն բարեսիրտ և եռանդուն էշերէն,

Որ չեն գիտեր, խոտը բաժնել բանջարէն:



Ժ. Գ.

Ս Տ Ա Խ Օ Ս

Ժամանակով հըռչակաւոր,

Կար ստախօս մի ճարտար.

Ձորն ՚ի ծընէ՝ թաղը բոլոր

Հինգ մատին պէս կը ճանչնար:

Կարծես՝ թ'էր նա սուտի դարան

Կամ գործարան:

Ձի չըկար օր, որ խելք է վեր,

Նա սուտ մի նոր չըստեղծեր:

Լըսողները լաւ գիտէին, որ շատ հեղ,

Սուտը խըմէր ջուրի տեղ...

Օր մի իրաւ՝ սորա տունը ընկաւ կըրակ,

Որն տարածուէր արագ՝ արագ.

Սըտախօսը խելքը թըռուց,

Եւ վազելով թաղին մէջ,

Ճըւար՝ կանչէր՝ հասիք եղբայրք,

Տունս կ'այլի, տըղաքս խեղճ,

Տըկտը ու լերկ

Մօրէ մերկ.

Գեանին վերայ քարը ու կոխան

Զոհ եղան:

Դրբացիքն որ հըրդէհի ձայն լսեցին,  
 Արտորալով դուրս վազեցին,  
 Իսկ երբ տեսան սրտախօսին,  
 Յետ դարձան և սուտ է ասին,  
 Որով խեղճին տունը բոլոր  
 Մոխիր դարձաւ հիմունքն 'ի խոր:



### ԺԵ

#### ԾԱՌ ԵՒ ԱԳՈՒՄԻ

Լայն և արձակ դաշտերուն խոր  
 Բարձրացրել էր մի ծառ խոշոր,  
 Որուն՝ ոստեր վարսագեղ  
 Տարածուէին չորս դին շրջեղ:  
 Կ'ապրէր քաշուած՝ առանձին,  
 Չերդ ճըգնաւոր միանձին.  
 Կաճէր՝ մեծնար՝ օր է օր  
 Կանանչելով նոր է նոր:

Տեսնաս մի օր,

Կրուկըռալէն՝ սևակընկուղ՝  
 Ազուա մ'եկաւ՝ առտու կանուխ,  
 Եւ թառելով ծառին վերև,  
 Չորս դին տեսաւ միայն տերև,  
 «Ծան՝ ծան՝—ասաց—խրդճամ ըզքեղ,  
 «Քեզ նման ծառ տեսած չեմ ես,  
 «Ո՛չ մի պրտուղ գեղեցիկ,  
 «Ո՛չ քողցրահոտ մի ծաղիկ,

«Առաւէ ց'ըրիկուն դու կերերաս քո օգտին,  
 «Աշխարհք մէկ դին, դու միւս դին»:  
 Դեռ ազուալին կըծու խօսքեր  
 Վերջացած չէր.

Ճամբորդ մ'եկաւ ծեր կըթոտ,  
 Յոգնած նրստաւ ծառին մօտ.  
 Արձակելով հագագ մի խոր,  
 Սըրբեց ճակատն իւր քրրտնաթոր,  
 «Մեռնիմ զօրքիդ—կասէր—Ա՛ստուած,  
 «Որ խոնարհիս առ մեզ 'ի ցած,  
 «Այս լայնածիր դաշտերուս խոր,  
 «Բուսուցելես ծառ մի խոշոր,  
 «Որուն զով՝ զով՝ ըսուերին տակ,  
 «Ճամբորդն հանգչի քեզ տալով փառք  
 Ձերմ մաղթանքներ այլորին  
 Շատ դուր եկաւ ծառի սրտին,  
 «Ազուա—ասաց—կըծու խօսքիդ 'ի փոխան՝  
 «Ա՛ռ ծերուկէն պատասխան,  
 «Տէս՝ որ ծառն իսկ ամուրի  
 »Կարող է տալ պրտուղ բարի  
 Ամեն տարի...:

Իրաւ է որ ամեն մի ծառ,  
 Բերէ պրտուղ իրեն յարմար:



ԺԶ.

ՕՉ՝ ԳՈՐՏ ԵՒ ԱՅԾԵՐ

Կարկաջելով շինջ կապուտակ  
 Յորգահոսան վազէր գետակ,  
 Նորա ծաղկաւէտ եգերքին վերև  
 Ուր կը շողշողէր ոսկեհեր արև,  
 Տարածուել էր մի օձ խոշոր  
 Հագւած-սրգւած երվնագոյն շոր:  
 Կը հեշտանար օրւան տաքին  
 Օձատեսակ գործոցը գին:

Ջուր սառն և առատ,  
 Խոր և անարատ,  
 Խիս՝ խոնաւ՝ դալար:  
 Սընունդ և պաշար:

Ամեն բարիք բաղին առանձին  
 Պարգևել էր կարծես օձին:  
 Նորա հանգիստ՝ մեղկ հեշտութեան ժամանակ,  
 Տեսնես յանկարծ՝ փրբթաւ աղմուկ՝ աղաղակ,  
 Հասաւ մի հօբան այծերու կայտառ,  
 Գահավեժեցաւ իսկոյն լեռն ՚ի վայր.  
 Ծարւած՝ պապկած՝ կայտառուն այծեր,  
 Առոյգ և գեր.

Կոխկրտեցին դալարն ՚ի բուն առաթուր,  
 Պըղտորեցին գետակին ջուր.  
 Եւ լափէին Գետէոնի գօրքին պէս

Արևակէզ:  
 Օձն որ տեսաւ  
 Կըրակ դարձաւ.

«Այ անիծւած—կասէր—այծեր,  
 «Դուք դըժոխքի ծախիչ կայծեր,  
 «Նանգարեցիք դալար՝ դալար,  
 «Ծաղիկ՝ արօտ և դալար.  
 «Պղտորեցիք գետակին ջուր,  
 «Վըղովեցիք զիս ՚ի գուր:  
 «Անպիտաններ՝ տեսէք՝ օձերն ալ կը լողան,  
 «Գիրգ և փափուկ ծաղկանց վերայ կը սողան.  
 «Դարձեալ խաղաղ ջըրոյն երես,  
 «Փայլի պայծառ հայելոյ պէս.  
 «Դարձեալ ծաղիկ և արօտ  
 «Պահեն գոյն՝ հոտ և նարօտ»:  
 Այդ միջոցին հոն նորա մօտ,  
 Ուռած՝ արկուած՝ մի խոշոր գորտ:  
 «Ներողութիւն—ասաց— սիլ վեհ օձ պարոն,  
 «Այծերն ՚ի գուր դատես անխիղճ՝ անկրօն.  
 «Այս ասան ինձ՝ սիլ դատաւոր, անաչառ,  
 «Ի՞նչ է արդեօք բուն պատճառ,  
 «Որ միևնոյն ջուրէն պըղտոր կամ անարատ,  
 «Այծն որ խմէ՝ կը լինի կաթ,  
 «Օձն որ խրմէ թոյն դառնայ ժանտ:  
 Օձը ասաց—»այ դըժուծ գորտ,  
 Այդ լայն խընդրոյն, նեղ է քո մօրթ.  
 Ծանիր՝ մենք մեր թոյնին համար,  
 Երբէք գորտին չենք տար համար:



ԺԷ

ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Գիշերուան լուս՝ խաղաղ ժամուն  
 Կը պատրասուէր մըտնել քուն,  
 Մի երեխայ յոգնած՝ դադրած՝  
 Ըզբօսանքէ օրն՝ ՚ի բուն:  
 Նորա մօտը մայրն՝ ՚ի գորով,  
 Կընքեց՝ ցողեց՝ օրհնած ջըրով

Որդուն ճակատ  
 Անարատ,

Երբոր ճըրագն առաւ՝ ուզեց հեռանալ  
 Տեսնես որդին ըսկըսաւ լալ:  
 «Մայրիկ—կ'ասէր—լոյսն ինձ մօտ թո՛ղ,  
 «Զի ես մըթուն քընել բընաւ չեմ կարող:  
 Մայրն ասաց—»որդի՛ միթէ՛ չես զիտեր,  
 «Ուր որ կայ Աստուած՝ հոն չըկայ գիշեր»:  
 Ժըպտաց տըղան—«մայրիկ—ասաց—եթէ այդպէս,  
 Ճըրագն ինձ թո՛ղ, Աստուածն սո քեզ:  
 'Ըզգոյշ եղիք մայրեր լինել հոգեբան,  
 Յետոյ դըժար կըլնի ձեզ տալ պատասխան:



ԺԸ

ՈՒՂՏ ԵՒ ՃԱՆՃ

Անցան հետ ընդ հետ ամառն և աշուն  
 Վայ՝ դատարկապարտ ճանճերուն կաշուն.

Կէս մը՝ թըմըեցան, կէս մ'ալ ՚ի սատակ  
 Կորան՝ զընացին՝ անյուշ—յիշատակ:  
 Սոցա մէջէն ճանճին մինը  
 Չուստ և ճարտար ինքնասէր,  
 Լաւ ճանաճող կեանքին գինը  
 Մըտածեց տիւ և գիշեր,  
 Նա վերջապէս՝ քաջապէս,  
 Նըպատակին հասաւ կարծես:  
 Զի օգնութեամբ կոյր բաղտին,  
 Հանգիպեցաւ խոշոր ուղտին.

Եւ ըսկըսաւ նորա վերայ փընդուել մի գոց  
 Զըմերանոց:

Շատ քալելէն փընտուելէն վերջ  
 Մըտաւ նորա ախանջին մէջ:  
 Հոն նա տեսաւ իւր չորս գին,  
 Ամեն բարիք յաջող բաղտին:

Տաքուկ տեղ, կակուղ դոշակ.  
 Անգործ կեանք, առատ թոշակ.  
 Ընկըղմեցաւ հանգիստ կեանքին խորերը,  
 Անցուց ճըմրան ցուրտ օրերը:

Երբոր հասաւ լոյս գարուն,  
 Ճանճը թողուց իւր խուցը մութ՝ բայց սիրուն.  
 Եկաւ ցոյց տալ բարի ուղտին  
 Զերմ ըզգացմունք ազնիւ սըրտին.  
 «Ո՛վ ճանճասէր—ասաց—իշխան,  
 «Անչափ բարւոյգ բո փոխան,  
 «Ընդունէ իմ ջերմ սիրոյս վառ  
 «Անկեղծ բուրվառ.

«Զի սնուցիր դու վեց ամիս  
 «Ականջիդ մէջ զաւկիդ սէս զիս»:

«Ականջիս մէջ, մի՛թէ—ասաց  
 Ուղտը փոքր ինչ զարմացած,  
 «Ոչ մըտնելդ ըզգացի ես  
 «Ոչ ելնելդդ, զի միշտ քեզ պէս  
 «Փըցուն ճանճեր հարիւրաւոր  
 «Մըտնեն՝ ելնեն՝ ամեն օր:  
 Կան և մարդիկ ճանճին յարմար  
 Աշխարհն է ուղտ նոցա համար:



ԺԹ

ԳԵՂՉՈՒԿ՝ ՁԻ ԵՒ ԵՉ

Գեղջուկն 'ի սայլին թըմրած մըրափէր,  
 Ոտ առ ոտ դանդաղ գնային եզներ:  
 Տեննաս յանկարծ՝ դէմ-յանդիման,  
 Կառք մ՝ երևեցաւ սըրընթաց,  
 Կը շառաչէր ամպի նման,  
 Երկու խըրոխտ ձի լըծած:  
 Եզանց մէկուն սըրտին խոր,  
 Նախանձուն օձ թունաւոր  
 Գըրդեց նորա,  
 Խօսել այսպէս ձիան վերայ:  
 «Տէս-կասէր-տէս,  
 «Մարդիկ ինչ պէս  
 «Սիրով վարուին ձիերուն հետ ամեն հեղ,  
 «Լըծեն կառքի թեթև շըքեղ.  
 «Ի՞նչ զարդարանք ոսկէզօծ,

«Ճարմանդ՝ բոժոժ՝ վառին բոց.  
 «Եթէ զիս այլ զարդարէին ձիուն պէս  
 «Ո՞վ» կարող էր անուանել եզ...:  
 «Վըզիս վերայ ծանր լուծ,  
 «Կերածըս յարդ՝ խոտ գըծուծ,  
 «Ուստի ինչպէս կարող եմ ես  
 «Ցոյց տալ ձիրքերս իմ պէս՝ պէս,  
 Նորա գանգատը լըսեց գեղացին  
 Եւ օր մը եզը լըծեց նա ընդ ձին.  
 Իբրև նոր փեսայ պըճնեց փառաւոր,  
 Դարձաւ ձի խըրոխտ եզը մեծափոր:  
 Ծիծաղեցաւ զեզացին,  
 Երբ որ տեսաւ եզնաձին  
 Զեծաւ կառքը մշտրակն 'ի կուշտ կը խփէր,  
 Առաջ դիմեց ձին անվեհեր,  
 Շըւարեցաւ եզը դանդաղ,  
 Նըկըրտելով յաջ ու ձախ,  
 Ամօթահար կուզէր ձիուն  
 Հաւասարել քայլերուն,  
 Բայց ափսոս, որ խայտառակ  
 Գըլորեցաւ կառքին տակ:  
 Եզին նըման կան և մարդիկ մեծափոր,  
 Որոնք բաղդը միշտ համարեն յանցաւոր.  
 Լաւ կը լինի՝ իւրեանց լուծը տանեն հեզիկ  
 Այդ իրենց կեանք երջանիկ:



Ի.

Կ Ա. Լ

Մի օր առտու կալին վերայ,  
 ժիր մըշակներ՝ ժըրաջան,  
 Ոսկէփնջիկ շատ մ'որայ  
 Հասկերով լիք ի ծածան,  
 Բերին դեզ՝ դեզ՝ խառնափնտոր  
 Խիտ փրոնցին կալը բոլոր.  
 Պնդազուլս թողին ձիեր  
 Առոյգ ու գեր,  
 Խեղճ որաներն ոսկեղօծ  
 Զարդ բուրդ արին արեկոծ:  
 Այդ միջոցին հողատերի փոքրիկ որդին  
 Դեռ ոչ ծանօթ գեղի գործին,  
 «Ի՞նչու-կասէր-ձիեր մարդիկ  
 «Այդ որաներ գեղեցիկ.  
 «Կը կոխկոխեն կարծես չոր խոտ  
 «Ոտքերուն տակ աղտոտ՝ կեղտոտ,  
 Այդ միջոցին ծառան ծերուկ  
 «Համբերութիւն ասաց տէրուկ,  
 «Մինչ երեկոյ կեցիր և տէս,  
 «Քո կարծիքը վերջը կ'ասես.  
 Զով երեկոն հասաւ շուտով  
 Քաղցր և ուժով քամիներով,  
 Բաժնեց ցորէն դեղձան յարդէն,  
 Որնոր արդէն  
 Զևացել էր գուտ և մաքուր  
 Ոսկի բըլուր:

Ճանչցաւ տըղան սխալն իրեն  
 Որ չը ծեծւած չընիր ցորէն:




ԻՍ.

ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Օր մի գայլը աղուէսին  
 «Արի-ասած-ընկեր լինեմք միասին  
 «Քո ձեռքովըդ ես կուտեմ հաւ,  
 «Ինչ զառան միս իմ պատճառաւ:  
 Ասին զարկին ձեռք ձեռքի,  
 Ըստ անասնոց օրէնքի:  
 Ով ինչ որսար այդ օրէն վերջ  
 Հաւասար մաս բաժանէին իւրեանց մէջ:  
 Օր մ' աղուէսը՝ մինչ անտառէն դուրս կուգար,  
 Տեսաւ մի ուղտ, որնոր ծոյլ-ծոյլ կ'որոճար.  
 Սաստիկ վախցաւ առջի բերան,  
 Երբ նայեցաւ ուղտին վերան.  
 Շունչը բըռնած անցաւ մօտէն  
 Հեռ կը նայէր ատէն-ատէն:  
 Տեսնես յանկարծ աղուէսին խեղճ՝  
 Թաղը մըտաւ օղակի մէջ,  
 Որչափ շարժէր նա՝ ի տագնապ:  
 Օղակն այնչափ ձիգ կապուէր կապ:  
 Բայց հեռատես աղուէսն ինք զինք չի կորուց,  
 Երբոր կապուած թաղը վերուց  
 Քըննեց իսկոյն հասկացաւ,  
 Որ օղակը չէր մի թակարդ կամ մի դաւ:

Այլ սա ծայրնէր ուղտի վրդին  
 Կապուած երկար չըւանին:  
 Ան ասէնը առօք՝ փառօք՝ համարձակ  
 Քարշ կը տանէր ապուշ ուղտը գերդ մի ձագ:  
 Գայն աղուեսին ելաւ առաջ,  
 Եւ կը կանչեր՝ «էյ Դաւիթ քաջ,  
 «Ո՛ւստի գըտար դու այդ ապուշ Գողիաթը:  
 Աղուէսն-ասած՝ «վրկայ քեզի իմ թաղը,  
 «Հաւու նըման ես բըռնեցի զինք գերի,  
 «Եւ ահա հոս ոտքըդ բերի:  
 «Տեսել էիր ինձմէ առաջ,  
 «Դու ինձ նման աղուես մ՝ ալ քաջ:  
 Գայլը ասաց  
 «Վրկայ Ասուած.  
 «Երբ հանդիպի ուղտիդ նըման յիմար որս,  
 Իմ մամըս ալ կըլինի հերոս:



### ԻՒ

#### ԿԱՂԱՄԱՆ ԵՒ ԱԳՈՒԱԻ

Կաղամախը բարձրաբերձ  
 Վեհ ճակատով ամպերուն մերձ,  
 Սօսափելով նագէր հըպարտ,  
 Վիճակէն գոհ և զըւարդ:  
 «Քեզ հազար փառք—կասէր—Ա՛սուած,  
 «Որ չի ծընայ ես փոքր ու ցած,  
 «Այդ խեղձ՝ նըլաստ՝ ծառոց նըման,  
 «Որ ոտքիս տակ բարշ կուգան:

«Եթէ սոքա չի խոնէին արմիս մօտ,  
 «Իմ արմատներս ոտ առ ոտ,  
 «Տարածւէին չորս դիս բոլոր,  
 «Իսկ գագաթըս օր է օր  
 «Կեղնէր երկինք արագ՝ արագ,  
 «Իբրև մի նոր Բաբելոնի աշտարակ:  
 «Կեցիր—ասաց—ազուաւ մի ծեր,  
 «Որչափ ջանաս բարձրանալ վեր,  
 Գիտցած եղիր,  
 Որ երկընքին չես հասնիր:  
 «Միւս ծառերը, թէպէտ ցած են և նըլաստ,  
 «Բարձր է նոցա դործին իմաստ,  
 «Տէս թէ՛ որչափ պըտուղ բարի  
 «Կուտան նոքա ամեն տարի,  
 «Իսկ դու որչափ բարձրը լինես և ազատ,  
 «Բան մը չես տար տերեւէն գատ»:   
 «Մինչ ազուաւը գերդ դատաւոր անաչառ,  
 «Կաղամախին գըթին կուտար չարաչար.  
 Տեսնես երկու փայտահար,  
 Ձեռքերը լայն սուր տապար.  
 Դրբին ծառին մի ձախ՝ մի յաջ  
 Հարւածներ քաջ:

Որով հըսկայ ծառն անսասան  
 Ցած ծառերուն տալով հազար երանի  
 Տապալեցաւ յերկիր կործան  
 Վառարանի եղաւ միայն արժանի:  
 Բարձրը ծառեր կաղամախին դըրացին,  
 Մի մոռանաք՝ ժամանակին սուր կացին:



ԻԳ

Յ Ո Պ Ո Պ

Յոպոպուհին՝ երբօր արդէն  
 Կը պատրաստէր մայր լինել,  
 Նա կը ցանկար սըրտին խորէն,  
 Սիրել՝ սիրուել թուխս նըստել:

Բայց ինչպէս դեռ  
 Բոյն շինելը չէր գիտէր,  
 Ըսկըսաւ ժիր՝ փնտուել անդ—աստ  
 Մի բոյն պատրաստ:

Գըտաւ մինը վերջապէս՝  
 Նըպատակին հասաւ կարծես:  
 Թըխսեց նա հոն՝ մի քանի օր,  
 Բայց տեսաւ՝ որ

Քանի կերթար տարածուէր հոտ  
 Խիստ գարշահոտ:

Թողուց զընաց՝ բացէ ՚ի բաց՝  
 Կը գանգատուէր դըրացեաց,  
 Որ այդ տեղուոյն թռչներ կեզտոտ  
 Եւ միմեանցմէ գարշահոտ.

Պըղծելէն նոր,  
 Բոյնը բոլոր:

Այդ դէպքէն վերջ, փընտուեց գըտաւ  
 Մի ուրիշ բոյն առաւել լաւ,  
 Հոն ալ թըխսեց նա մի շաբաթ,  
 Եւ ըսկսաւ դարձեալ գանգատ,  
 Որ այդ բոյնն ալ կէղտ է բոլոր:

Չէ կարելի թըխսել անգորր:  
 Այսպէս յոպոպն հինգ-տասը բոյն  
 Փոխանակեց ամիսն ՚ի բուն.

Բոլորէն ալ մընաց դժգոհ՝ յուսահատ,  
 «Չըկայ՝—կասէր—յոպոպից զատ,  
 «Ուրիշ թըռչուն կեղտէ ազատ:  
 «Ինձ կերևի, ամեն մի ծառ՝ ձոր ու սար  
 «Կեղտուելէն հաւասար:  
 «Պէտք է թողուլ երթալ հեռի»:  
 «Երթան բարի...»

Ադռաւ մ՝ ասաց հեզնօրէն  
 Հոն թաւաստե ծառին խորէն  
 Միայն գիտցիր, որ դու ՚ի դուր,  
 Այլոց վերայ կը քըսես մուր,  
 Լաւ կը լինի, որ բունոյ տեղ,  
 Բընութիւնըդ փոխես արգեղ:



ԻԳ

ԹՌՉՆՈՅ ՊԱՏԵՐԱՉՄԸ

Օր մ՝ անտառի թռչներուն մէջ  
 Ծագեցաւ մի սաստիկ վէճ.  
 Բորբօրեցան՝ գարձան կըրակ,  
 Բաժանեցան՝ երկու բանակ,  
 Եւ սրելով կըտուց՝ մաքիլ և ճիրան  
 Յարձակեցան միմեանց վերան:  
 Մինչ երեկոյ տիրեց մարտը,

Արիւնահեղ սաստիկ ջարդը,  
 Զօրավարներն իսկոյն տըւին խիստ պատուէր  
 Որ երկու օր՝ երկու գիշեր  
 Դիակներուն թաղման համար  
 Լինի ընդհանուր զինադադար:  
 Կողմերից մինն, որ մեծ կորուստ ունեցաւ,  
 Խորհուրդ կազմեց 'ի սուգ 'ի ցաւ,  
 Վըճուեց զըրկել սուրհանդակ,  
 Խընդրել օգն և օժանդակ,  
 Այն թուշներէն դաշնակից  
 Որոնք էին միշտ նոցա մերձ— սըրտակից:  
 Շատ չափեցին՝ չափչըփեցին  
 Եւ այդ գործին  
 Գըտան յարմար և ընդունակ  
 Լոկ աղաւնին իբրև անվախ սուրհանդակ:  
 Բայց աղաւնին եկաւ առաջ,  
 Ասաց— »ուշ դիք՝ իշխաններ քաջ,  
 «Յն ատէնը ես լինէի օգտակար,  
 «Երբ գիշերին աչերս տեսնար:  
 «Ուստի ափսոս, որ ինձ համար,  
 «Է անհրնար.  
 «Մէկ օրուան մէջ՝ երկու օրուան ճանապարհ:  
 Աղաւնոյն պարզ խօսքեր բոլոր,  
 Ժողովն լրսեց լրուութեամբ խոր.  
 Երբ շըւարած մըտածէին յուսահատ.  
 Զըղչիկ մ' ելաւ ժողովոյն մէջ և ազատ  
 Կանչեց քաջէր, մի վըհատիք՝ անհ ելք,  
 «Հայրենիքի սիրուն չըկայ մի արգելք.  
 «Թող աղաւնին ցորեկն լինի ինձ ուղղորդ,  
 «Ես գիշերին նորա կըլնիմ առաջնորդ:

Ասաց այսպէս աղաւնոյն հետ  
 Թըռան՝ կորան՝ իբրև նետ:  
 Երկ' օրէն վերջ հասան թուշներ դաշնակից՝  
 Եւ կանգնեցան թըշնամոյն դէմ կից առ կից,  
 Փոթորկի պէս զարկին բանակ առ բանակ,  
 Տարին շըքեղ յաղթանակ:  
 Այն՝ այն ազգն է զօրաւոր,  
 Որն որ ունի մասնաւոր  
 Աչեր, տեսնող գիշերին կէս  
 Պարզ և որոշ ցորեկւան պէս:



Ի Ե

ՈՒՂՏ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Օրին մէկը՝ ըստորոտով անտառին,  
 Ընդ շուք ծառին,  
 Ամբարտաւան ուղտը անհոգ կարածէր:  
 Նորա մօտով աղուէս մի ծեր՝  
 Երկար ու հաստ՝ բըրթոտ պոչը թաւամազ,  
 Քարշ կը տանէր՝ կարծես հետուստ հազիւ-հազ:  
 Զայդ որ տեսաւ փըրթաւ ուղտին ծիծաղը՝  
 «Երբէք—ասաց—մեր թաղը,  
 «Վըկայ Աստուած  
 «Այդպիսի պոչ չեմ տեսած:  
 Յետոյ դարձաւ կըծու՝ կըծու  
 Նա աղուէսին—ասաց—» բարև տիրացու,  
 «Ծօ՛ դա քո պոչն է սեպհական,  
 «Թէ սորա հետ ընտանեացդ պոչերն ալ կան:

«Ներէ՛—ասաց աղուէսն ուղտին—ամիրս,  
 «Հոգիդ սիրես մի՛ ծիծաղիր իմ վերայ.  
 «Այո՛ բազրը ոմանց կուտայ առատ՝ առատ՝  
 «Իսկ ոմանց քիչ՝ մինչև անգամ և պոչատ  
 «Թողու շատ հեղ  
 «Տըկտը՛ տըգեղ:  
 Այո՛ կըզգամ և գիտեմ քաջ,  
 Որ իմ պոչս քեզ է պատշաճ:  
 Մի՛ մոռանար պոչիդ չափ՝  
 Թոյլ մի՛ թողուր լեզուիդ կապ:



ԻԶ.

ԹՐԹՈՒՐՆԵՐ ԵՒ ՄԵՂՈՒՆԵՐ

Խընձորէնին գարնան շրքեղ  
 Հագնւորեցաւ հարս վարսագեղ.  
 Նա խօստանար բերք առատ  
 Կարմիր խընձոր անարատ:  
 Բայց կոկոնին մէջ թրթրին ձու,  
 Կ'աճէր՝ մեծնար մահացու:  
 Քիչ ատենէն գարշ ու գազիր որդերը,  
 Իբր իսկական ծառին տէրը,  
 Սողան՝ վրխտան՝ անգաղար,  
 Կըրծէն՝ գործեն՝ իւրեանց անկուշտ փորին համար:  
 Փոքր ինչ հեռի՛ ծառերուն տակ  
 Կը բարձրանար մեղւի փեթակ.  
 Մեղուները ժիր՝ ժըրաջան,  
 Թըռչրտէին ծաղկէ ծաղիկ, ծառէ ծառ,


Հիւթ ժողուելով քաղցրահամ,  
 Շաղէին մեղր հասարակաց օգտակար:  
 Թըրթուրները մեղւաց գըլխուն շահաւոր,  
 Հազարումէկ կըծու խօսքեր թունաւոր,  
 Կը թափէին օրը նոր,  
 Իսկ մեղուներ համբերութեամբ կամաւոր,  
 Հայոյանաց կարկըտին տակ  
 Որոնէին իւրեանց բարի նըսպատակ:  
 Անցան օրեր՝ ամիսներ,  
 Խընձորէնին թըրթուրներէն մահաբեր  
 Թունաւորուած, կորուց պըտուղ և տերև,  
 Նորա բոլոր յոյսը եղաւ ՚ի թերև:  
 Մեղրին փեթակ օր ըստ օրէ երկնէր առատ  
 Մեղր ու խորիսխ անարատ.  
 Իսկ թըրթուրներ բազմապատիկ  
 Դարձան եղան թիթեռնիկ:  
 Փեթակին շուրջ թըռչրտէին մանուման,  
 Կարօտ մեղրի կաթլին անգամ,  
 Եւ գարնելով փեթակին դուռն անդադար,  
 «Բաց մեզ — կ'ասէն — զի մենք ձեզնից չենք օտար:  
 «Մի խընայէք փոքր ինչ մեղրիկ քաղձրածոր,  
 «Որոյ փոխան մենք կ'օրհնենք ձեզ ամեն օր:  
 Հոն փեթակին տեսնես խորէն,  
 Չայն լըսեցաւ հեզնօրէն  
 «Այո՛ կ'օրհնէք այն ժամանակ  
 «Երբ կըրծելու բան չունենար:



ԻԷ

Ա Ր Ե Ի

Օր մ' արևին եկան ասին  
 Չորս տարքներն 'իմիասին,  
 «Թագաւոր՝ ապրած կենաս,  
 «Դու երբ կելնես երկնից դարպաս  
 «Ծով՝ ծով՝ լուսոյդ ոսկեծածան հեղեղատ,  
 «Կը ծաւալի բոլոր աշխարհք յորդառատ,  
 Բայց՝ ծանիր տէր, երկրիս վերայ շատ տեղեր,  
 Դեռ կը պատէ Եգիպտական խոր գիշեր:  
 Զօր օրինակ անդառախիտ սար ու ձոր,  
 Մեծ ժայռերու խոռոջներ խոր,  
 Վիրապ՝ այր և քարանձաւ:  
 «Միթէ՞—ասաց—արևը շատ զարմացաւ:  
 Տեսնես իսկոյն գահէն իջաւ փութալով,  
 Չորս դին լուսոյ ճառագայթներ սրփռելով,  
 Ուր որ երթար ամեն մի տեղ,  
 Իւր դիմացէն հոսէր՝ վազէր՝ լոյս հեղեղ.  
 «Ո՛ւր է—ասաց—մութն ու խաւար,  
 «Ձէ որ լոյս է արև աշխարհ:  
 Եւ իրաւ որ՝  
 Տեսնաս այրեր՝ վրճեր բոլոր,  
 Վիրապ՝ խոռոջ՝ անտառներ խոր  
 Երևէին լուսաւոր:  
 Այսպէս և լոյս խելքի դիմաց  
 Պարզի որոշ ամեն մի հարց:



ԹԸ.

Լ Ո Ի Ս Ի Ն

Երբ լուսինը հասաւ լըրման.  
 Գիշերային բամբշոյ նրման.  
 Վեհ նագէր նուրբ ամպոց վերև  
 Ինք գինք կարծէր նա արև:  
 «Տեսէք—կասէր աստղերուն,  
 «Ինչպէս վըսեմ և սիրուն,  
 «Լողայ երկիրն իմ ալեաց մէջ լուսաւոր,  
 «Ի գիւ գալով՝ գըլոր՝ գըլոր:  
 «Օ՛ ես երբէք չեմ ժըլատ,  
 «Իմ լոյսը միշտ՝ հոսեմ հեղեղ յորդառատ,  
 «Ձէ որ պարաք է՝ մութ ընկերին  
 «Չըխընայել լուսոյ բարին,  
 Բարոյախօս լուսնեակին ճառ  
 Տեսնաս մընաց կէս-կատար:  
 Զի յանկարծ այդ վարկեանին  
 Մըտաւ երկիրն արևուն մէջ և լուսնին  
 Խաւարեցաւ խեղճին երես,  
 Որ կը փայլէր արծաթի պէս  
 Ծիծաղեցան աստղեր երկնից կամարին,  
 Երբոր տեսան, որ լուսնոյ լոյսն ու բարին  
 Նորանը չէր, այլ օտարին...:



ԻԹ

ԱՐԱՔԻԼ ԵՒ ՍՍԳ

Մի օր սագը գետին ափով,  
Տեսաւ իւր քով.  
Մի արաքիլ բարձր ու խոշոր,  
Որ կը դիմէր դէպ 'ի խոր:  
Վիզը երկար ու բարակ,  
Խեռ աչերէն ցայտէր կըրակ,  
Անկուշտ՝ անյագ՝  
Կըտուցը սուր՝ իբրու դանակ,  
Խեղճ գորտերուն անմեղ՝ անպարտ՝  
Կուտար շարդ:  
Սագը ասաց՝ անիրայ,  
«Արի՛ խղճա՛ սոցա վերայ:  
«Թո՛ղ՝ ապրեն և օրհնեն քեզ,  
«Որ գըթացար իրենց հօր պէս:  
«Չարժէր—ասաց արաքիլը անողոր,  
«Այդ անպիտան որդանց համար քո բողոր,  
«Սոցա ձեռքէն հանգիստ չըկայ,  
«Կը կըռկըռան զիշեր՝ ցորեկ՝ անխնայ,  
«Չանձրացուցին բոլոր աշխարհ,  
«Չարգելէն՝ դատ չլինիր ուրիշ ճանապարհ:  
Այդ միջոցին՝ անդ խոր 'ի թումբ  
Կանցնէր ըստար ձրկներու խումբ.  
Արաքիլը տեսնելուն պէս  
Յարձակեցաւ կայծակ կարծես.  
Մի յաջ՝ մի ձախ,

Մի գարկ՝ մի փախ,  
Տըւեց այնպէս կոտորած  
Սոսկաց աշխարհը՝ արարած:  
«Սագն ասաց քեռի,  
«Արևուդ գերի,  
«Միթէ՛ ձրկներն ալ գորտերու նըման  
«Կանչեն՝ կըռկըռան՝:  
«Օ՛ր ի՞նչ կասես՝ հազար անգամ աւելի վատ,  
«Պատասխանեց արաքիլը արդարագատ:  
«Այդ լուռ՝ յամառ ձրձրները բոլոր տարին,  
«Կը խընայեն՝ մինչև անգամ՝ Աստու բարին:  
«Եթէ սիրտըդ լինի կարծըր երկաթի,  
«Չըղիմանար կը ճաթի:  
Այս հիմանց վերան  
Ազնիւ ամերան  
Մաքրեց խղճմըտանքն իւր սըրտին խորը,  
Կըշտացուց փորը:




Լ

Ք Ս Ր

Լայն արահետ ճամբուն վերան,  
Մեծ բազմութիւն անհամար,  
Կայեկոծուէր ծովու նըման,  
Գիշեր՝ ցորեկ անգաղար:  
Ճանապարհին ճիշտ կից առ կից  
Կը բարձրանար մի բըլուր:

Վերան կանանչ թաւիչ անբիծ  
 Պրճնէր ծաղկօք քաղցրաբոյր:  
 Ծաղկներուն մէջ հանգչէր մի քար,  
 Գլոր՝ ողորկ և յարդար.  
 Որնոր իրեն գահէն 'ի վայր  
 Միշտ գիտելով այդ սըշտաշարժ ճանապարհ  
 Կը նախանձէր իւր սըրտին խոր.  
 Որ ինքն իբրև ծըգնաւոր,  
 Կապրի մենակ՝ աշխարհք ու կեանք ուրացած,  
 Դիւրքով բարձրը այլ գործով ցած:  
 Կը փափաքէր թողուլ իրեն հանգիստ խորան,  
 Եւ զըլորել ճամբուն վերան,  
 Գործել՝ շարժել՝ ցոյց տալ ուժ կար,  
 Որ ինքն ալ չէ անպիտան քար:  
 Սորա բաղձանքը երկինքն լըսեցին,  
 Յորդառատ անձրև զըլխուն թափեցին.  
 Վազեցին ջրեր կոհակ առ կոհակ  
 Զարկ տըւին քարին թողուլ իւր տընակ:  
 Գըլորեցաւ քարն արահետ ճամբուն վերան  
 Եւ շատ գոհեր առաջի բերան  
 Մարդկանց՝ ձիանց ոտքերուն տակ  
 Կը զըլորէր շարունակ.  
 Բայց երբ կառքեր՝ մեծ մեծ սայլեր բեռնատար,  
 Ըսկսան կոխել՝ փըշրել՝ զենքը անդադար,  
 Ան ատէնը ըզգաց քարը  
 Իւր թոյլ ուժը և կարը.  
 Յետ նայելով բլրի վերան՝ քանի՛ քանի  
 Իւր առաջւան բոյնին կուտար երանի,  
 Բայց զըլորել բըլուրն ի վեր նորա համար  
 Էր անհնար:

Այսպէս խեղճը 'ի լաց 'ի ցաւ  
 Անուց ներքև փոշի դարձաւ:  
 Ուստի՛ ով որ չունի ուժ՝ կար՝  
 Օրինակ լինի իրեն այս քար:




Լ Ա

Չ Ի Խ Ն

Զմեռն հասաւ ծեր՝ ալևոր,  
 Զիւնը ծածկեց երկիր բոլոր,  
 Երեխաներ երբոր առտու դուրս եկան  
 Զիւնն որ տեսան,  
 Ծիչ վերուցին ուրախացան  
 Կայտուն՝ վազեն՝ ցիր ու ցան:  
 Իսկոյն տեսնես բերին փալխիր և սահնակ,  
 Եւ ըսկըսան սահել արագ և արագ,  
 Յետոյ ձիւնէն կանգնելով մեծ աշտարակ  
 Յընձան՝ երգեն կարծես շքեղ յաղթանակ:  
 Հոն այդ միջոցին ծերուկ մ՝ ալևոր,  
 Ա՛յ տըղաք կասէր ձեր խընդում բոլոր,  
 Պիտ տեէ մի օր,  
 Զի ձիւնը փափուկ  
 Հիւրէ վաղանցուկ:  
 Եւ իրաւ որ,  
 Գիշեր բոլոր,  
 Փըչեց անդուլ հարաւային տաք քամին  
 Մինչև առտու լուսնաժամին

Ձիւնն հալեցաւ փութապէս  
 եւ դուրս եկաւ հողուն երես:  
 Կանցնի շուրն ի վազ  
 Մընայ լոկ աւազ:



ԼԲ

ՈՍՏԵՐ ԵՒ ԱՐՄԱՏՆԵՐ

Լայն՝ թաւաստն՝ խնձորենոյն  
 Մինն ոստերէն բարձր ու հաստ,  
 Տոյց տար մի օր միւս ոստերուն  
 Իւրեանց կեանքը բարէփաստ:  
 «Ինձ մըտիկ արէք—կասէր—այ ոստեր,  
 «Ես բարձր եմ քան ձեզ՝ փորձառու և ծեր,  
 «Տեսէք ինչպէս՝ ձեզ երկինքը գրթառատ,  
 «Կը խնամէ իբրև որդիք հարազատ.  
 «Կարբուցանէ վրձիտ ցողով ամեն օր,  
 «Կուտայ առատ ծաղիկ խընձոր:  
 «Ամեն առտու արշալոյսը վարդամատ  
 «Կողջագուրէ ձեզ համբուրիւ խանդակաթ:  
 «Դուք ձեր կեանքն այն՝ այն ատէն միայն,  
 «Կըզգաք, որ շանցնիր անգործ՝ և ունայն,  
 «Երբ դառնաք նայեք իբր ի դերեզման  
 «Թաղւած՝ մոռացւած արմատոյցդ վերան:  
 «Եղճկ իրենց, որ մըթան մէջ  
 «Կապրեն խոպան՝ կոշտ և խեղճ:  
 Ասածն ալ այն էր, փոթորիկ մի չար,  
 Փըրթաւ հիւսիւսէն՝ խաղաց ծառն ի վայր.

Քարոզիչ ոստին կէս մէջքէն կոտրեց  
 Ծառին տակ շըրջեց:  
 Օր ըստ օրէ մինչև թըշառո ոստին վերև:  
 Թարշամէին ընձիւղ տերև,  
 Արմատները ՚ի միասին  
 Լեզու ելան և ասին,  
 Իզուր տեղը լայն-արձակ  
 Մեղադրէք մեզ համարձակ  
 Որչափ ալ դուք բարձրը լինիք փառալոր,  
 Առանց մեզի չունեք մի օր:  
 Ձի երբ չիտամք մենք ձեզ սընունդ  
 • Դուք անձընունդ,  
 Կը չորանաք արագ՝ արագ՝  
 Վառարանի կ'ըլինիք ճարակ:  
 Ամփոխն է այն՝ արմատ այն ծառին,  
 Որ ծընի կեանքին մեր ամեն բարին:



ԼԳ

ԳԱՅԼ ԵՒ ԱյԺ

Բարձրագագաթ ժայռերու մօտ,  
 Կարածէր մեծ ոչխարաց հօտ,  
 Սոցամէ մի այծուկ՝ թեթև ու կայտառ,  
 Հեռանալով մըտաւ անտառ:  
 Նա՛ ըստ այծոց սովորութեան բընածին,  
 Բարձր ՚ի գագաթ ելաւ ժայռին:  
 Այդ միջոցին մի քաղցած գայլ քանասար,

Երբ նըշմարեց այծուկն 'ի սար,  
Կայծակի պէս վազեց եկաւ,

Երբոր տեսաւ,

Այդ անառիկ բերդին գագաթ,

Որսիկ փափուկ և կըղկաթ.

«Ուշ դիր-կ'ասէր-աղջիկս 'սիրուն,

«Ես մատաղ քո արևուն.

«Ըզգոյշ եղիր' չի գըլորիս գըլսի վայր,

«Վայ չի բերես մօրըդ թըշառ:

Ուստի' իջիր մեղմ ու թեթև,

«Ես քեզ կօգնեմ և կը բառնամ ուսիս վերև»:

Գայլի անուշ խօսքերէն

Կասկածելով այծն 'ի վերէն:

Հարցուց «պարոն ո՞վ ես դուն».

Պատասխանեց գայլը «ես եմ անտառի շուն.

«Կը պահպանեմ վայրի այծերն ու գառներ,

«Գայլոց ձեռքէն ցորէկ' դիշեր»:

Այծը ասած. «եթէ շուն ես' հաչէ տեսնամ,

Այն ատէնը ես քեզ միայն կը հաւատամ:

Զայրանալով գայլը շըրջէր ման ու ման,

Ուժ մէկ կանէր' քըծնել' հաչել' շան նըման,

Բայց քծնելու' հաչելու տեղ

Գազանի պէս կոռնար տըզեղ:

Եւ իւր ձայնովն անեղ ու մեծ,

Ինք զինք մատնեց:

Զի լըսելով անդ մերձաւոր

Հովիւներն ու շըներ բոլոր.

Հասան եկան հըրով' սըրով

Եւ անգորով

Բըզիկ' բըզիկ պատառեցին

Կեղծ ու պատիր բարեգործին:

Օրիորդներ, ո՞վ որ ձեզնից չէ սըրտազեա,

Թող իմ այծը լինի նորա վարժապետ:



Լ. Գ.

ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒՒՄ

Ձըմեռ ատէն գիղջկին մէկը ալևոր,

Բեռնաւորած սայլը բոլոր

Ձըկներով թարմ և պարարտ,

Գեղ կը փութար գոհ և զըւարդ:

Երբ անտառին մէջ խորացաւ մացառոտ,

Սահուն ձըկներ խիտ գետեղւած մօտ առ մօտ.

Յընցըւելով անդազար

Թափթըփէին սայլէն վայր:

Հանդիպեցաւ ուղւոյն մօտով մի աղուէս,

Այդ մեծ բաղըը տեսածին պէս,

Յընծաց սաստիկ և ըսկըսաւ արագ' արագ,

Հաւաքել ձուկ, հարուստ ձարակ:

Բայց աղուեսին խընդում երկար չըզընաց,

Որկորածէտ գայլ մի քաղցած,

Յանկարծակի վըրայ հասաւ'

Ձըկանց կոյտը երբոր տեսաւ,

Խեղը թըռուց կասէր— «ագնիւ խնամի,


«Ուստի փըչեց քեզ այսպիսի լաւ քամի»:

Զ'այլայլեցաւ աղուէսն ասաց 'ի ծիծաղ

Հոգուտ մատաղ,

Կը տեսնաս դու այդ լիճը խոր,

Հոն կը վըխտան ձըկներ խոշոր  
 Հազարաւոր,  
 Այս՝ պոչովս որսացի ես  
 Օ՛ թէ ուժեղ՝ երբ լինէի դայլի պէս,  
 Լըճին ձըկներ յատակէն խոր  
 Դուրս բերէի ես բոլոր:  
 Ճըխաց գայլը—«ապրիս-ասաց-խօ գիտես,  
 «Որ ես գըծուծ չեմ աղուէս:  
 Այս խօսքէն վերջ շուտով գացին լըճին մօտ,  
 Որնոր ցըրտէն ըսկսել էր թանձրանալ,  
 Աղուէսն ասաց քեռի խըրէ պոչիդ ճոթ,  
 Եթէ կուզես լըճին ձըկանց տիրանալ,  
 Գայլն ըշտապաւ խօթեց պոչը ջըրին մէջ,  
 Եւ իրաւի մէկ ժամէն վերջ.  
 Նորա պոչը կամաց կամաց սառեցաւ.  
 Արթուն աղուէսն իմացաւ,  
 «Կեցիր-ասաց-ազնիւ քեռի,  
 «Ես այս տեղէն ոչ շատ հեռի,  
 «Քո ձըկներուդ համար մի գոց  
 «Երթամ փընդոնեմ համբարանոց.  
 Ասաց այսպէս վազեց գընաց,  
 Իսկ խեղճ գայլը անպոչ մընաց:  
 Հընարագետ խելքի դիմաց  
 Ամեն մի ուժ խոնարհի ցած:



### ԼԵ

### Փ Ի Թ Ի Ա Ս

Հին ատէնը Աթէնքի մէջ՝ հըմուտ և փորձ.  
 Կ'ապրէր մի ծեր արձանագործ:  
 Սա՛ Փիթիասն էր անվանի,  
 Փառք և պարծանք Յունաստանի:  
 Նորա կոփիչն նուրբ և հըզօր,  
 Կոփէր՝ գործէր՝ օր քան գօր:  
 Պաղ հատորներ մարմարինի  
 Կարծես շընչեն շունչ կենդանի...:  
 Օրին մէկը աւարտելով մի արձան,  
 Հըրապարակ հանեց նա գայն:  
 Ինքը նորա յետ քամակին դարան մըտած  
 Կուզէր լըսել կարծիքն ու դատ հասարակաց:  
 Տեսնաս անցնաւ մի կոշկակար,  
 Իւր արհեստին փորձ և ճարտար  
 Եկաւ կանգ առաւ արձանին դիմաց  
 Եւ փոքր ինչ քըննելով նա այսպէս ասաց:  
 Ի՞նչ կոշիկներ շըքեղ սիրուն  
 Եւ վայելուչ թագաւորի ոտքերուն:  
 «Ափսոս, որ աջ կոշիկն սըրունգ միմիայն  
 «Ինձ կերևի փոքր ինչ լայն:  
 Կոշկակարին դիտողութեան համաձայն,  
 Փիթիասը չը հանեց ձայն,  
 Եւ իր սըխալն ուղղեց շուտով  
 Անվըրդով:  
 Կոշկակարը երկու օրէն

Արձանին քով եկաւ նորէն.

Երբ սրխալը ուղղւած տեսաւ,

Շատ գոհ մնաց ուրախացաւ:

«Ա՛յրիս՝—կանչեց—արձանագործ,

Որ ուշ դըրեր վարպետիս փսրձ.

«Աստուած վրկայ, որ կոշիկ մ'ալ՝ կոշկիդ նըման,

«Այո՛, չունի թագւորն անգամ:

«Այդ լա՛ւ, փոքր ինչ դիտենք հիմայ,

«Տեսնենք ուրիշ ինչ սրխալ կայ:

Ահա՛...

«Ինձ կերևի, որ ա՛յ կողմի աչքն է խոշոր,

«Ժսկ ձախ կողմինն է փոքր ինչ խոր:»

Կոշկակարը խօսքը դեռ չէր աւարտած

Փիթիասը դուրս նետւեցաւ և ասաց:

Այ կոշկակար՝

Ճանչեցիր քո կար

Կոշիկէն վեր մի ելնէր:



## 1.9

### ՀԱՄԲԵՐԱՏԱՐ ԱՂՈՒԷՄ

Ազուէսն օր մի քաղցած՝ ծարաւ՝

Կերթար որսալ մի քանի հաւ.

Տեսնաս՝ նորա գէմ—յանդիման,

Երևեցան ճամբուն վերան,

Մի քանի հատ ուրախ՝ զըւարթ

Ժիր գեղացի երիտասարդ:

Ազուէսն իսկոյն՝ կեանքին սիրուն,

Ուղեց խափել գեղջուկներուն

Տարածւեցաւ գետնին վերայ կամացուկ,

Եւ ձևացաւ սուտ-մեռուկ:

Գեղջուկները եկան հասան,

Երբ ազուէսին լէշը տեսան.

Նոցամէ մինն իւր ցուպով հաստ,

Լաւ մը խրփեց խեղձին գըլուխն չարափաստ.

Ճիկ չը հանեց ազուէսն իբրև խոր ի քուն

Մըտքէն կասէր—համբերութիւն համբերութիւն

Գեղջուկները յանկարծ տեսնես,

Մինը գլխէն, միւսը պոչէն լէշի պէս,

Ձինք վերուցին և տըւին շուռ,

Խոր հառաչեց ազուէսն ՚ի զուր:

Բայց լըռելով անգձր՝ նըկուն,

Մըտքէն կասէր համբերութիւն՝ համբերութիւն,

Միւս մ'ալ ոտքով հըրեց սաստիկ

Թընդաց պարսպ ազուէսին տիկ.

Նա կիսամեռ ՚ի դուռ մահուն

Մըտքէն կասէր համբերութիւն՝ համբերութիւն

Եւ համբերեց մինչ այն կէտին,

Որ գեղջկաց հէն չարածըձին,

Դանակն հանեց կըտրեց պոչը,

Օձիկ շինել իւր կընօջը:

Համբերողը շատ անգամ

Մընայ պոչատ և տարտամ:



ԼԵ

ԾԵՐ ԽՈՋ ԵՒ ԳԱՌ

Ժամանակով կենդանասէր կ'ապրէր մի ծեր,  
 Որն խընամէր ու կը տածէր,  
 Կենդանիներ զանազան  
 Մինչև անգամ վայրի գազան:  
 Անգամ մի նա ուզեց կրթել խոզին լակոտ,  
 Ազտոտ-կեղտոտ,  
 Հարիւրը քիչ լըւար մաքրէր զինք բոլոր  
 Օրէ օր:  
 Կուզէր, որ նա լինի նախկին  
 Բարի օրինակ խոզաց ազգին:  
 Ընկերացուց խոզը գառան ընտանի,  
 Որ նա լինի խոզին օրինակ կենդանի:  
 Կը կերակրէր նա միշտ զիրենք միատեղ,  
 Եւ կը տանէր ըզբօսանքի ամեն հեղ:  
 Կը հիանար խոզին ի տէս,  
 Երբ նա կայտուէր ջինջ ու ճերմակ ձիւնի պէս:  
 Անցաւ այսպէս ժամ-ժամանակ  
 Գառն ու խոզը դարձան եղան արբուն հասակ,  
 Ծերը ուզեց փորձել, որ իւր խնամքն ու հոգ-  
 Խոզին վերայ ազդեցութիւն արին արդեօք  
 Օր մը զիրենք թողուց ազատ,  
 Որ երկուքն ալ ինքնազլուխ շրջին գատ՝ գատ,  
 Խոզն ու գառը թրուան գացին կայծակի պէս...  
 Շրջթայագերծ շընէր կարծես  
 Մինչ երեկոյ՝ դաշտ՝ լեռ ու ձոր,

Տակն ի վերայ արին բոլոր:  
 Յոգնած՝ դադրած՝ երբ դարձան տուն,  
 Գառը մաքուր ճերմակ զերդ ձիւն,  
 Մընացել էր առաջւան պէս,  
 Խոզը տեանես,  
 Ոտքէն ցըզլուխ ցեխն ՚ի թաթախ,  
 Տըզմոտ՝ կեղտոտ՝ գոհ և ուրախ,  
 Նայէր ծերուն երեսն ՚ի վեր  
 Անվեհեր:  
 Սոսկաց ծերը ափ ՚ի բերան  
 Դարձաւ թրքեց խոզին վերան  
 Եւ հաակըցաւ, որ չունի ճար  
 Խեղճ խըրատ՝ սեխն օձառ:



ԼԸ

Ե Ր Կ Ո Ի Շ Ն Ե Ր

Մեծակառոյց մի շքեղ տան  
 Պատուհանին մէջ անվըրդով,  
 Շան թագուորի կարծես նըման  
 Շընթըռկել էր գոհ սըրտով,  
 Քոթոտ փոքրիկ առիւծազլուխ,  
 Բըրթով թուխ,  
 Տակը թաւշեայ անկողին  
 Կակուղ բարձեր ՚ի կողին.  
 Առաջը լի խում ու կէր,  
 Կարծես տանը ինքն էր տէր:  
 Այդ միջոցին

'ի փողոցին,  
 Պատուհանին ճիշտ դիմացէն պոչը կախ,  
 Քաղցած ծարու և դանդաղ  
 Կերթար մի շուն 'ի ցեղէ շան  
 Աննըշան:

Երբոր տեսաւ քոթոտին փառք  
 Կանգ առաւ և բացադանչեց՝ աշխարհք՝ աշխարհք.  
 Որչափ պատիւ և որքան սէր այդ շունին,  
 Ոչ թէ շուներ՝ մարդիկ անգամ զայդ շունին.


Այդ միջոցին նա մինչդեռ որ  
 Բիւր երանի տայր քոթոտին բաղդաւոր,  
 Տեսնես եկաւ տանտիկինը գեղեցկաշոր,  
 Որն իւր յատուկ զակըններուն կըրթութիւն,  
 Թողուցել էր ծառաներուն,

Իսկ ինքն իւր շան հետ կըղբաղւէր օրն 'ի բուն.  
 Ելիր՝ կանգնիր՝ կանչեց կինը խրստաբար,  
 Քոթոտն իսկոյն հեզ ու խոնարհ,  
 Ելաւ յետի ոտից վերան  
 Շարժէր թաթերն ափ 'ի բերան:  
 Իսկ տիկինը ձեռին մըտրակ  
 Իբր անաչառ դաստիարակ.

Շատ ձևերով կը մարդէր խեղճ քոթոտին  
 Վայ կը բերէր խեղճի գըլխին:  
 Փողոցնաշունն զայդ որ տեսաւ  
 Խելքը հասաւ,

Որ մարդկանց սիրտը շահելու համար,  
 Պէտք է միշտ քըծնել՝ ծընկի գալ խոնարհ.  
 Դարձաւ ասաց այ խեղճ քոթոտ.  
 Փառք ու պատիւդ քեզ մընայ մօտ.  
 Լաւ է լինել ինձ նըման շուն աղքատ՝ ազատ,

Քան քեզ նըման պայազատ:  
 Ասաց զընաց փողոցին խոր  
 Փընտուել չոր հաց և ոսկոր:




ԼԹ

ՀԵՌԱՏԷՍ ԿԱՏՈՒ

Օր մի բակին մի անկիւնը ծառին տակ,  
 Հին ցեղային սովորութեան լաւ զիտակ,  
 Կատում մ' արագ և արագ,  
 Իւր ճանկերով սուր և բարակ,  
 Փոս կը փորէր կոկիկ՝ յարմար,  
 Իւր բընական պէտքին համար:

Հոն ոչ հեռի շուն մը պառկած՝ 'ի դարան  
 Ծիծաղելով կը դիտէր այդ տեսարան,  
 Չըզիմացաւ «տիկին՝ ասաց ինչու այդպէս  
 «Սոր կը թաղես:

«Ես չեմ տեսած ոչ մի անբան կամ բանական,  
 «Որ այդ մասին այդչափ հոգան»:  
 «Ի՞նչու համար—կատուն ասաց  
 «Ես միշտ ձրրի և անվարձ  
 «Թողում՝ որ իմ գաղտնի բարիք  
 «Գոհացնէ այլոց կարիք  
 «Ձէ որ կասէն ամեն մի տեղ  
 «Որ մեր թըրիքն է մեծ դեղ:




Խ

ԱՐՉ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Որկորաժէտ արջը քաղցած  
 Մինչ ՚ի սարէն կիջնար ցած,  
 Հոն կից առ կից ծառին տակ,  
 Տեսաւ գիրուկ աղուէս մ'ատակ:  
 Գաղտ ու գողի հասաւ գրրկեց զայն փութով,  
 Սոսկաց աղուէսն ի վրըգով:  
 'Ի գուր ասաց ամիրայ,  
 Ատամներըդ դու կը սըրես իմ վերայ:  
 Եթէ ուտես զիս բոլոր  
 Մէկ ժամէն վերջ գարձեալ քաղցած և տրկտոր,  
 Պիտ տատանւիս սարէ ՚ի սար՝ ձորէ ձոր,  
 Դատարկ ձեռքով կիտափոր:  
 Հապա եթէ թողուս զիս ողջ,  
 Ծանիր՝, որ քո սեղանդ ամբողջ,  
 Կը լեցընես ես մըսերով զանազան,  
 Հաւ՝ հընդկահաւ՝ սագ՝ բագ՝ ֆագան,  
 Եւ շատ թուչներ անհամար,  
 Որ ըստեղծւած են իշխանաց փորին համար:  
 «Ա՛յրիս՝-ասաց արջն հեգնաբար,  
 «Չոր խօստմամբ չեմ կըշտանար:  
 «Չէ որ կասէն այսօրւան ձուն  
 «Վաղւան հաւէն հաճելի է ամենեցուն»:  
 «Աղուէսն ասաց» եթէ դու ինձ չես հաւտար,  
 «Գէթ ծագերուս խրղճն թըշտոս,  
 «Թոյլ տուր երթալ  
 «Եւ իմ վերջին համբոյր տալ:

Արջն որ լըսեց տըղոց մասին  
 Կարծես ըզգաց համուհոտը փափուկ մըսին:  
 «Ա՛յո աղջիկս—ասաց—զիս ալ հետըդ տար,  
 «Քո մայրենի սէրն ու գուլթն ինձ չեն օտար:  
 Խընդաց աղուէսն սըրտին խորէն,  
 Երբոր տեսաւ, որ կուրօրէն,  
 Արջը անյագ փորին սիրուն  
 Հաւտաց նորա խօսքերուն:  
 Առաւ տարաւ նա զայն բարձր ժայռի տակ,  
 Ուր որ կար շատ խոռոջ ու ծակ.  
 Քեռի ասաց  
 Խոնար և ցած.  
 Այս խոռոջը մութ և տըխուր,  
 Իմ ձագերուս է խանձարուր:  
 Այն, այն—ասաց արջը մըտաւ արագ,  
 Իսկ աղուէսը փախաւ գընաց մի ուրիշ ծակ,  
 Երբ արջն երկար փընդուէլէն վերջ,  
 Բան չըզբտաւ խոռոջին մէջ.  
 Ելաւ նա դուրս զայրացած  
 Եւ կը խանջէր ցըռուկը ցած:  
 Աղուէսն իր նեղ ծակին խորէն  
 Կ'ասէր «ծանիր՝ անօրէն,  
 «Թէ տասը արջ մէկ տեղ շողուես,  
 «Չի խըմորւիր՝ ոչ մի աղուէս:



ԽԱ.

ԽԱ.ՉԱ.ՓԱ.Ռ. ԵՒ ԲԱ.Դ

Գարնան առաս՝ յորդահոսան.  
 Անձրևներու օրեր հասան,  
 Հեղեղեցին զետեր բոլոր  
 Լայն՝ լայն՝ դաշտեր ծով դարձան խոր.  
 Խել մը՝ յիմար խաչափառներ  
 Երիտասարդ տըղայ և ծեր.  
 Թողին իւրեանց բոյները խոր  
 Ելան տեսնել արշաւանքել ծովեր նոր:  
 Նոյն միջոցին ջուրին երես  
 Կը լողային ձերմակ բաղեր ձիւնի պէս  
 Խաչափառից մինն առաւել պերճախօս  
 «Տիկին— ասաց— հազար ափսոս,  
 «Որ ձեզ համար պըրծաւ բոլոր,  
 «Արև՝ աշխարհք՝ ծով դարձաւ խոր:  
 «Ոչ բոյս՝ ոչ հունդ քաղցրահամ,  
 «Բոյն տընելու անկիւն մ'անգամ  
 «Չըկայ հիմայ ձեզ համար,  
 «Պիտ կորընչի թռչնոց ազգը անհամար:  
 «Եւ ծովերուն լայնասահման  
 «Մենք պիտ լինիմք տէր և իշխան:  
 Բազն՝ ի ծիծաղ վայ քեզ — ասաց — կարկինոս  
 «Պաղ ջըրին մէջ դիտես լինել պերճախօս.  
 «Աչերըդ բաց մի՛ վըստահիր դու ջըրին,  
 «Որ չը բերէ վայ քո գըրին»:  
 Եւ յիւրաւի որ մի շարաթէն վերջ,  
 Չուրը չորացաւ լայն դաշտերուն մէջ.

Խաչափառներն անդ մընացին ի ցամաք  
 Դարձան կըմաղք...  
 Մեր մէջնալ կան կարկինոսներ,  
 Փողի ուժով լողան վար-վեր.  
 Փողն որ ցամքի ջըրի պէս  
 Կը սողորդան դեսնին երես...



ԽԲ

ՃԱՆՃ ԵՒ ԹՈՒԿԱԿ

Գազանանոց կար մի խոշոր,  
 Ուր գըրեթէ ամեն օր,  
 Հետաքըրքիր մարդկանց ամփոխ  
 Մըսնէր՝ երնէր՝ փոխ առ փոխ:  
 Հոն շատ տեսակ վայրի գազան՝  
 Չանազան,  
 Ահեղնաձայն կը մըռնչեն,  
 Ունան՝ խանչեն,  
 Այնպէս սաստիկ, որ տան բոլոր  
 Սարսին պատեր հիմունքէն խոր:  
 Այդ միջոցին ձանձրացուցիչ և յամառ  
 Ճանճին մէկը վէհ առիւծին գըլխին կատար,  
 Թևերը բաց՝ ոտն ի մատին կանգնած կոկոզ,  
 Աչեր խըրոխտ և գոռոզ,  
 Կը դարձնէր աստին՝ անդին  
 Եւ երբեմն ժողովըրդին,  
 Նա կը կարծեր՝ որ հոն մարդիկ նորա վերան  
 Ապշին բոլոր՝ դարմանան:

«Տէս՝ մէկմը տէս՝ կասէր—տիկին  
 Իւր դըրացի թուգակին.  
 «Ես թագաւորին գըլխին եմ թագ,  
 «Սեգ առիւծն հեգ գառնուկ է ոտքիս տակ.  
 Կ'ասէր այսպէս ինքն իւր խընկէն հարբած բոլոր,  
 Ինք զինք կարծէր հերոս մի նոր:  
 Բըզզար՝ թըռչէր վանդակն ի վեր արագ՝ արագ,  
 Կերգէր իւր մեծ յողթանակ:  
 Բայց երկար չէր, քաջ ճանճիկին խընդութիւն,  
 Ձի վանդակին մի անկիւն,  
 Փոքրիկ սարգի ոստայնին մէջ  
 Գերի ընկաւ նըկու՛ն և խեղճ.  
 Խաղք ու խայտառակ նա մինչ տագնապէր,  
 Իրըացի թուգակն խընդար և կասէր:  
 «Դու սը վագրէն և առիւծէն չունէիր վախ,  
 «Մանրիկ սարգին եղար մատաղ.  
 «Քո քաջութիւնիդ յայնմէ ա՛ ճանճ,  
 «Որ շատ փոքր ես և անճանչ:




ԽԳ.

Կ Ր Թ Ե Ա Լ Ա Ր Զ

Արջը պարեց բոշային ձեռք շատ տարի,  
 Իբրև անխոնջ ծառայ բարի:  
 Օր մի նորա բաղդը ժըպտաց,  
 Շըղթային կուզպ թողւել էր բաց.  
 Արջն ո՛ր ըզզաց:  
 Ուրախութեամբ կամաց՝ կամաց,

Շըղթան գարկեց շալակը  
 Թողուց տիրոջ տընակը,  
 Փախաւ, քալեց բոլոր գիշեր անդադար,  
 Հասաւ նա իւր բընիկ անտառ:  
 Երբ ծընողքը տեսան որդին  
 Չէին գիտէր նայել ո՞ր գին.  
 Մայրը կասէր «վայ արևուզ մեռնիմ տըղաս,  
 «Ո՛վ ինչ կըտրիճ չափահաս,  
 «Ո՛վ գիտէ ի՞նչ գիտուն և ինչ մեծ հանճար,  
 «Դու վարդ, իսկ մենք չընչին բանջար:  
 Շատ օր չանցաւ բերնէ-բերան  
 Բոլոր անտառն իմացան:  
 Որ եկէլ է մի արջ գիտուն,  
 Մեծ իմաստուն:  
 Կենդաներ՝ իսկոյն տեսնես, անհամար,  
 Եկան արջին բարի եկար.  
 Թախանձելով՝ խընդրեն խոնարհ,  
 Որ նա ցոյց տայ իւր հանճար:  
 «Չըզիմացաւ վերջապէս  
 Արջը ելաւ յատպարէզ:  
 Յուսն ի ձեռին հովիւի նըման  
 Նա կը պարէր ման ու ման  
 Եւ կը դառնար զերգ ճախարակ  
 Արագ՝ արագ:  
 Դեռ նա խիստ շատ ձեեր ճարտար  
 Յոյց կուտար:  
 Կենդանիներն սպշած բոլոր,  
 Անթարթ նայեն խոլոր-մոլոր.  
 «Կէցցէս» կանչեն գաւակ անգին,  
 «Դու պարծանք ես արջոց ազգին.

Երբ կը լըսէր մեծ աղաղակ ու մեծ ճիկ,  
 Աղուէս մ'եկաւ լանջիկ-մանջիկ  
 Ապրիս-կանչեց — «ո՛վ պայազատ,  
 «Դու գիտութիւն ծընունդ ազատ,  
 «Ոտը անտառիս մըթան վերև  
 «Դու ծագեցար մեզ լոյս արև.  
 «Յուսով եմք, որ քո արճեստը բազմատեսակ  
 «Կուսուցանես մեր տղայոց դեռահասակ:  
 Արջը ասաց — շատ կը ցաւիմ ամիրայ,  
 Որ կարող չէք, դուք վըստահել իմ վերայ,  
 Թէպէտ մարդիկ ինձ կըրթեցին,  
 Բայց աչքերըս կուրացուցին.  
 Վըզիս շըղթայ, շըրթնիս օղակ,  
 Ի՞նչպէս կըրթեմ ձեր տըղաք:  
 Ծիծաղեցաւ աղուէսն արթուն,  
 Լաւ է ասաց լինել առողջ անասուն  
 Քանց անկեզու՝ կոյր՝ գիտուն:



ԽԳ

ՁԻԵՐ ԵՒ ԷՇԵՐ

Իշխանս ս'ի կառքին՝ շըքեղ ոսկեզօծ,  
 Շիպ-շիտակ բազմած իբր ինչ մի կոթող,  
 Կերևակայէր, որ փոքըր բըլըոց  
 Ինքն էր ըստեղծող:  
 Խըստապարանոց ձիեր սըրավազ,  
 Խըրոխտ՝ սիգածես՝ գընան նազ 'ի նազ  
 Այդ միջոցին նոցա մօտէն երկու էշեր,

Յոգնած՝ դողրած՝ բոլոր գիշեր.  
 Կամաց՝ կամաց՝ կը տանէին իւրեանց բեռ  
 Լեռն 'ի վեր:  
 Ձիերն երբոր զանոնք տեսան  
 Հեգնել՝ խընդալ ըսկըսան.  
 Մինը կասէր վըրան բեռը լեռ կարծես,  
 Ինքը մարմնով հազիւ կյնի մուկ ու կէս:  
 Միւսը կասէր ականջէն գատ  
 Չունի ուրիշ տեղ մը ազատ:  
 Այսպէս կըծու խօսքերով  
 Խայթեն էշերն անգորով:  
 Բայց ձիերուն փառքն ալ երկար չը գընաց.  
 Ձի դաշտին մէջ խոնաւ ու թաց,  
 Գարնան առատ անձրևներէն տեղ առ տեղ,  
 Լըճացել էր խորունկ ցեխ,  
 Մեր քաջերը վըստահելով ոտից արագ,  
 Չարկին սըմբակ  
 Եւ խըրլեցան հոն ցեխն 'ի խոր  
 Մինչ 'ի փոր:  
 Լաւ որ հասան իշուկները քաջալանջ,  
 Իշապանը լըծեց զանոնք ձիանց առաջ.  
 Ճըւաց՝ կանչեց՝ ճիշ-աղաղակ  
 Եւ էշերը տարին շըքեղ յաղթանակ,  
 Դուրս քաշեցին կառք և ձիեր ցեխին խորէն,  
 Բայց լիբը ձիերն անօրէն  
 Ապրիս մ'անգամ չասին բարեաց փոխարէն:  
 Ոչ քիչ անգամ աղքատն համեստ՝ անձանօթ.  
 Մեծատունին ծածկել է մուրն և ամօթ,  
 Մինին բարեաց՝ միւսն եղել է ապերախտ,  
 Համարելով զայն նորա պարտք, իրեն բազդ:

ԽԵ

Գ Ր Օ Շ Ա Կ

Օրին մէկը՝ գոռ մարտէն վերջ,  
 Լայն և արձակ դաշտին մէջ.  
 Արիւնն հոսէր վըտակ՝ վըտակ,  
 Ամէն մի դին կոյտ՝ կոյտ՝ դիակ,  
 Լաց ու տըքոց՝ կողկողագին հառաչ խոր,  
 Արձագանգէր սար ու ձոր:  
 Փառք և պատիւ մարդկանց խորին  
 Արեանարբու հանձարին:  
 Դըրօշակ խըմբին ծածանւէր շրքեղ,  
 Վերէն դէպ ի վայր ծաւալէր ահեղ,  
 Մութ՝ ծակոտկած՝ քրքրած բոլոր,  
 Մահ կըսպառնար նորէնոր:  
 Եւ յաղթութեան փառքին բարձրը ովսաննան,  
 Թուշտէր նորա թևոց վերան:  
 Տեսնաս այդ պէս մեծ փառքերով,  
 Երգով՝ տաղով՝ նըլագներով,  
 Դըրօշակը առին տարին,  
 Դէպ ՚ի վըրան գորավարին:  
 Մինչ դրօշը վըրանին խոր,  
 Բագմելէր՝ վեհ՝ փառաւոր,  
 Նա նըշմարեց իւր ոտքին տակ,  
 Մի լայն կապերտ ասրաքատակ:  
 Երփնագոյն թելեր ձըգւին ցիր ու ցան,  
 Խաղան ծաղիկներ իբրև ծիածան:  
 Դըրօշն ասաց այ փուճ կապերտ,  
 Բամբըջի նըման կարծես ի բ՛րդ,

Կապրիս հանդիստ և անհող:  
 Քեզ չընեղէր ոչ մի ոք:  
 Մինչ տես որ ես,  
 Ազգիս սիրուն հըրակէդ,  
 Կառաջնորդեմ՝ զօրք ու բանակ,  
 Տանիմ շրքեղ յաղթանակ,  
 Եւ հայրենեաց փառք ու պատիւ  
 Կը պահպանեմ դիշեր ու տիւ:  
 Բայց դարձեալ տէս,  
 Որ ի՞նչպէս ես,  
 Հին ծակոտկած՝ կեղտոտ բոլոր  
 Կը ծաւալիմ օր է օր:  
 «Իսկ դու մաքուր և փայլուն  
 «Միշտ կը նազիս գոյն ըզգոյն:  
 «Ասան դու ինձ քո ո՞ր օգտիդ փոխադարձ,  
 «Ձայդ կըստանաս քեզ ի վճարձ»:  
 Կապերտն ասաց» ո՞վ մեծագոր դըրօշակ,  
 «Դու վեհ հերօս, ես խեղճ մըշակ,  
 «Դու ծաւալիս գըլխոց վերև  
 «Ես տարածւեմ ոտից ներքև:  
 «Եթէ կուգես ապրիլ մաքուր, հանդիստ ՚ի բերդ,  
 «Իջիր ինձ մօտ՝ դարձիր կապերտ:



ԽԶ

ԳՈՐԾՈՒՆԵԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐ

Ձըմես ատէն ձիւնը առատ բարդ ի բարդ,  
 Ծածկեց երկիր հաւասար ու հարթ.

Որուն արծաթ փոշույն վերայ երփնավառ,  
 Շողան ակեր անհամար:  
 Խելմը գործունեայ լուրջ պատանիներ,  
 Ուզելով ձիւնը անել շահաբեր.  
 Ժողովեցան ի մի խումբ  
 Առին ակումբ:  
 Մինն ի նոցունց առաւել փորձ՝ ընդունակ,  
 Ասաց— »ուշ դիք ո՞վ տըղաք,  
 «Արիք ձիւնէս շինեմք ազատ ժամանակ,  
 «Մի հոյակապ աշտարակ:  
 «Թող մեր ծընողք տեսնեն, որ մենք չեմք անփորձ  
 «Կանգնել՝ կերտել՝ ըստեղծել գործ:  
 Ուրիշ մ՝ ասաց— «Ի՞նչու բարձրը աշտարակ,  
 Կուզես, որ մենք բարելոնի պէս խայտառակ,  
 Շըրջիմք տապալ յերկիր կործան  
 Յիր ու ցան:  
 Լաւ է՝ շինեմք շքեղ պալատ սիւնազարդ  
 Տեսնէ ապշի ամեն մարդ:  
 Երրորդ մ՝ ասաց— «Է՛հ անօգուտ լոկ պալատ,  
 Լաւ է ամրոց կամարնապատ,  
 Ուր դարգարուն դըղեակներուն սուր կատար:  
 Յոյց տայ արհեստ մեր ճարտար:  
 Չորրորդ մ՝ ասաց— «Ո՞վ ինչ ազատ համարձակ  
 Դուք կը դատէք լայն և արձակ:  
 Այգպէս շուտով կուզէք լինել մեծագործ,  
 Մինչ գեռ տըգետ և անփորձ,  
 Ոչինչ բրնաւ չէք հասկանար,  
 Այդ արհեստին մէջ գըժւար.  
 Պէտք է ուղիղ նախ ուրուագիծ մըշակել  
 Հարկեր բոլոր ըստ պատշաճին որոշել,

Համրել՝ հաշուել անվըրիպակ,  
 Որ ձեր գործը չըլնի դատարկ:  
 Ուստի թողունք մի քանի օր  
 Պիտոյքներ սարքենք բոլոր,  
 Յետոյ լինեմք այդ մեծ գործին ձեռնամուխ,  
 Եւ քաջութեամբ հանենք գըլուխ:  
 Հինգերորդը չըղիմացաւ դարձաւ կըրակ,  
 Եւ որտաց— «Ի՞նչ կը խօսիք երկար-բարակ  
 Եթէ կուզէք գործել մի բան  
 Հարկ չըկայ գայն թողուլ վաղւան  
 Բերնով շինէք պալատ՝ ամրոց՝  
 Բոլորն է խօսք և ոչ մի գործ:  
 Սորա բողոքն անտէս թողին անուշաղիբ,  
 Եւ ըսկըսան գըրել երկար ծըրագիր:  
 Դըձեցին մեծ յատակագիծ  
 Եւ օրերով կից առ կից,  
 Նըստան խորհեցան հաշուեցին երկար,  
 Վիճեցին անվերջ կըռուով անդադար  
 Ամեն մէկին խօսքին կէսը  
 Էր իւր «Եսը»:  
 Երկարեցին գործը մինչև այն ժամին,  
 Որ դարունը հասաւ վըջեց տաք քամին,  
 Ձիւնն հալեցաւ եղաւ անհետ,  
 Ուրագիծը մընաց անպէտ...  
 Խօսք ու խորհուրդ երկար-բարակ,  
 Հարեն միայն շուրէն կարագ.  
 Իսկ եռանդուն մի «եղիցի»  
 Կանգնէ շքեղ եկեղեցի:



ԽԷ

Օջ եի ՏՉՐՈՒԿ

Պատուհանին վերևը  
 Ուր շողշողէր արևը,  
 Ձինջ բերեղեայ սափորի մէջ,  
 Կայտուն՝ առնեն ել և էջ,  
 Հինգ-տասը հատ սևագգեցիկ տըզրուկներ  
 Առոյգ և գեր:  
 Պատուհանին տակ ծաղկանց մէջ,  
 Կըշտիկ գորտաճաշէն վերջ,  
 Օձը պառկած գալար՝ գալար՝  
 Օրուան տաքէն հեշտանար.  
 Դարձաւ ասաց ծեր տղրուկին,  
 «Բիւր երանի՛ քո խելքին,  
 Այդ ինչ բարակ ես դիպլոմատ,  
 «Աշխարհ բոլոր քեզ խածնէ մատ,  
 «Որքան մարդկանց արիւն ծըծես,  
 «Այնքան նոքա կը սիրեն քեզ,  
 «Իսկ եթէ ես  
 «Աշխատէի նըմանել քեզ,  
 «Բոլոր աշխարհ կեղներ՝ ի կոծ  
 «Եւ չէր մընար և ոչ մի օձ:  
 «Կեցիր—ասաց—տղրուկն օձին,  
 «Ո՛վ խորագետ գըրացին,  
 «Տէս թէ որչափ իմ խայծն ու քո սուր խայթոց  
 «Կը տարբերեն տըզրուկէն օձ.  
 «Դու որ խայթես՝ արեան մէջ թոյն կը խառնես,

«Իսկ եթէ ես

«Սածեմ՝ ծըծեմ արիւն մարդոյն  
 «Ձեմ թողուր հոն կաթիլ մի թոյն:  
 Ո՛վ քընադատներ՝ պարտք է մաղթել ձեզ  
 Լինել օգտակար միշտ տըզրուկի պէս»



ԽԸ

Մ ի պ ս կ ե ռ

ԿԵԱՆՔԻ ՃԱՆՍՊԱՐՀԻՑ

Դեռ արևը տիեզերաց գըմբեթին  
 Նոր հասել էր միջնակէտին.  
 Հըրակոնակ շողերը յորդ  
 Կը հեղեղէր մըթնուրդ:  
 Այրւէր աշխարհ տոշոր՝ տոշոր,  
 Կըրակ շընչէր սար ու ձոր,  
 Կենդանիներ՝ բոյսեր բոլոր,  
 Կապրեն նիհար և անգօր:  
 Այդ միջոցին պանդուխտ մի ոմն ալևոր,  
 Յուպն ՚ի ձեռին, մաղախն ՚ի յուս,  
 Ոս՝ ոս՝ կեղնէր անդ լեռն ի վեր, ուր բոլոր  
 Նեղ ուղւոյն մէջ յայսկոյս՝ յանկոյս,  
 Կը ցըցէին սուր՝ սուր կատարք ժայռերուն,  
 Որոնց մէջէն ուրոյն՝ ուրոյն,  
 Բարձրանային փուշ և տատասկ  
 Ասեն ազգ...  
 Սեղճ պանդուխտը՝ հեւքը հեւքին դիտէր վեր,  
 Ամեն քայլին մաս մի կեանքէն պակասէր,  
 Շոգ՝ ջերմաշոգ՝ հոսանք օղին,

Տասկէր նրա ամեն մի դին:  
 Ճակտին բրտինք վրտակ՝ վրտակ,  
 Թըրջէր ուղին ոտքերուն տակ,  
 Այդ մարմնական տանջանքէն զատ,  
 Սիրան երկիւղէ չէր ինչ ազատ:  
 Պահը մէկ մը երեսն հողուն,  
 Զագրաթորմի սողար-սողուն,  
 Յ'աջմէ՛ ծախմէ՛ ժայռերուն ծերպ  
 Գալարէր օձ ամենհակերպ:  
 Նոցա ուր՝ սուր՝ սլաքն լ'աչեր,  
 Ուղեւորին շարժէր վեհեր:

Սոցամէ զատ, անդ սարն ի վայր արագահոս,  
 Է զի կիջնար արբոփելով վայրի խոզ:  
 Է զի՛ կեխէր՝ անդ դէպի սար,  
 Վոհմակ գայլոց քանտար:  
 Այսպէս և այս վիճակին մէջ  
 Առաջ կերթար ճամբորդը խեղճ:

Արդէն մօտ էր ընկնել յերկիր ՚ի տարած,  
 Նորա առջին տեսնես յանկարծ  
 Շեղւած ժայռին լայնաքամակ,  
 Զովազրւարճ ըստուերին տակ,  
 Երևեցաւ փափկադալար  
 Կանաչ թաւիչ ծաղկանդկար,  
 Մի քանի ծառ խիտ վարսագեղ  
 Եւ մի քանի թռչնոց գեղգեղ:  
 Իսկ վեհ ժայռին հիմունքէն խոր,  
 Զուր կենդանի բիւրեղնածօր,  
 Խոխոջելով ցայտէր իստակ:  
 Եւ ծաւալէր կենսավրտակ:  
 Ծերն որ տեսաւ ըսքանչացաւ,

Կարծես մոռցաւ իւր բոլոր ցաւ:  
 Վերջին ճիզը թափեց գընաց ջրին քով  
 Եւ ըստացաւ նոր կեանք՝ նոր ոյժ և կորով:  
 Այն՝ կեանքն է բարձր ու նեղ սար,  
 Ուր ամեն օր անդադար.  
 Կեխէ՛ կիջնէ՛ աղքատ որեար  
 Հանապազորդ հացին համար:  
 Իսկ կազուրիչ կենդանի շուր,  
 Դալար՝ ծաղկունք՝ կենսաբոյր,  
 Այդ է քաղցրը մի պարզ ժըպիտ  
 Կամ մի անկեղծ խօսք ճըշմարիտ.  
 Որն անցւորին դառն ու գըժւար,  
 Քաղցրացընէ ճանապարհ:



ԽԹ

ՈՒՂՏ ԵՒ ԷՇ

Շատ աշխատելով հասան մինչ աշուն,  
 Վայ եկաւ իշուն և ուղտին կաշուն:  
 Տէրն որ տեսաւ սոցա վիճակն յուսահատ,  
 Առ ժամանակ թողուց ազատ:  
 Էջն և ուղտը մըտան պարարտ ազարակ,  
 Ուր գըտան շատ կէր ու ճարակ.  
 Եւ հանգչելով աշունն իսպառ,  
 Դարձան եղան մի մի տակառ:  
 Օր մի էշը Լասէր ուղտին «ն՛ բեռի,  
 «Կըրակի պէս սիրտըս կերի,  
 «Կըզգամ հրճանք՝ խինդ և ծիծաղ,

«Կուզեմ երգել մի քանի տաղ:  
 «Չայնըդ կարէ-կանչեց ուղար-սյ բորոտ,  
 «Քո զըռոցին ո՞վ է կարօտ:  
 «Ըզգոյշ եղիր եթէ զըռաս  
 «Մեզ կը բերես մեծ վընաս:  
 «Տէրըս իսկոյն, կարծելով որ մենք արդէն  
 «Ուժւորել եմք պարարտ արտէն,  
 «Դարձեալ ըզմեզ բեռան տակ  
 «Կանէ թըշւատ նահատակ:  
 Լըռեց էշը անցաւ մի օր,  
 «Ըզգաց դարձեալ նա խանդ մի նոր.  
 «Քեռի-կասէր-կը ճաթիմ ես:  
 «Թող տուր գոռալ Երեքովի փողին պէս,  
 «Կայրիմ տոջոր սըրախս խանդէն  
 «Ձի ոչ եղովը՝ ոչ Լաֆօնաէն,  
 «Ձեն ունեցել, կասեմ անկեղծ,  
 «Ինձ նըման էշ բանաստեղծ»:  
 Ուղտն որոտաց-«լըռէ յիմար՝  
 «Դու բանաստեղծ իշոց համար,  
 «Որչափ վառի քո սըրտին բոց,  
 «Դարձեալ երգէդ կեխէ զըռոց  
 էշն համբերեց մի քանի օր,  
 Բայց ՚ի գուր էր ջանքը բոլոր,  
 Չը դիմացաւ տընկեց իւր պոշ  
 Եւ զըռզըռաց անեղնագոշ:  
 Տէրն որ լըսեց իւր իշուկին ուրախ երգը  
 Իսկոյն մըտրակն առաւ ձեռքը,  
 Քըշեց զանոնք խեղճ՝ ակընկոր,  
 Դէպ ի ախոռ:  
 Այն օրէն վերջ ուղտն ու էշը անգաղար,

Կաշխատէին չարաչար:  
 Օր մ'ալ սոքա բեռնաւորաճ լեռան պէս,  
 Մըտան գետմը և մինչ հասան ջըրին կէս:  
 էշն ըսկըսաւ ընկղմելու ջուրն ՚ի խոր,  
 Տէրը իսկոյն բեռն իշուկին իւր բոլոր.  
 Տեղափոխեց ուղտին քամակ  
 Համազճակ:  
 Թէպէտ էշը թեթեւալով կերթար լող,  
 Բայց դէմ դընել ջըրընթացին չէր կարող.  
 Տէրն որ տեսաւ յուսահատեց առջի բերան  
 Յետոյ էշն ալ առաւ դըրաւ ուղտին վերան:  
 Ուղտն որ հասաւ ջըրին խորը,  
 Ընկղմելով մինչև փորը.  
 «Թ'ոնիկ—ասաց—կը յիշես դու երգդ ու տաղ  
 «Հիմիկ ես ալ սաստիկ կուզեմ պար ու խաղ:  
 էշը սոսկաց  
 Քեռի առաց  
 Խընդրեմ՝ հանդարտ, քայլըդ, քարշ առ,  
 Որ չըսահիմ քամակէդ վայր.  
 Մի քանի քայլ՝ ուղտը լըռեց  
 Յետոյ կըրկնեց:  
 «Թ'ոնիկ, իրաւ չեմ դիմանար,  
 «Երգէ խընդրեմ, որ բըռնեմ պար:  
 Ասաց այդպէս և ըսկըսաւ կայտուել արագ,  
 Մինչ այն կէտին, որ խայտատակ.  
 էշը ընկաւ գըլոր՝ գըլոր՝  
 Սուզեց զընաց ջուրն ի խոր:  
 Տէրն հագիւ հագ՝ զինք քարշեց վեր  
 Կիսամեռ...  
 Փըպտաց ուղտը թոռնիկ—ասաց

Երգիդ՝ տաղիդ՝ փոխադարձ  
Իմ կաքաւըս քեզ լինի վարձ,



Ս

Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ

Ադամորդիք մի կարծէք, որ դուք մենակ,  
Զարգանալու էք ընդունակ,  
Տատանելով մի ձախ մի յաջ,  
Մի քանի քայլ կերթաք տուաջ:  
Ձեր եղբայրքն ալ, թէպէտ անբան, բայց կենդանի,  
Ձեզ թէպէտ խորթ, բայց ընտանի,  
Անցեալ օրեր լերան կողով  
Հաւաքեցին մեծ ժողով:  
Կային խոզեր՝ աւանակ՝ էջ՝  
Հորթ՝ այծ՝ կով՝ եզ ու գոմէշ,  
Ոչխար ու ձի կատու մըրդոտ,  
Մի քանի շուն և քոթոտ:  
Ժողովն իսկոյն ընտրեց մի ձի ատէնախօս,  
Նիստին լինել նախագահ  
Եւ քարտուղար մի առոյգ խոզ  
Գործի մէջ խոր կարգապահ:  
Ձին բարձրացաւ սասց — «յարգոյ պարոններ,  
Պատիւ ունիմ, շընորհիւ ձեր.  
Մի քանի խօսք դարուս հոգւոյն համաձայն,  
Մի քանի միտք ազատ ու լայն,

Ասել՝ պարզել՝ յօգուտ եղբարց չըքաւոր,  
Որոնց յոյսն եմք՝ մենք բոլոր:  
Փամանակ է՝ թողուլ անյագ մեր ետը,  
Եւ ընկերնիս սիրել իբրև մեր կէսը.  
Այն ճարակէն, որ կըստանամք օրէօր,  
Հանենք մի մաս խեղճ եղբօր,  
Ան ատէնը շինիր ազքատ մեր մէջը  
Եւ կը լուծւի բազմադարեան մեծ վէճը:  
Ամեն կողմէն քաջէ՛ քաջէ՛ կանչեցին,  
Ելէք, մանկունք, կեցցէ ձին:  
Սրիք՝ ընտրենք մասնաժողով արժանի  
Յանձնենք անոր այս սուրբ գործը պիտանի.  
Ասին այսպէս քրւէ արկին  
Եւ ընտրեցին ըստ կարգին  
Մի ձի՝ մի շուն՝ երկու էջ  
Եւ երկու խոզ մի գոմէշ:  
Եօթնից մինը՝ ցեխն՝ ի թաթախ պարարտ խոզ  
Եւ ՚ի բրնէ լաւ պերճախօս:  
Հըռչակեցաւ միաբերան նա բոլոր  
Նորատապակ անդամներուն զըլխաւոր:  
Եընօրն ունիմ — սասց — սի տէարք, խոր սըրտէս,  
Ձեր օգնութեամբ յուսամ ես,  
Որ այդ գործը անխոնջ ու քաջ  
Մենք կաշխատեմք տանել առաջ:  
Բայց ինչպէս որ մենք ունիմք մեր,  
Ամեն օրեայ ըզբաղմունքներ.  
Պէտք է վարձեմք գործին համար  
Մի օգտակար տէսուշ յարմար:  
Անդամները պատկառանօք յօժարակամ  
Ընդունեցան հախագահին վեհ պատգամ:

Տեսնես իսկոյն ձին այդ գործին  
Արաջարկեց փորձ այծին:

Խոզը ասաց— «այն այդ շատ շահաւոր՝

«Եթէ չիլնէր նա արևոր:

«Գործին պէտք է երիտասարդ՝ աշխոյժ՝ արագ՝

«Որնոր սահի կաթին վերայ գերդ կարագ:

«Այն՝ այն՝ ձայնեց էշ մը զըռալով

«Ուղիղն ասեմ՝ իմ կարծիքով

«Մեր զըրացի քոթոտէն գատ

«Չըլինիր տէսուչ հարազատ:

«Ապրիս՝ կանչեց խոզը էշին,

«Շատ բարակէ գըլխուդ կաշին,

«Ո՛վ կարող է քոթոտէն վեր

«Լինել գործին շահաբեր:

Չին բարկացաւ որոտաց

«Ո՛վ է քոթոտն այծին դիմաց:

«Այժն իւր կեանքին անցել է շատ ժայռ ու սար,

«Եւ շատ անգամ գայլոց բերնէն քանասար,

«Ազատել է քոյր՝ եղբայր՝

«Յոյց տըւելէ անոնց ուղիղ ճանապարհ:

«Նա եղել է միշտ իւր հօտին առաջնորդ

«Չէ խընայած կեանքն ու մորթ:

«Եւ դուք հիմայ մի խեղճ քոթոտ մեղկ և անգործ

«Վեր կը դասէք այժէն փորձ:

Հոն խոհական մի ծեր կատու:

«Մի վըրդովիր եղբայր—ասաց—՛ի դուր դու,

«Յաւալի է, որ չես ճանչնար

«Իու քոթոտին ձիրքն ու հանճար:

«Այն է քըծնիլ, պոչ խաղցընել,

«Յետի թաթից վերայ կանգնել:



### ԾԱ.

#### ՊԱՆԴՈՐԱՅ

Պըրումեթէն իւր նըբբագործ

Մատեներով ճարտար ու փորձ,

Աւարտելով հըրաշագեղ Պանդորան,

Գեղանըկար երկնային դէմք և իրան.

Ինքն իւր գործով ըսքանչացաւ և ուզեց,

Որ նա լինի էակաց մէջ վեհ ու մեծ.

Դազատուգողի գողացաւ հուր երկնաւոր,

Եւ արծարծեց Պանդորայի սըրտին խոր

Կեանք և հողի բանաւոր:

Շընորհալի էր նորա ձեն ու հասակ,

Նա բընութեան էակներուն էր պըսակ,

Պըրումեթէն առ ի ծածկել իւր ոճիր,

Արամազդէն խընդրեց վըճիռ,

Եւ ապա իւր շըքնազազէմ Պանդորան

Հանեց ի ցոյց երկնից խորան,

Իիք՝ դիցուհիք երբ գայն տեսան,

Ըսքանչացան գեղեցկուհւոյ տեսլեան վերան:

Գովեց Արամազդ, զսվեց դից կաճառ,

Գըտան Պանդորան անման՝ անճառ:

Ամէն մէկը մի մի պարգև առանձին

Նըշան սիրոյ, յարգանք կուսին ձօնեցին:

Ամենքէն վերջ արքայն երկնից շանթանձիգ,

Նըւիրելով ոսկի արկղիկ գեղեցիկ,  
 Արտաւնդոստ արւեց պատէր, որ երբէք,  
 Նա չըբանայ նըւիրական արկղին փեղկ:  
 Պատկառանօք ընդունեցաւ Պանդորան,  
 Համեստութեան երկու վարդունք ծիր-ծիրան,

Ծաղկեցան գիրգ այտից վերան:

Այն օրէն վերջ

Նա փափկութեան զըրախտին մէջ.

Ոլիւմպոսին իբրև նոր հարս սիրասուն  
 Կամ երկնային անսերմ ծընունդ գերաբուն  
 Կապրէր հանգիստ բարէփաստիկ  
 Քանի որ նա սուրբ կը պահէր պատէր սաստիկ:  
 Բայց եղևկ որ նորա անմեղ սըրտին խոր,  
 Սըպըրդեցաւ բանասարկին շունչ թունաւոր:  
 Ինքնասիրութեան և նախանձուն կիրք,  
 Նորաստեղծ կուսին, նորածին գերգ ձիրք,

Տանջէին զինքն առտու երեկ

Գըրգըռէին գիշեր ցորեկ,

Մինչ այն կէտին, որ խեղճ կոյսը անհամբեր,

Արամագղին ժրտեց ժըխտել խիստ պատէր.

Չըգիմացաւ արկղը բացաւ

Ուրկէ պոռթկաց մահ ու ցաւ.

Եւ հեղեղեց աշխարհ բոլոր

Օր է օր:

Չարհուրեցաւ՝ սոսկաց կինը շանթանար

Երբոր տեսաւ, որ միայն իւր կըրքին համար,

Ծընան չարիք անհամար:

Իսկոյն գիտեց իւր արկղին խոր,

Եւ բըննելով զայն նոր է նոր,

Միայն յոյսը վերջին կըտակ,

Գըտաւ կըպած նա անոր տակ:  
 Այո՛ յուսով կտունենք մեր քայն առաջին  
 Եւ նոյն յուսով կուտանք կենաց շունչ վերջին:



ԾԲ

ՏՂՈՅԿԱՆ ՈՒՂՏ

Տիրեց երեկոն արփին լուսահեղ,  
 Թագւորի նըման ծիրանին շըքեղ  
 Վըրան առած երփնավառ,  
 Խոնարհեցաւ իւր 'ի մար:  
 Նորա յետին կակուղ՝ շողեր վարդամատ,  
 Կոսկեգձէր Սահարային անապատ,  
 Նոյն միջոցին բազմագունմար մի քերվան,  
 Յետ ընթացից բոլոր օրուան,  
 Գեղազլարճ Ովասիսի մ'օտենար  
 Գիշերային առնել հանգիստ ու դադար:

Պըճնեցաւ երկինք ոսկի աստղերով,  
 Հովհարէր գեփիւռ փափուկ թևերով,  
 Քընեց քերվանը, քնեցին մարդիկ  
 Դալարին վերայ քաղցը ու երջանիկ:  
 Լուսնածագին ուղտ մի մատակ

Աըմաւենոյն շուքին տակ.

Յետ երկունքից յոգնավաստակ

'ի լոյս ծընաւ մի զաւակ.

Մինչ ընկերներն 'ի սէր՝ 'ի յոյս՝

Կը մաղթէին աչքի լոյս,

Տըրոցկանը սըրտին խորէն

Շնորհ բերէր մաղթանքներուն փոխարէն.

«Թէպէտ—կասէր—ծընայ զաւակ,

«Բայց զաւակը իւր զաւակին է օժանդակ,

«Նա իմ ուսէս բեռն առնելու փոխարէն.

«Պիտի խըլէ բերանէս փուշն ու պարէն:



### ԾԳ

#### ԺԱՅՈՒ ԵՒ ԿԱԹՈՒԼՆԵՐ

(Առ մեծարգոյ Ստեփաննոս Քիւրկճեանի նւիրեալ)

Քարանձաւին ձեղունն ի վայր,

Աղօտնայրոյս՝ մամապատ,

Կաթիլ՝ կաթիլ՝ արտօսըածօր,

Կալլակէր շուր անարատ.

Կայլակներուն ճիշտ ընդ ներքե

ժայռ մի ողորկ տափարակ.

Հանգչէր խոնաւ հողուն վերե

Ձեան կոյտի պէս սառնորակ:

Նա թէպէտև առջի բերան,

Կը ծիծաղէր ջրբին վերան,

Բայց երբ տեսաւ, որ շուրն յամառ,

Չէր զաղարէր ձրմեռ ամառ,

Եւ մունջ ու լուրջ՝ կոծէր կաթ՝ կաթ,

Կարծրը բարը, կարծես երկաթ:

Այն ատէնը ժայռը ըզզաց

Կամաց-կամաց,

Որ իւր ըստւար՝ կուռ քամակ

Ըսկսել էր խորանալ ծակ:

Սաստիկ սոսկաց, բայց կեղծելով իւր վերհեր,

Չըբին կասէր իբրև անհոգ՝ անտարբեր.

«Այ շուր հեղուկ

«Քեզ բիւր եղուկ.

«Որ դու անմիտ և յամառ

«Ի դուր տեղը կայլակներըդ անհամար.

«Ջարդ բուրթ կանես կուռ քամակիս իմ վերև

«Տարի տարւոջ կը փըճանաս ակներև.

«Եւ ինձ տաղտուկ՝ ձանձիր՝ անթիւ

Կը պատճառես զիշեր ու տիւ.

«Լաւ է փոխես ուղիդ մուրը,

«Որ չը կորչիս դու բոլոր:

«Կը սխալիս — ասաց — շուրը՝ ժայռ վըսեմ,

«Քո կարծիքդ է քարանձաւիդ պէս նըսեմ.

«Հոգ մի տանիր կայլակներուս իմ արկար,

«Մինն որ ջարդի՝ միւսմը ծընի անդադար:

«Իսկ մեր ուղին՝ բնութեան ձեռք անխոտոր

«Գըծել է մեզ, որ հեղւինք մենք հողն ի խոր:

«Ուստից՝ յետոյ բոլոր ուժով

«Այեծածան իբր ինչ մի ծով,

«Ենենք ՚ի լոյս արձակ՝ ազատ

«Յորդ ոռոգեմք՝ երկիր մեր մայր հարազատ:

«Ուստի՝ լաւ է, սահւիս մեզնից դու հետի,

«Մեզ գերելով՝ չըլնիս մեզ հետ միշտ գերի:

Եւ իրաւի անցան՝ գացին՝ տարի ու դար,

Պինգ՝ կամապաշտ՝ ժայռը յամառ,

Հետըզհետէ քըբըբըբեցաւ

Աւագ դարձաւ:

Իսկ շուրն անվերջ՝ արտօսըասոր,

Կը կայլակէ մինչև ց՝այսօր:

Ջուրն որ կաթի

Քար կը ճաթի:



ԾՊ.

ԱՌՈՒԱԿ ԵՒ ՃԻԻՂ

Լերան կողերէն կիջնային արագ,

Պըտոյտ առ պըտոյտ առուակներ բարակ.

Ջինջ ալիքներ խոխոջ՝ խոխոջ,

Քերեն ափեր ծաղկնաբողբոջ:

Առուններէն մինին վերան

Քամին ձրգեց ճիւղ մը ծիրան.

Որն որ լողար կամաց՝ կամաց՝

Տեղ՝ տեղ՝ կելնէր ու կիջնար ցած.

Խըրէր ափի դալարին խոր՝

Ուր կըսպասէր ալիքներ նոր.

Բայց առուին ոյժ չէր բաւական,

Տանել ազատ մի ճիւղն անգամ.

Նա կը շարժէր զայն հազիւ-հազ

Ամբողջ ժամը մի քանի կազ:

Ճիւղը տըժգոհ վերջապէս

Գանգատելով կասէր այսպէս:

«Այ խեղճ առու, ջուր եմ կասես կը պարծիս

«Թիզ մի ազատ դու կարող չես տանել զիս:

«Կը կըլզըլաս՝ կը կարկաշես անդադար

«Չանձրացուցիր վերջապէս ինձ չարաչար:

«Լաւ է ցամքիս չորանաս

«Ջուր լինելը մոռանաս:

Առուն ասաց— «մի վըրդովիր ճիւղ սիրուն

«Մի մեղադրեր, որ ես նեղ եմ ու ծանծաղ,

«Անձրեածին երբոր հասնի յորդ գարուն

«Ան ստէնը ես կը հեղւիմ յաջ ու ձախ.

«Ուստի լըռէ համբերատար,

«Դատապարտել զիս մի փութար:

«Քաղցրէ տոկալ ամեն չարի

«Որուն վերջը կըլինի բարի:

Անցան օրեր հասաւ գարուն,

Եւ ուռեցաւ ծանծաղ առուն,

Նա մանուսան, գըլոր՝ գըլոր՝

Ի գիլ գալով օրը բոլոր,

Հասուց ճիւղը գետին բերան

Ուր լողային նաև ու գերան.

Ասաց— »անա քեզ գետ խոր և ընդարձակ

«Գընա՝ լողա՝ որչափ ուզես համարձակ.

«Օ՛րը գայ՝ բարին հետը

«Առուններէ ծընւի գետը:

Ծով՝ ծովանայ ջըրէն բարակ,

Հրգեհանայ կայծէն կըրակ:



ԾԵ

ԱՌԻԻԾ ԵՒ ԽԼՈՒԻՐԴՆԵՐ

Օր մ'առիւծը կոյս անտառին դարևոր,

Ծառերուն տակ նըստած խոկար ակընկոր,

Այդ վիթխարի հըսկայագօր

Մարմնոյն հոտէն չորս զին բոլոր,

Հաւաքւեցան խումբ առ խումբ  
 Առին ակումբ,  
 Մեծ բազմութիւն խըլուրդներու կուրակնեայ,  
 Որդիք մըթան ըստորերկրեայ.  
 Իսկ թաւաստե ծառին վերև  
 Ոստերուն մէջ թանձրատերև.  
 Ըստւարատուան աքիսներու առոյգ պար,  
 Կայտուէն՝ խաղան վեր ու վար:  
 Առիւծն որ տեսաւ բազմութիւ խըլուրդ,  
 Մասնաչափ մարմնով գըծուծ ժողովուրդ,  
 Վեհ աչերէն արբայական շողաց ժըմիտ  
 Գորովելով կասէր այսպէս բարեմիտ:  
 «Ուրախացէք ո՛վ բընութեան ճիղմ գաւակներ,  
 «Վայելեցէք նորափըթիթ գարնան օրեր,  
 «Ձերմ կենսատու արևուն լոյս գեղաժիծաղ  
 «Թո՛ղ բորբոքէ ձեր սըրտերը սառի պէս պաղ:  
 «Թո՛ղ փարատէ ձեր աչերէն կարճատէս  
 «Թանձրը քօզը գիշերւան պէս:  
 «Թողէք՝ ելէք՝ խոր ծակերը գետնափոր,  
 «Եւ փընտուեցէք ձեզ աւէտեաց երկիր նոր:  
 Կոյր խըլուրդներ մի միայն ձայն առիւծին  
 Ահով՝ գողով՝ լըսեցին  
 Եւ այդ ազդու ճառին վերան  
 Իրար անցան առջի բերան  
 Յետոյ քիչ քիչ հոն բոլոր  
 Խոր խիկարներն այլոր,  
 Խօսեն՝ գատեն՝ շըրջեն արագ.  
 Հետգհեաէ գարձան կըրակ.  
 Նոցա մէջէն մի կընճռամիտ ծեր խըլուրդ  
 Գըլուխ կանգնած պատգամկուտար ու խորհուրդ.

«Ո՛վ է դա, որ կը ժըտի տարածել թոյն  
 «Ձընջել կուզէ խըլուրդներուն ազգն ողջոյն,  
 «Կը քարոզէ թողուլ թերափ՝ տուն հայրենի,  
 «Ենե՛լ՝ գընա՛լ՝ երկիր օտար վայրէնի.  
 «Մեր պատմական կըրօնքն ու ծէս անփոփոխ,  
 «Կուզէ անել ոտնակոխ:  
 «Ծօ՛՛ ի՞նչ կըրօնք և ինչ ծէս,  
 «Գոռաց առիւծն ամպի պէս,  
 «Ի՞նչ կայ ասէք, արևէն դատ,  
 «Ոյժ կենսատու անարատ.  
 Ի՞նչ կայ արդեօք լոյսէն վեր  
 Յըրբող՝ պարզող մութ գիշեր:  
 Այո՛՝ թողէք, թողէք, ձեր խոր գերեզման  
 Ուր կենդանի գիակներու ճիշտ նըման  
 Կապրիք գրկած օգէն առողջ  
 Եւ արևէն կենսաբողբոջ:  
 Մինչ առիւծը կը մըռմըռար ՚ի վըրդով,  
 Վիրաւորած հողով սըրտով,  
 Հոն նորա մօտ ծառին վերև  
 Աքիս մի ծեր թաւն ՚ի տերև.  
 Կանչեց «իշխան մի նեղանար դու ՚ի գուր,  
 Այդ մըկները ՚իճնէ են կուր:  
 Ժըպտաց առիւծն ասաց ձայնով տէրունի  
 Խօսքս անոր է ո՛վ աչք ունի:  
 Այո՛՝ ՚ի ծնէ կուրին համար,  
 Խաւարն է լոյս, լոյսն է խաւար...



ԾԶ

ՀԱԻ ԵՒ ՍՍԳ

Օրին մէկը մեծ բակին մէջ  
 Կէս օրուան կուշտ ճաշիկէն վերջ  
 Հաւեր՝ թռչներ ամեն հասակ  
 Բազմատեսակ  
 Մինչդեռ հանգիստ կը դբօսնուին ոտառոտ,  
 Հոն կովերուն գոմին մօտ,  
 Մէկմնալ յանկարծ՝ ի՞նչ տեսնաս,  
 Կուտ՝ կուտ՝ կուտաս՝ կուտ կնւտաս,  
 Ճըւար մի հաւ գոմին խորէն  
 Վիրաւորած կարծես փորէն:  
 Կը հանէր մեծ ճիւղ աղաղակ,  
 Որ իմանայ բոլոր քաղաք  
 Դուռ՝ դըրացին՝  
 Յարքն ու արժէքն իւր գործին,  
 Փետրաւորներն ահաբէկ  
 Ըշտապեցին բոլորը մէկ,  
 Եկան մըտան կովերուն գոմ՝  
 Ի՞նչ տեսնան հոն:  
 Հաւը ճըչէր իւր ձուի մօտ,  
 Կովը լըզէր իւր նոր-ծին հորթ,  
 Սագը հարցուց՝ հաւ խաթուն,  
 «Ո՞վ ձեզանից կովը թէ դուն,  
 Ածելէ ձուն:  
 Աղաղակիդ հայելով  
 Դու պարտ էիր լինել կով,

Իսկ այդ համեստ՝ լուռ կովուն  
 Վայելուչ էր ածել ձուն:  
 Մենք ալ երբեմն փոքրիկ մի լուն  
 Կը մեծացնենք հաւսար ցըլուն:



ԾԷ

ՉԿՆՈՐՄ ՊԱՏԱՆԻ

Օր մ՝ արագընթաց գետի մէջ պըղտոր,  
 Ուր գորտ՝ ձուկ և օձ կապրէին՝ անդորր.  
 Չորս հինգ առոյգ և կայտառ  
 Պատանիներ անդազար  
 Որոնէին բոյներ բոլոր  
 Ջուրն ՚ի խոր:  
 Նոցամէ մինն տեսնաս յանկարծ,  
 Խընդութէնէն խելագարած,  
 Ճըչէր՝ կանչէր՝ ծիծաղ-ծիծաղ,  
 Սըրսըռալով ալեաց մէջ պաղ,  
 «Տըղանք-կասէր- գետին բոլոր,  
 «Ես եմ հիմայ թագաւոր:  
 «Չի որսացի ձրկներուն վեհ թագուհին:  
 «Ո՞վ ինչ սահուն՝ ողորկ՝ մարմին:  
 Ասաց հանեց ձեռքը շրէն  
 Եւ թագուհւոյ փոխարէն.  
 Բազկին վերայ մի օձ խոշոր,  
 Կը գալարէր երփնաշոր:  
 Ջարհուրեցան պատանիներն ահաբէկ  
 Սոսկըստակին բոլորը մէկ.  
 Այդ վըտանդէն յանկարծահաս

Թողին փախան հազիւ-հազ:  
 Պատանիներ անմեղ՝ անփորձ,  
 Ըզգոյշ եղէք ճշկի փոխան որսալ օձ:



ԾԹ

ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐ

Ամառնային խաղաղ գիշեր,  
 Նուրբ թևերով սևափետուր,  
 Իբր հովանի նըսեմաստուէր,  
 Կը հովհարէք սիւգ կենսատուր:  
 Ծաղկանց՝ ծառոց ոստ և տերև,  
 Իբր օրօրոց իւրեանց վերև,  
 Կը ճօճէին թռչներ՝ միջատք քրնով խոր,  
 Որոնց սոխակն երգէր քաղցրիկն իւր օրօր:  
 Մէլմնալ յանկարծ պարտեղզանին լուսամուտ,  
 Լուսաւորեց ճըրագ փայլուն վառի վառ,  
 Նա իր չորս գին փարատելով թանձրը մութ.  
 Կոսկէզօճէր բոյս ու ծառ.  
 Ծառոց մէջէն լոյսն որ տեսան արթընցան  
 Հագարաւոր թիթեռնիկներ ցիրուցան.  
 Կասէն սվ ինչ հըրաշք է նոր,  
 Որ, մըթան մէջ ծագեց մեզ օր,  
 Լոյս մեզ՝ լոյս մեզ՝ հուր կենսավառ,  
 Մենք անփարատ թողունք խաւար.  
 Վառենք մեր մէջ լուսոյն կըրակ,  
 Դառնանք մի մի փայլուն ճըրագ.  
 Լուսաւորեմք լուսով ազատ

Խեղճ միջատներ մեզ հարազատ  
 Այս պէս ասին թըռան գացին  
 Ճըրագն խաղառ պաշարեցին,  
 Նորա չորս գին թըռչրտէին մանուաման,  
 Իրեն զիրինք կարծէին լոյս աննրման  
 Այն աստիճանի խըռնեցան արագ,  
 Որ մաս մի հըրոյն գընացին ճարակ,  
 Մաս մ՝ ալ թևերով խանձեցան բոլոր,  
 Կուրացան աչեր, ցըրւեցան մոլոր:  
 Կամաց խօսենք թիթեռնիկներ չիմանան,  
 Որ չը խընդան մեր վերան.  
 Զի մեր մէջն ալ նոցա նըման լուսաւոր  
 Կը պատահի ամեն օր:



ԾԹ

ՀԱԻ ՍՍԳ ԿԱՏՈՒ

Տիկին հաւը մայր ըզգայուն խանդակաթ,  
 Շըրջափակւած իւր ջուտերով հարազատ,  
 Կը փորփըրկեր գեանին երես,  
 Ճանկերով սուր երկաթի պէս:  
 Մեծ եռանդով կորոնէր հունդ և որդեր,  
 Իւր ջուտերուն շամբ և կէր.  
 Մէլմնալ յանկարծ ծառոց վերէն  
 Թըռաւ բազէ մ'անօրէն,  
 Արթուն մայրը ըզգաց վըտանգն ահաւոր,  
 Կըտկըտալով ժողեց ձագերն իւր բոլոր  
 Եւ ամփոփեց իւր մայրենի թևերուն տակ

Նոցա սիրուն վրճուեց լինել նահատակ:  
 Այդ միջոցին կատու մ' ատակ,  
 Որն իւր ձագը կը յօշատէր ծառին տակ,  
 Կարմընամ քեզ ասաց տիկին,  
 Որ չես գիտէր դու կեանքիդ զին,  
 Զուտերն են շատ  
 Իսկ դու մէկ հատ.  
 «Երբոր բազէն վեր առնէ քեզ  
 «Դու շուտերըդ ում պիտ թողնես.  
 Հաւը ասաց—«հոգ մի տանիր,  
 Այլ ուշ գիր  
 Ես կը թողում գանոնք նորա  
 Որն կը հըսկէ մեզմէ վերջը մեր վերայ:  
 Իսկ իմ կեանքն է անոնց համար,  
 Որոնց կեանքին էս եմ պատճառ:  
 Վըրկայ բանին հոն սագ մի ծեր,  
 «Կատու—ասաց— երբ սառին մէջ՝ վառեն կայծեր,  
 Այն ատէնը դու մայրական կըզգաս սէր:  
 Զի քեզ համար քո փորէն գատ,  
 Զըլիներ որպի հարագատ:  
 Զեմ հաւատար սրգիք մարդկան,  
 Որ որդեկէր կատուիս նըման  
 Անգութ մայրեր մեր մէջն էլ կան:



Կ

ԿՈՍՄՈՊՈԼԻՏ ՀԱԻ

Մի բընասէր ալևոր,  
 Որն բընութեան խաղեր բոլոր,  
 Զընեկով խոր ամեն օր,

Կը հիանար նորից-նոր:  
 Սա իւր հաւին ուզեց փորձել գութն ու սէր,  
 Որն որ արդէն թըխսել կուզէր:  
 Իրրաւ նորա տակ ձուեր գանազան,  
 Հընդկահաւ ու հաւ՝ սագ՝ բագ և ֆագան:  
 Հաւը հըլու հընագանդ,  
 Ընդունեցաւ ծերուն աւանդ:  
 Թըխսեց իբրև պարտը կատարեց սըրբագան,  
 Ի յոյս ծընաւ սիրուն շուտեր գանազան:  
 Հաւաքելով գանոնք չորս զին,  
 Ամեն մէկին սէր ցոյց կուտար կաթողին.  
 Կը խնամէր՝ կը կերակրէր անխըտիր,  
 Եւ վարմունքը նորա չէր կեղծ ու պատիր:  
 Զի ձագերը այլատիպար,  
 Թըւէր նըմա միմեանց նըման քոյր՝ եղբայր:  
 Օր մի շունը գարմանալով— ասաց— մարիկ,  
 «Զեմ հասկընար քեզ ինչ կարիք,  
 «Ժողուել զըլխուդ շուտեր օտար,  
 «Եւ աշխատել նոցա օգտին անգաղար:  
 «Հոգալ գանոնք քո գաւկիդ պէս,  
 «Որոնք իսկի չեն նըման քեզ:  
 «Հաւը ասաց շուն—պարոն,  
 «Այդ հաւերունն է կըրօն:  
 «Իրաւ շուտերս թէպէտ մարմնով են տարբեր,  
 «Բայց մի և նոյն կըրեն սըրտեր:  
 «Զի երբոր էս, օր քան զօր  
 «Իմ ջերմ սըրտիս հուրը բոլոր,  
 «Թափեցի այդ ձուոց վերան  
 «Նոքա էին միմեանց նըման:  
 «Տէրն որ լըսեց ըսքանչացաւ

Ասաց— «այ հաւ,

«Ո՛ւր էր թէ մարդ

«Քո կէսին չափ ճանչնար իւր պարտ,

«Ան ատէնը մեր աշխարհը խեղճ ու ամբողջ

«Երջանկութեան լինէր զըրախդ



### ԿԸ

#### ՅԱՌԱՋԱԴԷՄ ԶԻ

Գեղջուկ Կիկոն ունէր մի հաստ,

Բայց շատ աշխոյժ գեր զըրաստ.

Կը համեռէր ըստէպ անգամ.

Համեռով՝ նուրբ կիտուած՝ փարթամ:

Զարդը զարդին նա կը պըճնէր զայն սիրուն

Ճարմանդ՝ օղակ՝ բոժոժներով պըսպըղուն,

Նա երբեմն զայն կը հեծնէր,

Զին սիգածեմ կը նազէր,

Նա երբեմն զայն կը լըծէր

Զին սըրընթաց կը վազէր:

Այս փառքերէն զըրաստին խելք ման եկաւ

Ինք զինք կարծեց նա իրաւ

Իւր գեղջկակից ձիանց բոլոր

Գըլխաւոր...

Իւր ընկերաց վըրայ նայէր ու խըղճար,

Որ ՚ի բընէ նոքա են խեղճ և անճար:

Իսկ ինքն իբրև բարձըր հանճար,

Նըժոյգներուն ձըգտէր դասել ՚ի կաճառ:

«Ո՛վ ինչ— կասէր— բաղդս է անգութ՝ անարդար,

«Որ իմ յատուկ կոչումէս դուրս և օտար.

«Զիս թողել է այս վայրէջի գեղիս մէջ,

«Աննըպատակ՝ զուրկ և խեղճ:

«Ինձ պէտք է լայն, ինձ ընդարձակ ասպարէզ,

«Ուր տեղ կարող լինեմ ցոյց տալ ոյժն իմ ես:

Գըրաստին իղճ լըսեց բաղդը խափուսիկ

Սուսիկ՝ փուսիկ՝

Ղըրկեց նորա նա մի օր

Իշխան մ'հարուստ թըմբեկափոր:

Որն որ երբոր տեսաւ ձին

Հաւանելով յարմար զըտաւ իւր գործին:

Տըւեց գեղջկին մի լաւ գումար,

Գընեց իւր տան պէտքին համար:

Գըրաստն որ ըզգաց բաղդն իւր յաջողակ,

Որ թողլով գիւղը պիտ գընայ քաղաք,

Խընդութէնէն թընդաց սիրաը մինչ ի խոր,

Գուշակելով նոր կեանք, նոր գործ և յոյս նոր:

Աչքը արցունք՝ սիրան ի գորով,

Ընկերներուն ճորով-մորով

«Ողջամբ կեցիք— կասէր— որդիք քաջ ձիանց

«Մի մոռանաք մըշտանըւէր ձեզ իմ անձ,

«Ընդունեցէք վերջին կայծեր ջերմ սիրոյս

«Մի երկբայիկ դուք իմ վերայ դընել յոյս:

«Օրհնեցէք զիս, որ բաղդն յամառ վերջապէս,

«Խոնարհելով բացաւ ինձ լոյս ասպարէզ,

«Ուր պիտ գործեմ և իմ բոլոր քըրտանց զին

«Ես պիտ ձօնեմ իմ ազգին:

Ասաց— գընաց, անցան օրեր ամիսներ,

Օր մը Կիկոն գոյգ մի ձիեր,

Լըծեց գընաց տօնավաճառ

Ծախել ցորեան և հաճար:  
 Ինչ տեսնան հոն ձիերն աղեկ,  
 Մեր գրբաստը վատած՝ չորցած՝ գերդ եղէգ,  
 Ազբի կառքին լրծւած անդօր  
 Քարշ կը տանէր ակընկոր:  
 Լաւ է գեղին մէջ առաջին  
 Քանց քաղաքի մէջ վերջին:




ԿԲ

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Գիշերն էր խաղաղ մեղմաշող լուսնեակ  
 Կը հեղոյր լոյսը կոհակ՝ առ կոհակ,  
 Կոյս անտառքն խոր  
 Կը հանգչէր անդորր.  
 Առիւծն ամեհի լերանց թագաւոր:  
 Լուսնեակին լուսով՝ գարնան կայծերով  
 Վառւած բորբոքւած սոխակներ սիրով  
 Արձակելով գեղգեղ քաղցր և սիրուն  
 Հոչակէին սէր սըրտառուչ և գարուն:  
 Առիւծն անոյշ քընոյն խորէն  
 Կըսքանչանար այդ դաշներգակ ձայներէն:  
 Եւ ամոքւած սըրտով բոլոր  
 Նոր է նոր  
 Միւս օրն իսկոյն կանչեց ժողով.  
 Գազանները ըշտապեցին ահով դողով:  
 Նա մըռընչեց խոր, ինձ մըտիկ արէք,  
 Օգտակար և նոր ձեզ կուտամ օրէնք.

«Բոլորուեցան անթիւ դարեր փոխ առ փոխ  
 «Մեր վայրենի կեանքը մընաց անփոփոխ:  
 «Ժամանակ է, որ ապագայ կենաց համար  
 «Սոկանք՝ գործենք՝ դարուս յարմար:  
 «Չանձրացուցին զիս մահու չափ մեր բոլոր  
 «Մըռունչն ուխանջ, զըռոց, բառաջ ահաւոր,  
 «Կը հրամայեմ, որ ասկէ վերջ,  
 «Իմ անսահման անտառիս մէջ,  
 «Քաղցրանազ թռչներ անթիւ  
 «Երգ գեղգեղեն գիշեր ու տիւ:  
 «Ուստի շուտով թող ընտրուի արժանի,  
 Մասնաժողով՝ գարկ տալ գործին պիտանի:  
 Ըստ հրամանի թագւորին խիստ,  
 Իսկոյն ընտրեց ժողովոյն նիստ,  
 Երկու վագրեր և երկու արջ ամեհի  
 Չոյգ մը գայլեր, մեռելակէր բորէնի:  
 Իսկ բաժանող հըրաւէրքներ բազմապատիկ  
 Էշն ընտրեցին մունէտիկ:  
 Մասնաժողովը այդ նորընտիր  
 Մեծ եռանդով ըսկսաւ գործել անխըտիր  
 Շըրջէր բոլոր անտառները լայնածիփ,  
 Հաւաքելու թռչնոց խմբեր երգեցիկ,  
 Մունէտիկը ականջն ու պոչ  
 Յըցւած զըռար ահագնագոչ:  
 Իսկ անգամներ ժողովոյ նոր  
 Խանջէն, կանչեն, ոռնան՝ գոռան օրէօր:  
 Եւ հանեցին այնպէս աղմուկ ու շրփոթ:  
 Որ սարսէին ծառեր և օդ:  
 Իսկ երգեցիկ թռչներ բոլոր,  
 Սոսկը սոսկին անտառներ խոր,

Փախան գացին հեռաւոր:  
 Որով փոխան քողցըր երգոց  
 Լըսւէր միայն իշուն զըռոց:  
 Այդ մասին մենք չառնենք մեզ զանց,  
 Զի սոցամէ չենք գերազանց:



ԿԳ

Ֆ Ա Ք Ի Ր

Մի՛ խորամիտ Աստուածաբան ծեր Ֆաքիր,  
 Մեծ հետազօտ հետաքրքիր:  
 Բոլոր կեանքը բնութեան հետ կըզբաղւէր,  
 Վերացական մութ գաղտնիքներ  
 Կուզէր պարզել նա իւր խելքով,  
 Կայլակի մէջ անփոփել ծով:  
 Տըքնէր՝ ճըզնէր՝ խոկար՝ խորհէր,  
 Կը թարթափէր ցորէկ-գիշեր,  
 Զըկտէր նա հասնել և մէկնել անձառ  
 Տիեզերքին խոր ըսկզբնապատճառ.  
 Օր մի Ֆաքիրն նըստած խորհէր,  
 Խիտ վարսագեղ ծառոց տակ,  
 Նորա մօտով, ծաւ-ծաւալէր  
 Ընդարձակ լիճ կապուտակ:  
 Հարթ-աւազուտ ափին վերայ  
 Ոսկէգիսակ մի երեխայ,  
 Արագ՝ արագ՝ կը փորէր փոս  
 Վազէր քըրտինք մարգարտահոս:  
 Ափիկներով իւր ճիղմ ու խեղճ

Լըճին ջուրը կը փոխադրէր փոսին մէջ:  
 Ֆաքիրն որ տեսաւ ամբըւեց բոլոր,  
 Եւ խաղաց ժըմիտ մութ աչերուն խոր:  
 «Ա՛յ որդի—ասաց—ինչ բանի մէջ ես,  
 «Ես բոլորովին չեմ հասկընար քեզ:  
 «Տերվիշ պապա—ասաց տղան մըտախորհ,  
 «Ես կաշխատեմ և կուզեմ որ,  
 «Լըճին ջուրը մինչ ի վերջ  
 «Տեղափոխեմ փոսիս մէջ:  
 «Ծիծաղեցաւ Ֆաքիրն ասաց—այ տըղայ,  
 «Միթէ լիճը այդ փոսին մէջ կը տեղայ.  
 «Մի՛ գարմանար—ասաց. տըղան ո՞վ Ֆաքիր,  
 «Դու որ կուզես երկինք երկիր,  
 «Իւր ծագումով անծագ՝ անվերջ  
 «Ամփոփելու քո կաղնաչափ զըլխուդ մէջ:  
 «Միթէ թըւի քեզ անհրնար և անվէճ,  
 «Փոքրիկ լիճը տեղափոխել փոսիս մէջ:  
 Ասաց ժըպտաց ոսկէգիսակ երեխան  
 Եւ ցըւեցաւ ամպի նըման:  
 Ագամորդի բընութիւնն է գիրք մ՝ ընդարձակ  
 Կարգն սորվէ համարձակ,  
 Բայց պարզելու նորա ըսկիզբն ու պատճառ  
 Դեռ չէ կարող քո թոյլ հանձար:



ԿԴ

Լ Ե Ռ Ե Ի Դ Ա Շ Տ

Ամպերն 'ի վեր բարձրագիտակ,  
Կարծես ճակտին արծաթի թագ,  
Բարձրացել էր լեռան կատար,  
Կուտակելով դարէգար:

Օր մի գոռոզ աչերով խեթ,  
Նա դէպ ի վայր կելնէր 'ի դէտ,  
Տեսաւ ոտից ներքեւ խոր,  
Դաշտ մ' ընդարկակ և գըլոր:

Որն իւր վերայ ճերմակ վերմակ  
Առած հանգչէր նա անոր տակ:  
Ամպոց ծոցէն սարն որոտաց  
Եւ սարսեցան դաշտերն 'ի ցած:

«Կողքս ես մըտել անհոգ տըւլանկ,  
«Հանգիստ նընջես քամակիս տակ,  
«Պատըսպարան կանգնել եմ քեզ  
«Երկրէ երկինք հաստ պատի պէս:

«Հիւսիսային խեռ մըրրկաց,  
«Կելնեմ դիմաց ճակատըս բաց,  
«Իմ ծոցէն խոր անընդախոր,  
«Եւ կողերէս տարին բոլոր:

«Յորդ կը հոսեմ ջուր կենդանի,  
«Կոռոզեմ քեզ քանի՛ քանի՛

«Կեանք կը շընչեմ ընթերքներուդ մէջ բոլոր,

Եթէ ոչ ես՝ դու անապատ դառնաս չոր:

Դաշտը ասաց բարձրը իշխան՝

Փամանակը թող որ տայ քեզ պատասխան:

Եւ իրաւի անցաւ ժամ-օր,  
Հասաւ գարուն բեղմնաւոր,  
Փիր մըշակներ աշխատաւոր,  
Մըշակեցին դաշտ բոլոր:

Նորա ծոցէն կածէր կեանքը օրէօր  
Շաքլէր շըքեղ նորէնոր:  
Ընդեղէններ առատ բանջար,  
Յորեան, գարի և հաճար:  
Սեխ՝ ձըմերուկ՝ գետնախընձոր  
Եւ շատ պըտուղ շահաւոր,


Իսկ բարձրը լեռը, որ կը յոխորտար,  
Մընաց գըլխուն ձիւն և 'ի սըրտին սառ:

Ան ատէնը դաշտը վարէն դէպ 'ի վեր,  
Ասաց—«փոքր ինչ ուշ դէր դու ինձ մեծըդ լեռ:  
«Իու որ միշտ զիս փոթորկաց դէմ կը պահես  
«Այդ ակամայ պարտք մ'է քեզ,

«Իսկ կենդանի ջուրն որ կ'ասես, զայն վերէն  
«Մենք կըստանանք մեզ բարերար ամպերէն:  
«Որոնք կուտան միշտ անխըտիր և հաւսար  
«Եւ չեն ընտրեր, որը դաշտ է՝ որն է սոր:

«Միայն ինչո՞ւ միկնոյն ջուր կենսաբար,  
«Երբ կիջնայ քեզ, նա կը դառնայ ձիւն ու սառ,  
«Իսկ ցած՝ նըւաստ՝ դաշտն որ թանայ,  
«Կեանք և հոգի կըստանայ:

Որչափ բարձրը լինի սարը  
Այնչափ պընդի սըրտին սառը:



ԿԵ

ՈՐԹ ԵՒ ՈՍՏԵՐ

Որթն ուռճացած մօր նրման  
 Իւր չորս կողմը ցիր ու ցան,  
 Տարածելով ոստեր երկար խիտ առ խիտ,  
 Գիշեր ցերեկ նոցա հեան էր խելքն ու միտ:  
 Ոստերն անփոյթ և ազատ,  
 Հեռանալով մօրը դըրկէն հարազատ:  
 Աստանդական ցըրւած բոլոր  
 Երկարէին օրէ օր:  
 Հազիւ որ ցուրտ անցաւ ձըմեռ  
 Հասաւ գարուն աւետաբեր,  
 Այգեպանը ձեռքը սըղոց ու դանակ:  
 Եկաւ ազատ համարձակ,  
 Եւ ըսկըսաւ յօտել՝ կըտրել՝ անխիղճ անգութ,  
 Որ ըստանայ աշնան առատ այգեկութ.  
 Մորմոզ՝ մորմոզ՝ լային ոստունք,  
 Ձինջ մարգարիտ վազեն արցունք,  
 Դարձան որթին կասեն մայրիկ այս է վարձ  
 Այսչափ տարւան աշխատանքիդ փոխադարձ,  
 Որ հիմայ քո որդիքդ, այսպէս անարդար  
 Կը կեղեքեն չարաչար:  
 «Կըզգամ—ասաց—որթը իւր խիտ սստերուն,  
 «Համբերեցէք ձեր անցաւոր վերքերուն,  
 «Այգեպանին՝ թէպէտ սըղոցն ու դանակ,  
 «Ձեզ կը թըլի դըժընդակ,  
 «Բայց օր կուգայ դառն ցաւոց փոխադարձ,

«Ժամանակէն կըստանաք վարձ:  
 «Ձի այգեպանն յօտէ միայն այնպիսի մաս,  
 «Որ ձեր կեանքին տայ վընաս:  
 Եւ իրաւի հասան խաղաղ պարզ օրեր,  
 Ձեփիւնն ազատ սիւզ կենդանի կը բուրէր,  
 Մեղմ կազդուրիչ ամպեր բացին սըրտերը,  
 Ուռեցցին վիրաւորւած ոստերը.  
 Որոնց ամեն մի դառն վերք  
 Տըւեց առատ ընկիւղ և բերք:  
 Երեխաներ, ուշղիք այս իմ առակիս  
 Օր մը թերևս հոգւոյս հանէք «ողորմիս»...



ԿԶ

ԱՐՁ ԵՒ ՊԻԾԱԿ

Մի օր արջը յափըշտակեց լիք փեթակ,  
 Մինչդեռ կուզէր նըստել՝ ուտել ծառին տակ.  
 Նորա լանջին նըստաւ քաղցած մի պիծակ,  
 Եւ խըրեց խոր սուր սըլաք:  
 Ծըծէր արջին ջերմ արիւնը ծիրանի,  
 Հեշտանալով ինք զինք կուտար երանի,  
 Այնպէս սաստիկ նա եռք հանեց արջին լանջ,  
 Որ գազանը չարատանջ,  
 Մեղր ու խորիսիս մոռցաւ իսպառ  
 Եւ թաթովը սոսկավիթխար,  
 Խըփեց ուժով ինքն իւր լանջին,  
 Կուզէր ճըզմել խածան ճանճին.  
 Բայց պիծակը թեթև՝ ճարպիկ՝ և արթուն

Սըլացաւ վեր յալիս օդուն,  
 Ճակատ առ ճակատ արջին յանդիման,  
 Կը ճօճէր նիզակ Հեկտորի նրման,  
 Սըջին եռքն որ փոքր ինչ անցաւ  
 Մոռանալով իւր լանջին ցաւ:  
 Մինչդեռ կուզէր դառնալ մեղրին քաղցրորակ  
 Կայծակի պէս պիծակն արագ.  
 Նըստաւ ազգրին առաւել խոր  
 Մըղեց սըլաքն իւր գօրաւոր:  
 Ծըծէր դարձեալ արիւնը տաք  
 Անկուշտ՝ անյագ.  
 Աըջը նըստած սարսէր բոլոր  
 Յըռուկն 'ի վեր, աչեր խորոր,  
 Իսկ պիծակը սըպրդեցաւ օդն ի վեր  
 Կըրակ դարձած կը փափախէր նուրբ թևեր:  
 Աըջն որոտաց «փըձուն պիծակ  
 Ո՞վ անիծած սատանի ձագ,  
 Հիմայ ես քեզ իմ թաթիւս տակ  
 Կը տըրորեմ տաս-տափակ:  
 «Քիչ մը կամաց, պիծակն ասաց հեզնօրէն,  
 Դու սըր, ես սըր, անօրէն:  
 «Ես օդուն մէջ ծըփամ ազատ և թեթև  
 Դու քարշ կուզաս գետնին վերև:  
 Օ՞ թէ օր մը ուսիդ վերայ  
 Բուսնի թևեր քեզ յարմար,  
 Ան ատէնը ես քեզ ծառայ  
 Իսկ դու իշխան ինձ համար:  
 Այս ասելով պիծակն հանդիստ չը տըլաւ,  
 Մինչ այն կէտին, որ իրաւ  
 Գեղջուկները հաւաքեցին մեծ բանակ

Ազատեցին մեղրին փեթակ:  
 Յաղթութեան համար պէտք է յարմար դիրք  
 Ուժէն առաւել՝ ճըկուն մարմնոյ ձիրք:



### ԿԵ

#### Ա.Գ.Ռ.Ա.Ի ԵՒ Ա.Ղ.Ա.ԻՆԻ

Օր մ՝ աղաւնին ագռաւին հետ  
 Ծանօթացաւ և սիրով սերտ  
 Կապուեցան ձիգ  
 Իբրու կըծիկ՝  
 Համակրութիւն մ՝ ըզգաց սաստիկ,  
 Յորմէ գուրկ չեն և մարդիկ:  
 «Խընդրեմ կասէր, յարգոյ տէր,  
 «Իմ խոր խընդիրքս մի մերժէր՝  
 «Վաղը ճաշի հըրամէ մեզ մօտ,  
 «Դա կը լինի մեր ջերմ սիրոյն առաւօտ:  
 «Ուրախութեամբ, ագռաւն ասաց՝  
 «Եւ ես կըզգամ փոխադարձ,  
 «Համակրութիւն՝ սէր ջերմագին,  
 «Նոր մըտերմոյդ իմ անգին:  
 «Վաղը կըլնիմ սեղանակից  
 «Եւ մինչև մահ սըրտակից:  
 Միւս օր աղաւնին պատրաստեց շատ բան  
 Հունդեր և որդեր, միջատք զանազան,  
 Սարքեց սեղան փառաւոր  
 Եւ կըսպասէր հիւրը նոր:  
 Ագռաւն եկաւ ուրախ՝ զըլարթ,

Քաղաքակիրթ իբրև մի մարդ:  
 Կերաւ խըմեց առատ՝ առատ  
 Եւ խօսեցաւ շողփաղփ ու շատ:  
 Այն օրէն վերջ աղանոյն հետ  
 Լըծորդվեցան առաւել սերտ,  
 Օր մի ագռաւն ալ իւր կարգին  
 Հըրաւիրեց աղանեակին:  
 Բայց սարքել էր նորա համար  
 Նա մի սեղան իրեն յարմար.  
 Որուն վերայ լիքն էր մօտ՝ մօտ՝  
 Թըրիք՝ քակոր՝ աղբ դարշահոտ:  
 Հըրամէ կասէր կէր սիրելիս  
 Եթէ կուգես դու յարգել զիս:  
 Աղանեակը՝ թէպէտ կերաւ մինչ ցըյագ,  
 Բայց նա դէմքով գըլխով բոլոր ըսպիտակ  
 Կեղտոտուեցաւ սեցաւ բոլոր՝  
 Կորուց իւր գեղն ու շնորհ.  
 Երբ ճաշէն վերջ տուն դարձաւ  
 Ընկերներուն քիչ չեղաւ ցաւ,  
 Ամէն կողմէն լըսէր բողոք և գանգատ,  
 Որ աղանին տարածել էր հօտ մի վատ.  
 Զըզւին՝ գարշին՝ յաջ ու ձախ  
 Բոլորին սիրա կելնէր խաղ:  
 Մինն ի նոցունց, որ լաւ գիտէր  
 Իւր ընկերոջ ագռաւին հետ կապն ու սէր  
 Կասէր—»այս՝ ագռաւին հետ որ երթաս-գաս,  
 Գըթէգ գարշ հոտ չըլնիր պակաս:



### ԿԸ

#### ԵԶՆԵՐ ԵՒ ԱՂՈՒԵՄՆԵՐ

Լուսնածագին երկու աղուէս ծանրափոր,  
 Գեր հաւերու խընշոյքէն վերջ փառաւոր,  
 Գաղտուզողի գեղէն անտառ ձորն ի վեր  
 Կը դառնային յոգնած՝ դաղբած կարեվեր:  
 Եկան գանկ առին խիտ թըփերուն տակ  
 Եւ նըստան հանգչել, շունչ առնել արձակ:  
 Հոն անտառին ըստօրոտով կարծրահող,  
 Կոյս՝ անմըշակ՝ լեռան կող,  
 Երկրագործը խըրած արօրին խոփ հատու,  
 Խոր ախոսներ բանար պարարտ՝ պըտղատու:  
 Ութը գոյգ եզ լըծած տոկուն՝ քաջալանջ,  
 Լանջ կը գարնեն և կը ճըքնեն յոգնատանջ,  
 Զըկտին վըգեր՝ ուռեն ջըղեր և ոլոք  
 Կը ճըռընչեն լուծ և փոկ:  
 Արիւն-քըրտինք՝ լուռ համբերող  
 Կերթան ՚ի սող և պատառեն կարծըր հող.  
 Նոցա կողքէն հոն մի առոյգ պատանի  
 Մըրաակն ի կուշտ գանոնք առաջ կը տանի:  
 Այդ միջոցին աղուեաները թըփոց տակ,  
 Լուրջ դիտելով հըլու եզանց խեղճ վիճակ  
 Մինը կասէր միւսին—քեռի,  
 «Սոքա թըշաւու և անշըղթայ են գերի,  
 «Այդ խեղճերը, եթէ իւրեանց ուժն ու կար,  
 «Իւրեանց հըզօր եղջիւրները սըրածայր՝  
 «Եթէ փոքր ինչ ճանաչէին գիտակցաբար,  
 «Միթէ այդպէս ճընշըւէին չարաչար:

Հիմայ տէս դու եղջիւրի չափ մի տըղայ,  
 Խըփէ՛ վարէ՛ քըշէ՛ զանոնք անխընայ:  
 Քեռին ասաց՝ «չեմ գարմանար սոցա ուժին»  
 «Զի մըրջման չափ խելք չունին,  
 «Կարծեմ որ պատշաճ կը լինի կարծել,  
 «Որ նոցա ուղեղն եղջիւր է դարձել:



ԿԹ

ԻՇԽԱՆ ԵՒ ՄՈՒՐԱՑԿԱՆ

Լայն փողոցի մի անկիւնը մարդաշատ,  
 Վըրան գըլուխն հալած՝ մաշած մի աղքատ,  
 Կանգնած տըխուր՝ յուսահատ,  
 Անցւորներէն նա գատ՝ գատ՝  
 Դողդոջ ձեռքով՝ ձայնով կերկէր  
 Ողորմութիւն կը խընդրէր:  
 Նորա մօտով կանցնէր իշխան մի թըմբեկափոր,  
 Պարարտ սընւած գեր ու գըլոր՝  
 Ոտքէն ցըզուխ հագւած-սըզւած շատ շըքեղ,  
 Նորա համար լայն փողոցը թըւէր նեղ:  
 Մուրացկանը ձեռքն երկընցուց ու կասէր՝  
 «Վըսեմ իշխան՝ խընդրեմ զիջիլը՝ մի մերժէր,  
 «Ողորմութիւն մ'արա՛ հիգոյս,  
 «Զի հարուստն է աղքատին յոյս:  
 «Չունիմ» — կանչեց մեծատունը սըրդողոյս:  
 «Եթէ չունիս — աղքատն ասաց,  
 «Կանգնիր կողքին և մուրա՛ հաց:

Հ

ԱՌԻԻԾ, ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Օր մ'առիւծը՝ գայլըն ու աղուէս  
 Որսացին գառ մ'ոչխար և եղ,  
 Բորբոքւեցան փորերը անյագ,  
 Եւ շարժւեցաւ ախորժակ:  
 Առիւծն ասաց քաղցած գայլին քանատար,  
 «Տէ՛ բաժանէ՛ տեսնամ որսերն հաւասար:  
 Ուրախացաւ գայլը սաստիկ,  
 Որ պասէն վերջ պիտ գայ գատիկ:  
 «Տէր իմ — ասաց — քեզ վայել է եզը գեր,  
 «Ինձ ծառայիլ՝ ոչխարը ծեր.  
 «Իսկ աղուէսին աշխատանքին փոխադարձ  
 «Թող գառնուկը լինի վարձ:  
 «Ա՛ռ քեզ ՚ի վարձ, առիւծն անեղ մըրընչեց,  
 Գայլի գանկին թաթով խըփեց.  
 Դուրս ցայտեցին երկու աչեր չարափաստ,  
 Կայծակնահար ընկաւ խեղճը դիտապաստ:  
 Խաղաց ժըպիտ խէռ առիւծին  
 Աչերուն ի որ մահածին.  
 «Պարոն աղուէս հիմայ — ասաց հեզնօրէն,  
 Ինչպէս պարտ է և օրէն,  
 «Այդ որսերը դու բաժանէ մեղ համար,  
 «Մաքուր խըճիդ ձայնին յարմար  
 Աղուէսն արթուն և կեղծաւոր,  
 Կեղծելով իւր վախը բոլոր,  
 Չեռքը սըրտին՝ ձայնով նըւազ  
 Կասէր — «արքայ ապրած կենաս:

«Քեզ նախաճաշ գուրդ գողտրիկ,  
 «Իսկ եզը ճաշ փառաւոր,  
 «Գեր ոչխարը շքեղ ընթրիկ)  
 «Քաղցրանոցի քեզ թագաւոր:

Յընծաց առիւծն կանչեց— պանծա՛ւ անձ աղուէս,  
 «Կը զարմանամ այդ խոր խելքն՝ ո՞ւր սորվելես—  
 Աղուէսն ասաց— »մի՛ զարմանար վեհապէս,  
 «Գայլի սատակն է պերճախօս վարժապետ:



**ՀԱ**


**ԱՔԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒԷՍ**

Առտու կանուխ լուսնածագին  
 Եկեղեցնայ ՚ի բակին:  
 Գեր աքլոր մը ծառին վերև  
 Կողջագուրէր լոյս արև,  
 Ծառին ներքև ծեր աղուէս մը չարասիրտ,  
 Իւր արհեստին վարժ և կիրթ,  
 Թաղիկները սրտին կապած խաչաձև,  
 Եւ աչերը վեր սևեռած սուր ու սև,  
 «Ձայնիդ մատաղ— կասէր— անմահ տիրացու,  
 «Ինչ երկնային մեղեղիներ կերգես դու:  
 «Ի՞նչ հոգի՛ առիս ցած,  
 Եկեղեցւոյն դուռը բաց,  
 «Մի տարի է, որ իմ պարտքերս հոգևոր,  
 Մոռացել եմ ես բոլոր:  
 Օգնէ՛ դու ինձ սիրելիս,  
 Որ փրկուի խեղճ հոգիս:

«Ուրախութեամբ, աքլորն ասաց ի ծառին,  
 «Բայց ափսոս՝ որ իմ մօտըս չէ բանալին:  
 «Հապա սուր է— հարցուց աղուէսն արխարազմ,  
 «Երեցփոխին մօան է կարծեմ,  
 «Եթէ կուգես— կրկնեց աքլորն խորամանկ,  
 «Նա պառկել է եկեղեցնայ դրբան տակ:

Մի քանի քայլ աղուէսն ըզգոյշ  
 Առաւ, տեսաւ երբ դարձուց ուշ,  
 Որ մի խոշոր շուն գայլակէր,  
 Խըռկալով խոր կը քընէր:  
 Մինչ պատրաստուէր խոյս տալ սուսիկ  
 Երկու ոտքը մի կոշիկ:

Աքլորն ասաց— «ուր կը փութաս աղուէս-ջան,  
 Կեցիր երգեմ քեզ մի քանի շարական:  
 «Ձէ, չէ— ասաց— կեղծեց աղուէսն ան ու դող,  
 «Ես գործ ունեմ, երկար մընալ չեմ կարող,  
 «Բայց քեզ կասեմ իմ կարծիքը անփոփոխ,  
 «Քանի որ կայ՝ հոս մի այսպէս երեցփոխ,  
 «Գիտցած եղիք եկեղեցին ձեր արագ,  
 «Դառնայ անծուխ աւերակ...»



**ՀԲ**

**ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՔԱՂԱՂ**

Աղուէսը ծով՝ բաղցած՝ ծարաւ,  
 Աչքէն թրուչէր մի դերուկ հաւ,  
 Գաղտ սև դողի մատերուն ծագ,  
 Շուքի նրման զեղջուկին բակ

Մըտաւ ըզգոյշ՝ առաւ գանկ

Մի թաւաստե ծառի տակ:

Դեռ նոր էր ծագել այգը վարդամատ,  
Ոսկէգօծելէր ծառերուն գագաթ.

Ոստոց մէջէն երկու խոշոր աքաղաղ,  
Լուսնածագին երգեցին տաղ;

Սորա իւրեանց զիրգ հարճերուն բարեփաստ,  
Կագսել էին ճիւղերէ նուրբ առագաստ:

Աղուէնն որ տեսաւ հաւերուն վիճակ,  
Շողեց մըտքին խոր հընարքմը բարակ.

Բարձրացուց իւր թաղը վեր,  
Եւ արաւայս հըրաւէր:

«Ողջոյն ընդ ձեզ տէարք վեհագուն

«Եւ ձեզ տիկնայք փափկասուն.

«Ձեզ կը մաղթեմ մեծ աչքի լոյս

«Եւ ընդհանուր հաշտութեան յոյս.

«Մեր թագուորէն գերապարսակ

«Ելաւ սաստիկ հըրովարտակ,

«Որ ասկէ վերջն արջն ընդ եղան,

«Գայլն ընդ գառան, կատու՝նդ մըկան

«Բազէն-անգէն. մարդն ընդ օձին

«Եղբայրակցին:

«Իսկ ես սըրտիս բոլոր սիրով կաթողին

«Պիտի ապրեմ թռչնոց սիրուն և օգտին:

«Իջիք խընդրեմ առ իս ցած

«Իմ ջերմ գիրկըս ձեզ է բաց.

Մինչ աղուէսին սուր աչերէն կեղծ-անմեղ

Եւ շրթներէն ցայտէր խօսքեր մեղրուեղ

Տեսնաս յանկարծ ծառոց ի ծոց

Լըսեց բարձր շան հաչոց:

Մոսկաց աղւէնն, մինչ պատրասուէր խոյս տալ յետ,

Աքլորն ասաց ուր կը փութաս վարդապետ:

Թող գան շըներ և կենդանիք հոս բոլոր

Տօնել մեզ հետ այս հաշտութեան մեր սուրբ օր:

Շատ ուրախ եմ, աղուէնն ասաց, բայց զիտես  
Հըրովարտակն ինձ հետ առնել մոռացայ ես.

Ըսպասեցէք փոքր ինչ խընդրեմ

Հիմայ կերթամ կը բերեմ:

Ասաց՝ փախաւ նա ձորն ի խոր

Եւ հըղարձաւ մինչև յայսօր:

Խորամանկը առթին յարմար

Կը գըտնէ ելք և հընար:



ՀԳ

Ա. Գ. Ա. Հ

Փամանակով ծերուկ մի կար,

Որն անվանի էր ժըլատ,

Սա իւր բոլոր կեանքում երկար,

Չըւնէր այլ ինչ փողէն գատ.

Նորա սըրտին խորն էր բազմած

Ահարոնին ոսկի հորթ

Գիշեր-ցորէկ անոր զիմաց

Կերկըրպագէր սիրայորդ.

Դա մի անգամ, լինելով խոր ալևոր,

Հիւանդացաւ, կարծես հասաւ վերջին օր.

Հալած՝ մաշած՝ ընկաւ խեղճը անկողին,

Ուր կը պահէր բոլոր գումարն իւր փողին:

Ազգականներն երբ իմացան  
Փառք տալով շատ ուրախացան.

Ըշտապեցին եկան ծերուն հիւանդտէս,

Մեռելակէր բորէնույ պէս:

Հոգևորքը անկողինն մէջ տըքտըքար,

Ուր մատնաչափ մոմն ի մըթան պըլպըլար.

Ազգականներն անմըռունչ

Կըսպասէին խեղճ ազահին վերջին շունչ:

Տեսնաս ծերը ձեռքը շարժեց գողգոջուն

Բորորը մէկ պաշարեցին գենքն իսկոյն:

Կը յուսային, որ նա մահւան դըրտն տակ

Պիտի յայտնէր իւր վերջին կամքն ու կըտակ.

Հոգևորքը ուժ մէկ արաւ ձայնով ցած

Բայց շատ որոշ, այպէս ասաց:

Ինչու ճըրագն ի զուր տեղը կը վառի

Լաւ կը լինի, որ մարի.

Մի մոռանաք, որ չըքաւոր եմ ու խեղճ

Ես իմ հոգիս կարող եմ տալ մըթան մէջ:



ՀԴ.

ԳԵՂՉՈՒԿ ԵՒ ՕՉ

(Ըստ Եզովբայ)

Գեղջուկն օր մը փայտի բեռան

Տակ ճընշւած ի ձմերան,

Կամաց՝ կամաց՝ անտառէն գեղ կը դառնար

Ոտից ներքև կը խըշխըշար ձիւն ու սառ:

Ճանպարհին մէջ տեղ տեսաւ տարածւած

Մի օձ գազիր սաստիկ ցըրտէն քարացած,

Խըղճաց գըրաւ տոպրակին խոր

Կարծես երկար սառի կըտոր:

Երբ հասաւ տուն մեծ խընամքով

Դըրաւ օձը խարոյկին քով.

Ուր որ ինքնալ էր սովոր

Ընտանիքով ճաշել՝ ընթրել՝ ամեն օր.

Խըթճին տաքէն տեսնաս քիչ՝ քիչ՝

Օձին սառը հալեցաւ

Կարծես խորին թըմըռութէնէն

Չար վիշապը արթընցաւ

Առջի գործը եղաւ նորա

Մըրել սըլաք գեղջկին վերայ

Չայդ որ տեսաւ գեղացին

Մըրամըտելով խըլեց կացին

Չարին գըլուխ ջախեց չարեաց փոխադարձ.

Ապերախտին արժանի վարձ:



ՀԵ

ԳՈՐՏ ԵՒ ԵՉ

(Ըստ Եզովբայ)

Կուշտ ու պարարտ ճաշելէն վերջ,

Ծաղկածաւալ հովտին մէջ,

Եզն յաղթանդամ բըլըափոր,

Սաստիկ ծարւած՝ պապկած՝ մի օր,


Եկաւ գովակ գետակին ափ,

Կազդուրել իւր ջերմ սըրտին տապ:

Հոն նորա մօտ

Երկու ծեր գորտ.

Կըռկըռալով ատէն՝ ատէն՝  
 Եզան վերայ նային՝ դատէն:  
 Մինը կասէր միւսին-քեռի,  
 Եզն որ տեսնամ սիրտըս կերի,  
 Տէս թէ ինչպէս՝ նա լեռան պէս  
 Բարձր է խոշոր վեթխարի,  
 Իսկ մենք գըծուծ՝ փըձուն՝ փոքրիկ,  
 Կարծես հատիկ մի գարի:  
 Թէ հաւաքենք հազար գորտ  
 Ձի բաղկանար ոչ մի հորթ:  
 Քեռին ասաց  
 Մի քիչ կամաց:  
 Ըստ իս երբէք չեմ նախանձիր այդ եզան,  
 Յուսով եմ. որ յետ չեմ մընար ես քան դայն:  
 Ասաց այսպէս և ըսկըսաւ կըռկըռալ,  
 Կըռկըռալով նորա մորթը ծալ ու ծալ,  
 Լայնէր՝ ուուէր քանի կերթար  
 Անդադար:  
 Ատէն՝ ատէն՝ ինք զինք չափէր եզան հետ,  
 Եւ գտնալով դեռ շատ յետ  
 Այն աստիճանի փըչւեցաւ սաստիկ,  
 Որ չըդիմացաւ պայթեցաւ գերդ տիկ:  
 Թող ամեն գորտ,  
 Կըչուէ իւր մորթ:



### ՀԸ

#### Ա.Գ.ՌԱԻ ԵՒ Ա.ՂՈՒԷՍ

Շընորհիւ բաղդին,  
 Ագուաւն ՚ի կըտցին,  
 Պանրի մի կտոր,  
 Եղոտ և խոշոր,  
 Բըռնած՝ ճօճար ոստին վերև  
 Յոյց տար դո՛ս սիրտն ակներև:  
 Կը պատրաստուէր սարբել շքեղ  
 Մի ճաշ պարարտ և համեղ:  
 Պանրին հոտէն՝ սուր և բարակ,  
 Հրասպուրւած աղուէս մի ծէր՝ խորամանկ,  
 Երբոր եկաւ ծառին տակ  
 Տեսաւ կըտցին պանրի կտորն ըսպիտակ:  
 Խեղքը թըռուց և վագեցաւ բերնին շուր,  
 Ծունկի գալով, կեղծ ջերմեռանդ աչեր սուր,  
 Կը դարձըներ ագուաւն ՚ի վեր,  
 Միւրոյ նետէր կարճակէր:  
 «Ողջոյն ընդ քեզ դըշխոյ—կ՝ ասէր—  
 «Դու ՚ի սիրոյ ծընւելես սէր.  
 «Քեզ անտառիս նըման կուսին  
 «Կը նախանձին արև լուսին,  
 «Քո երկնային դէմքիդ մատաղ,  
 «Երփնափետուր մարմնոյդ չըքնաղ,  
 «Թէ ձախով ալ լինիս այնպէս երգեցիկ,  
 Մարմնոյդ նըման գեղեցիկ,  
 «Ան ատէնը դու անտառիս թռչնոց բոլոր  
 Կըլնիս պըսակ փառաւոր:

«Երբէ խընդրեմ գեղաշնորհ հըրեշտակ,  
 «Թող ամոքէ տըխուր սիրտըս քո նուազ:  
 Այս խընկերկէն հարբած բոլոր,  
 Շունչ մը առաւ ազոաւը խոր,  
 Բացաւ կըտուցն արձակեց զան»  
 Պանիրն ընկաւ բերանէն վար:  
 Ճըխաց աղուէսն յափըշտակեց ու գնաց  
 Խեղճ ագռաւին կոր կըտուցը բաց մընաց:  
 Շողոքորթին բաղցը լեզւէն  
 Ըզգոյշ եղիր և ծանիր,  
 Զի չես ըզգար երբ քո բերնէն  
 Կը խըլէ հացն ու պանիր:



ՀԵ

ԿԱՏՈՒ ԵՒ ՄԿՆԵՐ

Իշխան 'մ ունէր վագրանըման մի կատու,  
 Կարծես մահուն սա գերանդին էր հատու,  
 Նա կը հընձեր դէզ առ դէզ,  
 Խեղճ մըկնեըը խոտի պէս:  
 Սասանեցաւ մըկանց ազգը ահաբէկ  
 Այդ պէս հարւած գեռ տեսնըւած չէր երբէք.  
 Ամեն մի տեղ լըսէր բողոք  
 Տըրտունջ և յաց ողորդ-ողորդ:  
 Զըզիմացան ուժ մէկ արին վերջապէս  
 Գուամարեցին գիշերին կես  
 Ահով՝ գողով  
 Մի ընդհանուր մեծ ժողով.

Եւ ժողովոյն ընտրեցին լուրջ նախագահ,  
 Հազար չընէ փախած անվախ և անահ.  
 Մուկ փորձառու՝ քաջ կատուագէտ.  
 Իւր արհեստին շատ վարպետ:  
 Նախագահը բացաւ ժողովն  
 Ազգու ճառով պերճախօս.  
 Տատանեցան մըկանց խըմբեր,  
 Ալեաց նըման մեղմահոս:  
 Ամեն կողմէն կը լըսուէին  
 Խորհուրդ՝ միջոց՝ հընարք՝ թաւ,  
 Թակարդ՝ ծուղակ և որոգայթ  
 Կատուին ընդէմ անիրաւ:  
 Մէկմնալ տեսնաս մըկանց յետին խաւերէն  
 Առաջ անցաւ մուկ մը ծեր,  
 «Ուշ դիք կասէր ո՞վ դուք մկանց քաջերէն  
 «Փորձ ու ներհուն ծերուն ձեր:  
 Լըուեց ժողովն մէկ մարդու պէս  
 Մուկն ըսկըսաւ խօսել այսպէս:  
 «Եթէ կուզէք կատուին ձեռքէն  
 «Ազատ լինել անսուր՝ անզէն.  
 «Մի սըրածայն փոքրիկ բոժոժ.  
 «Պէտք է կախել նորա վըզէն:  
 «Ան առէնը նա ախամայ  
 «Միշտ իւր գալուն իմաց կուտայ:  
 Գոռաց ժողովն» կեցցէս՝ կեցցէս՝.  
 «Ո՞վ դու մըկանց Ոգիսեւս:  
 Նախագահը զանգը հընչեց և ասաց.  
 «Կեցցէ այն, հընարքն է շատ գերագանց  
 «Ուստի քաջեր ով ձեզանից  
 «Կը սիրէ ազգն հարագատ,

Եւ կը ցանկայ փրկել և տալ.  
 Անոր մի նոր կեանք ազատ:  
 Թող գայ առաջ՝ ի վրէժ՝ ի զէն.  
 Չանկը կախել կատուին վրդէն:  
 Նախագահի խօսքին վերան  
 Լըռեց ժողովն ափ ի բերան:  
 Կամաց՝ կամաց՝ մըկներ բոլոր  
 Անհետացան ծակերն ՚ի խոր:  
 Միայն մընաց հըլու դերին  
 Նախագահը զանկը ձեռին:  
 Միջոց՝ խորհուրդ՝ տըւող շատ  
 Չանկը կախող ոչ մէկ հատ:



ՀԸ

ԱՔԱՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

(Ըստ Եզովբայ)

Օր մ՝ աքլորը իւր հարճերով,  
 Աղբաբըլըրին ՚ի կատար,  
 Կէր կ'որոնէր սուր ճանկերով,  
 Փորփրբելով անդադար:  
 Մէկ մ՝ ալ տեսնես ճիրանին տակ  
 Դուրս ցատկեց ջինջ ըսպիտակ՝  
 Մի թանգադին խոշոր՝ վըճիտ՝  
 Մարգարիտ:  
 Կըտցեց աքլորն վըրդովեցաւ սաստկապէս  
 Եւ շուռ տալով կասէր այսպէս:  
 «Թո՛ղ զըրողը քեզ տանի

Դու մեր փորին չէս պիտանի:  
 Միայն մարդիկ թեթևամիտ  
 Սիրէն՝ յարգեն՝ մարգարիտ,  
 Իսկ մեզ համար  
 Լաւ կը լինէր և յարմար.  
 Թէ քո փոխան դուրս գար հատիկ մի գարի,  
 Մեզ շահաւոր ու բարի:  
 Իսկ դու զընա՛ն անոնց, որ քեզ կը պաշտեն,  
 Եւ քո սիրուն միշտ մէկըզմէկ կը խըշտեն:  
 Աղքատ մարդուն քաղցած փորին  
 Մարգարիտէն թանգ է գարին:



ՀԹ

ՃԸՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՁԻՒՆ

(Ըստ Եզովբայ)

Ճպուռն օրն ՚ի բուն լայնքին—երկայնքին  
 Քարշ կըգար անգործ՝ անհոգ իւր կեանքին,  
 Երգէր՝ ճըշէր՝ բոլոր ամառ,  
 Չանձրացուցիչ և յամառ:  
 Նորա չորս դին լիքն էր առատ,  
 Բընութեան յորդ ամեն բարիք,  
 Նա կը կարծէր ինք զինք ազատ,  
 Եւ չէր ըզգար ոչ մի կարիք:  
 Գիշերը քուն, ցորէկը կէր,  
 Անվերջ-վըճար տաղև երգեր,  
 Քան զի նորա կեանքը բոլոր  
 էր այսօր.

Իսկ հետևեալ օրւան համար,  
 Երբէք չուզէր տալ համար:  
 Անցան ամբան լոյս օրեր,  
 Տիրեց սաստիկ ցուրտ ձմեռ,  
 Ճրպուռն մընաց անտէր անտուն՝  
 Քաղցած դողար օրն 'ի բուն:

Ձրդիմացաւ գընաց մըրջման գըրացի  
 Կարօտ փըշոր մի հացի,

«Մայրիկ—կ'ասէր—Աստծու սիրուն  
 Եւ քո զաւկաց արևուն.

«Մի մերժէր ինձ կըտոր մի հաց

«Ձի կը սառիմ ես քաղցած.

Մըրջիւնն — ասաց—գընա՛ կորիւր,

«Բոլոր ամառն ի՞նչ արիւր:

«Կերգէի ես դուռ գըռնէ,

«Եթէ այդպէս, ուստի գընա՛ պար բըռնէ:

Ով չ'աշխատի ժամանակին,

Նա ծերութեան չունենար գին:



Չ

ՇՈՒՆ ԵՒ ԿՌՈՒՆԿ

(Ըստ Եզովբայ)

Պարոն շունը օր մ'ի բակին

Ներկայացաւ նորեկ տիկնոջ կըռուակին,

Ծանօթացան սերտ ու մօտիկ

Եւ շըրջելով տոտիկ՝ տոտիկ՝

Շողափեցին հարցեր բոլոր

Հին ու նոր:

Շունը ասաց—«ըստ ձիսի շան,

«Մըտերմութեան մեր 'ի նըշան,

«Շնորհ բեր ինձ՝ հազար բարի,

«Էգուց ճաշի ինձ մօտ արի:

Միւս օրն իրաւ, շունը սարքեց շըքեղ ճաշ,

Ապուր՝ լանդակ՝ փըլաւ ու խաշ,

Սառնափընդոր լեցւած բոլոր

Ափսէի մէջ յարթ և գըլոր:

Մէկմնալ տեսնաս կըռունկն եկաւ նագելով,

Իխմաւորեց շունն ընդ առաջ վագելով,

Տիկին—կ'ասէր—հըրամէ խընդրեմ տանըդ պէս:

Մի քաշ-իր կէր, ինչ որ Աստուած գըրկեց մեզ:

Հիւրը կըտցէր ափսէն տափակ,

Կըտցին ոչինչ չէր 'ի գար

Շունը լափէր արագ՝ արագ՝

Իւր լեզուով լայն և երկար:

Մըտերմական այդ ճաշէն վերջ,

Հիւրը տըկտոր, բայց մըտքին մէջ

Պահելով ճաշն անմոռաց,

Դատարկափոր շնորհ մաղթեց ու գընաց:

Տեսնես կըռունկն ալ՝ մի քանի օրէն,

Շան տըւած պատուոյ ճաշին փոխարէն,

Սարքեց մի ճաշ բազմատեսակ

Ղըրկեց շունին կոչնատոմսակ.

Եկաւ շունը ուրախ գըւարթ

Ըսպասելով մի ճաշ պարարտ,

Թէպէտ իրաւ ճաշն էր շըքեղ,

Բայց լեցւած էր սափորի մէջ վիզը նեղ.

Կըռռնին ազատ խոթէր կըտուցն և ուտէր,  
 Շունը նորա կըացին կաթիլ կը լըզէր:  
 Եւ այսպէսով տըւած ճաշին փոխադարձ,  
 Ըստ արժանոյն ըստացաւ վարձ:



**ԶԱ**

**ՄԵՂՈՒ ԵՒ ՕՐԻՈՐԴ**

(Ըստ Ֆլորիանու)

Մի օրիորդ գեղեցկադէմ՝ նազելի՛,  
 Դէմը դըրած բիւրեղեայ ջինջ հայելի,  
 Ոսկեգանգուր մագերուն ծամ,  
 Պըճնէր շքեղ ու փարթամ:  
 Որոնց վերայ տեղ՝ տեղ՝ ցոլար  
 Կոկոն վարդի ծիրանեվառ.  
 Մինչդեռ կոյսը իւր իգական  
 Զարգարանքներ նըւիրական՝  
 Կը յերիւրէր գեղեցկատէս  
 Մատւրներով փղոսկրի պէս,  
 Մէկմնալ յանկարծ մի խեռ մեղու  
 Իւր սըլաքը սուր և հատու,  
 Խըրեց կուսին շըրթունքն ի խոր,  
 Ծիրանեծիր և սիրածօր:  
 Խայթէն կոյսը կանչեց ընկաւ թալկահար,  
 Ներս նետուեցաւ աղախինը շընչասպառ.  
 Երբոր տեսաւ անգութ մեղուն զըժընդակ,  
 Մինչ պատրաստէր զայն տըրորել ոտքին տակ.  
 «Մեղսյ, — սոաց մեղուն — » ես՝ չեմ մեղապարս,

«Կուսին շըրթունք ես կարծեցի կարմիր վարդ:  
 Օրիորդն որ լըսեց՝ խայթը մոռացաւ,  
 «Թո՛ղ տուր — ասաց — ես չեմ ըզգար ոչ մի ցաւ:  
 Կընոջ սըրտին ցաւն ու արցունք  
 Կը բըժըշկէ մի փոքը ինչ խունկ:



**ԶԲ**

**Շ Ո Ւ Ն**

(Ըստ Եզովբայ)

Մի օր շունին գործն յաջողեց,  
 Բազըք նորա մի կըտոր մեծ՝  
 Դեր ու պարատ միս զըրկեց:  
 Միսը բերնին շունը գո՛հ էր և ուրախ՝  
 Ըզգուշութեամբ՝ միշտ նայելով յաջ ու ձախ,  
 Կը կասկածէր, որ չըլնի թէ գըթին տակէն  
 Իրեն բազըք միւս շըները յափըշտակէն:  
 Մըտածելով՝ մինչդեռ այսպէս հապըշտապ,  
 Հասաւ նա մօտ գետին ափ.  
 Ուզեց անցնել նորա միւս զին ապահով  
 Սարքել սեղան ծառերուն տակ խիտ ու գով:  
 Երբոր հասաւ կամըջին կէս՝  
 Նա շըրոյն մէջ թափանցիկ.  
 Տեսաւ կըտոր մ'իրենին պէս  
 Առաւել մեծ գեղեցիկ:  
 Շարժեցաւ իղձ լաւագունին,  
 Թողուց բերնին կըտորը,  
 Եւ նետուելով խոր գետին մէջ

Ուզեց որսալ խոշորը:  
 Բայց ի գուր, որ անհետացաւ  
 Իրականին կեղծ ուրուն,  
 Իսկ իրականն ճարակ եղաւ  
 Գետի քաղցած ձրկներուն:  
 Ով որ քիչով չի մընար գոհ,  
 Քիչն ալ շատին կը լինի գոհ:



ՉԳ.

ԾԵՐ ԵՒ ՄԱՀ

(Ըստ Եզովբայ)

Գեղջուկ մի խոր ալևոր,  
 Որն իւր կեանքին օրեր բոլոր,  
 Անցուցել էր իբրև հըլու հըպատակ  
 Աղբատութեան դըրօշին տակ:  
 Օր մ'ըստիպւած գընաց անտառ,  
 Փայտ կըտրելու խըրթճին համար.  
 Աշխատեցաւ ժամերով,  
 Խուրճ մի կապեց ճորով-մորով.  
 Առաւ շալակն հազիւ-հազ՝  
 Խըղզէր խեղճին շունչն ու հազ:  
 Օրն էր սաստիկ ցուրտ, ուղին էր սառած,  
 Ծերը տըքալէն կամաց առ կամաց,  
 Կեղնէր սարն 'ի վեր,  
 Հոգին կը քաղւէր:  
 Երբոր հասաւ նա լեռան ծայր,  
 Խուրճը ուսէն սահեցաւ վայր:

Ինքն ալ ընկաւ խուրճին վերայ շընչասպառ,  
 Կը բողոքէր կարծես երկինք, որ թըշուառ  
 Մարդկանց համար բաղդը անգութ և յամառ,  
 Ըստէպ անգամ կը զըլանայ  
 Գէթ միհանգիստ՝ խաղաղ մահ:  
 Այդ յուսահատ վիճակին մէջ՝  
 Չանձրանալով իւր կեանքէն խեղճ.  
 Կանչեց «ո՛վ մահ՝ ուր ես հասիր, առ հոգիս՝  
 Թըշուառ կեանքէս փըրկէ՛ դիս:  
 Ծէրուն ձայնն որ լըսեց մահը ահաւոր,  
 Գերանդին ձեռքն հասաւ սև՝ սև՝ կըմաղք չոր,  
 Ո՛վ ծէր—կասէր—ինչո՞ւ գու ինձ ձայն տըւիր,  
 Գուցէ հոգիդ կուզես յանձնել, շուտ եղիր:  
 Ծէրն ասաց—«ո՛չ՝ մըտքէս անգամ չէր անցել,  
 Ես կուզէի քեզնից խընդրել,  
 Որ օգնես ինձ և գըթաս  
 Փայտին խուրճը քամակըս տաս:  
 Որչափ կեանքը լանք դառնապէս,  
 Դարձեալ քաղցրէ մեր հոգին մեզ:



ՉԳ.

ԵՐԿՈՒ ՏԱԿԱՌՆԵՐ

(Ըստ Կրիլովի)

Փողոցի մ'էջ քարայտտակ,  
 Կը զըլէին երկու տակառ.  
 Մինը լիքն էր՝ միւսը դատարկ՝  
 Դատարկն արագ՝ արագ՝ շուտ գար.

Մերթ թըղըրդէր՝ մերթ կը թընդար,  
 Սմպի նըման կը գողար,  
 Մերթ կ'ոստոտէր և կուտար գանդ,  
 Հընչէր երբեմն նա իբրև գանկ:  
 Լիք տակաւը սորա ներհակ,  
 Սուսիկ՝ փուսիկ՝ 'ի գիւ գար,  
 Տատանելով յաջ ու յահեակ  
 Նա չէր ցընցէր և ոչ մի քար:  
 Դատարկն որչափ հանէր աղմուկ աղաղակ,  
 Դա լուկ ձայն մ'էր աննըպատակ,  
 Իսկ լիքը լուռ թէպէտ զընար,  
 Բայց գործ կանէր օգտակար:  
 Տակառիս պէս այն կան փուճ զըլուխներ,  
 Շատ կորոտան՝ չեն անձրևէր:



### ՁԵ

#### ԳԱՅԼ ԵՒ ԿՌՈՒՆԿ

(Ըստ եզովբայ)

Որկորածէտ գայլը քողցած քանասար,  
 Գողանալով մի գեր ոչխար,  
 Նա կը լափէր այնպէս. անյագ՝ անհամբեր,  
 Ոսկերքն անգամ պարարտ մըսէն չէր բաժնէր:  
 Այդ վայրէնի ախորժակին ժամանակ,  
 Ուրջնոսկորն իբրև զընտակ,  
 Խըրեցաւ խոր կոկորդին մէջ,  
 Կարծես հասաւ կեանքին վերջ:  
 Կապըտկեցաւ և կը խըռկար շընչասպառ,

Լըռեց սիրաւ անգութ և չար.  
 Դուրս ցըցեցան աչեր խոլոր,  
 Սարսէր՝ գոողար՝ մարմնով բոլոր:  
 Ինչպէս որ միշտ բաղան է չեզոք՝  
 Չար թէ բարի՝ նա հաւասար ցոյց տայ հոգ,  
 Այդպէս և այդ չարածամին  
 Նա չը մերժեց անըզգամին.  
 Չի ոչ հեռի կանցնէր կըռունկ բարձրավիզ,  
 Երկարութեամբ մի բանի թիզ:  
 Գայլն որ տեսաւ թաթը շարժէր,  
 Նըշմարնեղով ցոյց տար վըտանգն մահաբեր,  
 Կուռնկն իսկոյն՝ զերդ բըժիշկ փորձ.  
 Առաջն անցաւ կատարել մի բարի գործ:  
 Խոթեց կըտուցն կոկորդն 'ի խոր,  
 Եւ մահացու կորդեց ոսկրին մեծ կըտոր:  
 Գայլը ազատ շունչ մը քաշեց,  
 Կարծես եղաւ վերադարձ,  
 Իսկ կըռունկը գայլէն խընդրեց  
 Բըժըշկութեանն արդար վարձ:  
 «Քեզ վարձ — կանչեց գայլը սըրտոտ,  
 «Չես ակնածիր անամօթ,  
 «Իմ բեզ արած բարւոյս 'ի վարձ,  
 «Փըտիս խընդրել փոխադարձ:  
 «Փառք տուր, որ ես թոյլ տըւի բեզ,  
 «Ողջ հանելու յիմար զըլուխդ բերանէս:  
 Եթէ չարը չանէ չարիք,  
 Պէտք է սէպել գայն բարիք:



29

ՎԱՐԺԱՊԵՏ ԵՒ ԱՇԱԿԵՐՏ

(Ըստ Լաֆոնտէնի)

Չարածըճի մի երեխայ  
ձիշտ գետին ափ ծառին վերայ,  
Թարթափելով ժամն ի բուն,  
Կը պըրպըտէր թռչնոց բոյն:

Մէկմնալ յանկարծ տըղուն ոտքը սահւեց վայր  
Չըրին վերայ կախուեց բըռնած ոտին ծայր,  
Ճըչէր՝ կանչէր՝ օգն ի ծածան,  
Նդերական թողով ձայն,  
Եւ ակներև մահուն առաջ,  
Ազատարար խընդրէր աջ:

Այդ միջոցին բաղաը եղաւ կարեկից,  
Չի ոչ հեռու եղեոնական եզերքից,  
Նկաւ տըղուն վարժապետը  
Լողալ գետը:

Երբ տեսաւ իւր սանը կախւած ՚ի ձառէն,  
Սաստիկ սոսկաց, բայց փըրկելու փոխարէն,  
Ըսկաւ խօսել խորիմաստ խըրատ,  
Խօսքերն հեղւէին բերնէն յորդառատ.  
Առաջաբանը դեռ չէր աւարտած,  
Թըլցաւ տըղուն ձեռք ընկաւ ջուրն ՚ի ցած:  
Ան ստէնը միայն խելօք խիկարը,  
Թողուց խըրատն ու ճառը.  
Եւ հազիւնազ այդ վտանգէն մահաբեր  
Խըլեց տըղուն կիսամեռ:

Ո՞վ խիկարներ բարոյախօս  
Դուք՝ որ սիրէք վըտանգաւոր ժամանակ,  
Խօսել երկար խըրատ՝ քարոզ,  
Չեր խօսքերուն տալով վըսեմ եղանակ.  
Լաւ կըլինի, որ փըրկէք նախ,  
Յետոյ սըփռէք ձեր շանթերը յաջ ու ձախ:



25

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԻՍՍԱՐՉԱՆ

(Ըստ եզովբայ)

Մեծ ճարտարութեամբ երկու աղուսներ,  
Իշխանի մ'հաւնոց մտան մութ գիշեր,  
Ուր որ ազատ համարձակ՝  
Լայն և արձակ.

Այս իմ, այն քո, ստին կերան  
Գեր՝ գեր՝ հաւեր քընքշիրան:  
Կուշտ ձաշէն վերջ լուսնածագին  
Մեր աղուէսներն այր և կին,  
Երբ իշխանին մըտան պարտեզ  
Ուր ծաւալէր կանանչ բեհեզ.  
Տեսան հոն տեղ ծաղկազըւարձ,  
Փոքրիկ բըլբըն ՚ի գագաթ,  
Տանտիկնոջը կիսարձանը,  
Մարմարիոնէ իբրու կաթ:

Ճարտար ձեռք կոփւած սիրուն՝  
Յորմէ պակսէր միայն հոգի և արիւն:  
Արու աղուէսն գայն գըրկելով բազկին մէջ  
Ասաց երկար զըննելէն վերջ:

«Գրլուխ շքեղ և գեղունի,  
 Բայց ափսոս՝ որ ուղեղ չունի»:  
 Ծիծաղեցաւ կինը սուր՝ սուր՝  
 Մի ափսոսար ասաց ՚ի գուր,  
 Թէ ունենար ուղեղ դէմքին համաձայն  
 Դա չէր լինէր տիկնոջ նրման:



ՁԸ

ՈՐՄՈՐԴ ԵՒ ՇՈՒՆ

Փամանակով կար մի որսորդ,  
 Փորձ՝ քաջազեղն՝ անվեհեր.  
 Նորա նեար միշտ անվրբէպ,  
 Կըտրէր ընդ մէջ թել մի հեր:  
 Նա իւր նրման քաջ՝ ընդունակ,  
 Հաւատարիմ ունէր շուն.  
 Որն իւր արեան վերջին կաթիլ  
 Ձոհէր տիրոջն արևուն:  
 Սոքա երկուքն անբաժան  
 Աշխատեցան շատ տարի,  
 Բաժանեցին հաւատար  
 Կեանքի չար օրն ու բարի:  
 Որսացին շատ էրէ վայրի և զազան  
 Անթիւ թռչներ զանազան:  
 Բայց ինչպէս որ մարմինն է թոյլ և տկար,  
 Փամանակին հոսանքին դէմ անդադար,  
 Այսպէս շունին աչերուն լոյս  
 Հոտառութիւնն նուրբ և սուր,

Լըսողութիւն՝ ստից կորով՝  
 Խանգարէին օր աուր:  
 Սըրտին խորէն թէպէտ կըզգար  
 Սաստիկ ձրգտունն՝ ուժ և կար,  
 Բայց անդամներ մարմնոյն բոլոր  
 Չըլանային օրէ օր:  
 Նոյն էր հոգին՝ նոյն սիրտն ու սէր,  
 Բայց ինքը չէր իւր մարմնոյն տէր:  
 Կը բարկանար տէրը ըստէպ  
 Շանը վերայ ալևոր,  
 Կասկածելով, որ ծուլութեամբ  
 Նա յամառի կամակոր:  
 Եւ երբեմն մոռանալով  
 Շանը բազում երախտիք,  
 Մինչև անգամ անխիղճ կերպով,  
 Կը մըտրակէր զայն սաստիկ:  
 Չըղիմացաւ օր մի շունը վերջապէս,  
 «Տէր իմ—ասաց—ինչո՞վ արդեօք մեղայ ես,  
 «Որ դու այդպէս անդադար  
 «Կը պատժէս զիս չարաչար:  
 «Կը պահանջես լինել տսկուն՝ փորձ՝ ու քաջ,  
 «Ինչ որ էի տասը տարի ես առաջ:  
 «Բայց չե՞ս հաշւէր, որ ամեն մի անցած տարին  
 «Տանի իւր հետ մեր մարմնական մի բարին:  
 «Մի պահանջէր՝ ուստի ինձնից տարապարտ,  
 «Այն՝ որ ոչ քեզ, այլ բնութեան էի պարտ:  
 Մարմինն այս՝ ժամանակին ալեաց դէմ,  
 Քիչ՝ քիչ՝ մաշի և քայքայի իբրու վէմ,  
 Բայց սիրտը միշտ մընայ առողջ անփոփոխ,  
 Եւ չըլինիր ժամանակէն ոտնակոխ:

ԶԹ.

ԳՈՐՏԵՐՈՒՆ ԲՈՂՈՔԸ

(Ըստ Եզովբայ)

Անարխիկական վարչութեան ձևէն  
Խիստ ձանձրանալով գորտերը արդէն.

Մի համազգի ժողովոյ մէջ  
Վըճոեցին այդ խընդրոյն տալ վերջ:  
Գուժարուեցան քանակութիւն բազմաթիւ  
Եւ ըսկսան գիշեր ու տիւ,  
Խընդրել՝ ուզել Արամազդէն մեծագօր,  
Իւրեանց համար մի ինքնակալ թագաւոր.

Աչք փակեցին՝ բերան բացին,  
Եկան—գացին՝ կրուկուացին.

Մինչ այն կէտին, որ ձանձրացաւ Արամազդ,  
Լըճին վերայ ձըգեց մի հաստ՝  
Երկար գերան ծանր ու անկալ,  
Գորտի յամար ինքնակալ:  
Գերանը հանեց շառաչ մ՝ ահաւոր,  
Ալէկոծ-եղաւ լըճակը բոլոր:  
Գորտերն ամեն առջի բերան  
Տատանելով զահի հարան.

Եւ քաշւեցան բոյներն ՚ի խոր թաքթաքուր,  
Մինչ խաղաղեց լըճակին ջուր:  
Յետոյ քիչ քիչ ջրին երես

Գուրս ցըցելով ցըռուկները գողի պէս,  
Երկար-բարակ բըննէին նոր  
Թագաւոր:

Երբոր տեսան, որ կը լողայ անմըռունչ

Կարծես չունի հողի և շունչ.

Հովին դիմաց գընա երեր,

Ոտքը գըլխէն չէ տարբեր:

Այն ատէնը հինգ-տասը գորտ կըտրիճ ու քաջ,  
Ուժ — մէկ արին գացին առաջ.

Կամաց կամաց մօտենալով

Ծանր ու դանդաղ թագաւորին քով.

Շողափեցին քիչ-քիչ նորա կոշտ իրան  
Հետըզհետէ ելան վերան,

Կրուկուալով հըռչակեցին միաբերան,

Որ ինքնակալն էր անհողի մի գերան:

Հեղեղեցան տեսնես գորտեր բիւրաւոր,

Եւ ըսկըսան խընդրել ուրիշ մի թագաւոր:

Տաղտկացաւ յոյժ Արամազդը հեռատէս,

Ղըրկեց անոնց մի արաքիլ գորտակէր,

Որնոր թագը գըրածին պէս,

Մերկացուց իւր սուր սոււեր:

Ըսկըսաւ ջարդել՝ ուտել անողոք,

Եւ չուզէր լըսել նա ոչ մի բողոք:

Լըռեց կրուկուոց՝ գորտերն ահաբէկ,

Լային ողբային գիշեր և ցորէկ:

Արամազդը ամպի նըման գոռաց վերէն,

«Լաւ է լըռէք, լացի՝ ողբի՝ փոխարէն,

«Որ չըլնի թէ բաղդը ղըրկէ ձեզ նորէն

«Մի ուրիշ մ՝ալ առաւել չար՝ անօրէն:



Ղ

ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

(Ըստ Եզովբայ)

Արջն որ ուզէ լակոսն ուտել,  
 Զայն կը թաթխէ ցեխի մէջ,  
 Այդ օրինակին հետեւելով,  
 Գայլը երկար ծոմէն վերջ,  
 Հանդիպեցաւ օր մ' առուին ափ,  
 Գառան մի ճիղմ կաթնակէր,  
 Որնոր շոգէն այրած 'ի տապ,  
 Վըտակէն ջուր կը խրմէր:  
 Կանչեց «նվ դու անմիտ լակոս,  
 Քո ցըռուկով աղտոտ-կեղտոտ,  
 Կը պըղտորես վըտակին ջուր,  
 Եւ շողիքով կապականես անմաքուր:  
 Քաշուէ մէկ դի  
 Շան որդի:  
 Դողդոջ ձայնով գառնուկն ասաց անմիրայ,  
 'Ի դուր տեղը կը բարկանաս իմ վերայ,  
 Զեմ կարող ես  
 Խանգարել քեզ,  
 Զի կանգնել եմ ընթացքն 'ի վար քեզնից ցած.  
 Իմ պըղտորած ջուրը չըլնիր վերագարձ.  
 «Այ լիբբ լակոտ-կանչեց գայլը քանասար,  
 «Տէս ինչ յամառ, խօսի ինձ հետ հաւասար.  
 Անցեալ տարւէն կը յիշեմ ես շատ լաւ քեզ,  
 Դու խոսեցար ինձ հետ այս պէս:

Գառնուկն ասաց-ծառայ եմ քեզ,  
 «Դեռ մէկ տարու չըկամ ես:  
 «Թէ դու չէիր-գայլը կանչեց,  
 «Քոյ եղբայրն էր՝ կամ քո բոյրը քեզնից մեծ.  
 «Գառը ասաց» որբ եմ ազնիւ սլայազաս  
 «Զունեմ ոչ ոք Աստուծմէ զատ.  
 «Գայլը ոռնաց— առաւել վատ.  
 «Եթէ որբ ես և չունիս ոք,  
 Որուն համար քեզ պէտք լինի տանել հող.  
 Ասել է թէ դու անօգուտ կեանքիդ մէջ  
 Ապրիս պիտի մինչ ի վերջ.  
 Ուստի լաւ է հիմայ լինիս օգտակար՝  
 Գեթ եմ քաղցած փորիս համար:  
 Զայդ ասելով գայլն անիրաւ  
 Պատառեց գառն ու կերաւ:  
 Երբ պէտք լինի զօրաւորին  
 Զոհել իրեն անյագ փորին՝  
 Անօգնական խեղճ տըկարին  
 Կեանքն ու բարին.  
 Նա կը զըտնէ իւր սըրտին խոր  
 Փաստ ու պատճառ օրինաւոր:



ՂԱ

ԵՐԿՈՒ ՇՈՒՆԵՐ

(Ըստ Կրիլովի)

Երկու շուներ ուժով՝ լուսով,  
 Մինը հօտի պահապան,

Միւսը որսի՛ շատ քաջ ու փորձ,  
Հաւատարիմ օգնական:

Սոքա մէկ տեղ խոհանոցի  
Պատուհանին տակ պառկած,

Կը խօսէին ոգևորուած՝  
Շոշափելով մի նոր հարց...

Մինը կասէր միւսին «գիտէ՞ս՝ սիրելիս,

— «Այս լոյս դարուս շատ ամօթ է շան ազգիս,

— «Որ շատ անգամ փուճ մի կըտոր ոսկրի համար,

— «Կը խածխըծեն՝ խըշտեն՝ միմեանց չարաչար:

— «Տէս՝ որ հիմայ մարդիկ անգամ,

— «Որկորաժէտ և անյագ,

— «Ըսկըսել են չափաւորել՝

— «Մեղմել իւրեանց ախորժակ:

— «Ասան դու ինձ՝ մենք մինչև երբ

— «Ապրինք պիտի գազանակերպ:

Որսորդն ասաց— «այն պէտք է եղբայրութիւն

— «Կազմել՝ խօսել և քարոզել օրն ՚ի բուն.

— «Որ աշխատի ամեն մի շուն

— «Իւր վայրենի կոշտ բընութիւն:

— «Մեղմացնել բերել կարգի

— «Շուն անունը անել յարգի:

— «Կեցցէս կանչեց հօտի շունը

— «Յաւերժացի շան անունը,

— «Արի ուրեմն դընենք դաշինք հաստատուն

— «Եւ հիմնադիր այս սուրբ գործին ես ու դուն:

Ասին այսպէս և սրխմեցին միմեանց թագ,

Եղբայրացան և կոչուեցան հարազատ:

Վերջացած չէր գըգուանքը շանց

Եւ համբոյրներ նորէ նոր

Խոհարարը պատուհանէն

Նետեց ոսկրի մի կըտոր,

Այդ որ տեսան սուրբ շուները,

Յարձակեցան շանթի պէս,

Արիւնահեղ բացին կըռու

Հեկտորի գէմ Աքիլէս:

Եւ կըռիւն այնու վերջացաւ անեղ,

Որ նոցա վերան չըմնաց ողջ տեղ:

Մինչ մէջ տեղը չըկայ ոսկոր,


Կապրինք հանգիստ և անդորր.

Կը փայփայենք՝ գգուենք սիրով

Եւ ցոյց կուտանք գութ ու գորով.

Իսկ երբ ոսկորն որ երկնայ

Շանց կռիւն ո՞ւր կը մնայ:



### ՂԲ

#### ԳՍՅԼ ԵՒ ԱՐՋՈՒԿ

(Ըստ Կրիլովի)

Գայլ մ'անվանի հին աւագակ

Մեծ սըրիկայ արիւն-կըզակ,

Օր մ'անտառի մօտի հօտէն բազմաթիւ,

Գողցաւ մի գէր գառնիկ մատղաշ

Զարկեց շալակն և հեռացաւ տեղ մը գիւ,

Թըփոց ներքև սարքեց պարարտ՝ շըքեղ ճաշ:

Ուր ըսկըսաւ ուտել՝ լափել՝ անկուշտ՝ անյագ,

Ճարճատէին ատամանց տակ

Քաղցրածըծուկ իբրև խորտիկ

Ոսկրոտիք:

Ախորժակը որչափ ալ լաւ՝ մեծ՝ լինէր  
 Նա չը կըրցաւ վերջացընել գառը գէր:  
 Մաս մը պարարտ միս փորոտիք  
 Երեկոյի թողուց ընթրիկ:  
 Յետոյ պառկած իւր որսին քով  
 Կը հեշտանար արեան հոտով:  
 Մէկ մնալ տեսնաս հոն դարևոր  
 Կաղամախին խոռոջէն խոր,  
 Արջուկ մ'ելաւ կամաց՝ կամաց՝  
 Մըսին հոտէն հըրապուրւած.


Եկաւ գողցաւ գայլին ընթրիկ, թաթին ծագ  
 Ըզգուշութեամբ փախաւ մըտաւ իւր ի ծակ:  
 Երբոր գայլը իւր դեր միւր չը գըտաւ  
 Կատաղեցաւ՝ կըրակ դարձաւ,  
 Դիւահարած ունար կանչէր,

Հողը ճանկէր:

- «Է՛յ դըբացիք՝ հասիք շուտով՝
- «Կը կողոպտեն զիս ցորէկով.
- «Բոլոր արգար շահս ու վաստակս սեպհական  
 — «Արլեց ինձնից սըրիկան:
- Ուր են օրէնք՝ արդարութիւն՝ կարգ՝ կանոն,  
 — «Կործանեցան հաւատք՝ կըրօն:
- «Գիշեր՝ ցորէկ՝ սիրտըդ դող  
 — «Ամեն քայլիդ միայն գող:

Ով կը գողնայ մեծ գումարներ՝ կայք և հող,  
 Նա համարւի մարդ գործունեայ և յաջող.

Իսկ վայ քաղցած գողի գըլխուն,  
 Որն ըստիպւած կը գողնայ ձուն:



Ղ. Կ.

ԷՇ ԵՒ ՍՈՆԱԿ

(Ըստ Կրիլովի)

Գեղազւարճ գարնան մի գով երեկոյ  
 Էջը հանգչէր ծառին ներքև կուշտ և գոհ.

Ուր տեսնելով սոխակին՝

«Ասաց—«բարև տիրացու,

«Ես լըսել եմ քո մասին,

«Որ մի լաւ ձայն ունիս դու.

«Օ՛ ես գիտե՛ս. շատ կը սիրեմ երգ-նըւագ,

Եւ ՚ի բընէ երգի եմ շատ ընդունակ.

Ուստի երգէ՛ մի քանի բան տեսնեմ քեզ,

Որ իմ կարծիքն ասեմ ես:

Գարնան երգիչը, երբոր գայդ լըսեց՝

Խանդը բորբոքեց.

Ըսկըսաւ նըւագ քաղցը ու ներդաշնակ,

Ձայնին ելեէջ խոր անտառին մէջ

Ծաւալէր հովին նուրբ արեաց վերան,

Թըրթոային գոյն՝ գոյն ծաղիկներ ծիրան:

Լըռեցին թըռչունք՝ լըռեց և քամին,

Կը հընչէր միայն գեղգեղ սոխակին,

Սուլէր՝ ճըչէր՝ կը ճըռուղէր,

Թըռչին խաղեր՝ միմեանցից վեր:

Դայլայլիկներ մանրակըրկիտ,

Կարծես հատ հատ թավին կըտցէն մարգարիտ.

Մերթ բարձր ու սուր ձայն սըրտառուչ,

Մերթ մեղմ և նուրբ ըզգացմանց շունչ

Սիրամըրմունջ.

Հըմայեցին սըրտեր բոլոր,

Տարածելով սիրոյ կայծեր նորէ նոր:

Երբ սոխակը երգն աւարտեց ու լըռեց,

էշը բացաւ լայն ցըռուկը յօրանջեց.

«Վատ չէ — ասաց — բաւական լաւ երգեցիր,

«Կարելի է քեզ ուշ դընել անձանձիր.

«Ցաւալի է միայն, որ դու չես ծանօթ,

«Մեր աքլորին հետ հըմուտ,

«Թէ մի քանի դաս սունկէիր նորա մօտ


«Քեզ կը լինէր մեծ օգուտ:

Սոխակն որ լըռեց իշուն դատաստան

Թըռաւ՝ հեռացաւ անթիւ անդաստան:

Տէրը փըրկէ ամեն ատէն

Իշագըլուխ քըննագատէն:



ՂԳ

ՓԻՂ ԵՒ ՔՈՒՅՆ

(Ըստ Կրիլովի)

Օրին մեկը ժուռ տանէին փողոցներ

Փիղ մը խոշոր լեռան պէս.

Ցոյց բերելու նըպատակաւ փըղին տէր,

Չայն հանել էր ի հանդէս:

Ինչպէս որ փիղն էր երևոյթ տարօրինակ,

Նորա հետուստ ապուշներու մեծ բանակ,

Բերանին բաց գընան դանդաղ,

Փիղը կազգէր, ոմանց ծիծաղ, ոմանց վախ:

Այդ միջոցին հոն նորա մօտ,

Մի մասնաշափ փոքրիկ քոթոտ,

Հաչէր՝ ճըչար՝ կատաղաբար,

Անգաղար:

Վագէր՝ նետուէր՝ նա մանուամն

Վեհ հըսկային յանդիման:

Մինչդեռ՝ որ նա փիղն ահաւոր,

Կարծես կուզէր սլատառոտել կըտոր՝ կըտոր՝

Նորա մօտէն անցաւ Շավկան

«Քոթոտ — կասէր — ինչո՞ւ այդքան

Վըրդովելով ճըչաս՝ հաչես՝ չարաչար,

Չայնըզ անգամ խըզեց տըկար,

Բայց ՚ի դուր է, որչափ ընկնիս դու վեր՝ վեր՝

Քեզ փիղն ահանջ չի կախեր:

Քոթոտն ասաց — էհ բան չունիս,

Թող որ բոլոր շըներն ասեն՝ զովելով զիս,

Թէ քոթոտը այնպէս քաջ է,

Որ մինչ անգամ փըղին վերայ կը հաչէ:



ՂԵ

ԽՈՁԸ ԿԱՂՆՈՅՆ ՆԵՐՔԵՒԸ

(Ըստ Կրիլովի)

Օր մը խոզը ծէր՝ դարևոր՝ կաղնոյն տակ,

Ուտէր՝ լափէր՝ արագ-արագ.

Առատ թափւած կաղինները քաղցրահամ,

Ճաշ մը շըքեղ ու փարթամ:

Երբ կաղիններ մաքրեց բոլոր,

Եւ կըշտացուց իւր մեծ փոր.  
 Անյագութեան կըրից զօրէն,  
 Ծառին տըւած բարի պըտողոյն փոխարէն.  
 Խողըն ըսկըսաւ պիղծ ցըռուկով  
 Կաղնոյն արմատ փորել՝ կըտրել՝ անգորով:  
 Այդ միջոցին ծառին վերէն  
 Ագռաւ մ'ասաց— «այ անօրէն,  
 Ինչո՞ւ 'ի զուր և տարապարտ  
 Կըտրես՝ ջընջես՝ կաղնոյն արմատ.  
 Չէ որ՝ տըւած խոր վերքերէդ անխընայ,  
 Չի դիմանար կը չորնայ:  
 «Թո՞ղ չորանայ, պէտքս ալ չէ—խողն ասաց,  
 Ես նորամէն չեմ յուսար հաց,  
 Թող որ լինի կաղին առատ  
 Նա ինձ կուտայ եղ պարարտ:  
 «Ա՛յ ապերախտ, կաղնին ասաց,  
 Աչքըդ բաց,  
 «Կեղտոտ ցըռուկըդ քո վերցուր վեր,  
 «Եւ տէս, որ այդ շահաբեր,  
 «Թարմ կաղիններ՝ կարագի պէս,  
 Կը ծընիմ ես:  
 Տըգէտը խոր կուրութեան մեջ,  
 Կարհամարէ մինչև ի վերջ,  
 Գիտութիւններ՝ ուսմունք բոլոր,  
 Որոնց պըտուղն օրէ օր,  
 Կը ճարակէ առատ՝ առատ.  
 Յետոյ կըլնի խողի նըման ապերախտ:



## Դ. 9

Ա.Լ.ՖՈՆՍ ԹԱԳԱՒՈՐԸ

(Ըստ Ֆլօրիանու)

Իսպանիոյ տէր՝ մեծըն Ալֆոնս,  
 Որ համարէր իմաստուն.  
 Բայց իմաստնոյ չունէր այնքան  
 Շընորհ, որքան էր գիտուն:  
 Խոր աստղաբաշխ, հաշուադէտ քաջ,  
 Երկինքն էր գիրք նորա առաջ,  
 Նա շատ անգամ թողլով ատեան, գաւազան, թագ,  
 Կը թարթափէր ձեռքը դիտակ.  
 Եւ առաւել լաւ կը ճանչնար  
 Երկնից կամար  
 Իւր աստղերովն անհամար,  
 Քանց իւր փոքրիկ տէրութիւնը խեղճ ու նըլազ.  
 Իբրև հատիկ մի աւազ:  
 Օրմը մինչդեռ երեկոյին՝  
 Կայսրը կերթար դիտարան,  
 Նորա շուրջը նախարարներ,  
 Պալատական և իշխան:  
 Կայսրը ասաց— «յոյս ունիմ ես,  
 Որ թանգագին նոր դիտակովս հեռատէս.  
 Այս գիշերիս վերջոյ 'ի վերջ:  
 Պիտի տեսնեմ մեզ նըման մարդ լուսնոյ մէջ:  
 Նախարարներն ասին այս՝ արքայիդ յոյս  
 Կը հաւատամք, որ կատարւի անտարակոյս:  
 Այդ միջոցին մի խեղճ մուրիկ ալևոր,

Արձակելով հագագներ խոր,  
 Հետ կըրունկին կերթար կայսեր,  
 Ողորմութիւն կը հայցէր:  
 Կայսրը լինելով սաստիկ ըզբաղւած,  
 Չէր լրատէր ծերուն ձայն դողդոջ ու ցած.  
 Աչքը երկինք — այժմ՝ կասէր,  
 Ինձ բընութեան գաղտնեացը սէր  
 Օգնէ պիտի, որ լուծեմ վէճ՝  
 Յայտ բերելով մարդ բանական լուսնոյ սէջ:  
 Չըզիմացաւ ծերն վերջապէս,  
 Բըռնեց կայսեր քրդանցէն,  
 Արքայ — կասէր — դարձիր ու տէս,  
 Քաղցած ու զուրկ չոր հացէն:  
 Որչափ խեղճեր ամեն մի օր,  
 Մեռնին կարօտ քոյ սեղանին փշրանքին չոր:  
 Թո՛ղ ուրեմբն երկինքն՝ իջիր առ մեզ ցած,  
 Երկրիս վերա դու մեզ տէր ես որոշւած:  
 Եւ լուսնոյ մէջ մարդ փընտուելու փոխանակ,  
 Կերակրէ մեզ, որ կը սովիմք ոտքիդ տակ:



ՂԵ

ԵՐԿՈՒ ՇՈՒՆԵՐ

(Ըստ Լաֆոնտէնի)

Լըճին վերայ տատանէր լէշ,  
 Սատկած մի էշ,  
 Որն լողալով հովին դիմաց,  
 Կը հեռանար կամաց՝ կամաց՝

Այդ միջոցին անդ լըճին մօտ,  
 Երկու շններ քաղց ու կարօտ:  
 Որոնէին իւրեանց համար  
 Ճարակ յարմար:  
 Նոցամէ միմն տեսնելով լէշն՝ ի ջըրին,  
 Կասէր այսպէս ընկերին:  
 Քո աչերդ են շատ հեռատէս,  
 Նայէ մէկմը. ահա կարծես, ջըրին երես,  
 Կը տատանի խոշոր մի լէջ  
 Կով՝ թէ էշ:  
 Միւս շունն ասաց զատ որոշ կը տեսնեմ ես,  
 Դա մի յաջող բաղա է մեզ,  
 Բայց այդ, մեծ բաղաին հանելու համար.  
 Պէտք է մեզ անցնել վրտանդ անհամար.  
 Չի լիճնէ շատ խոր,  
 Քամին է ժըլտոր.  
 Որով մեզ լողալ այդ լիճը երկար՝  
 Ոչ ուժ կայ ոչ կար:  
 Ուստի լաւ է, խըմենք լըճին մենք մինչ ի խոր,  
 Չուր բոլոր:  
 Ան ատէնը լէշը խոշոր,  
 Մէկ մ'որ նըստի յատակն ի չոր,  
 Հեշա՛ և հանգիստ մեզ համար,  
 Մի շաբաթւան կըլնի պաշար:  
 Ասաց այսպէս համոզուեցան,  
 Եւ ըսկսան  
 Լըճի ջուրը խըմել՝ լափել արագ՝ արագ՝  
 Մինչև այն կէտին, որ խայտառակ,  
 Չըզիմացան  
 Հետըզհետէ ճաթեցան,

Չըկայ մի մարդ երկնքին տակ,  
Որ չունենայ իւր նըպակ,  
Բայց կան ոմանք,

Որ փոխանակ,

Փնտռել և գըտնել ուղիղ ճանապարհ,

Մի որոշ կէտի հասնելու համար.

Կընտրեն ուղի խոտոր և ծուռ,

Եւ կը ձըգտին խըմել բոլոր լըճին ջուր,

Որով իրենք իւրեանց օգտին

Կը ճաթին:



## ՂԸ

### ԱՐԵՒ ԵՒ ԶՐԱՅԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐ

Մի բռնաւորի հարսնեց հանգէսին.

Մինչ զեռ գետի պէս կը վազէր զինին,

Ամփոխը մոռցած իւր ցաւեր բոլոր,

Կը սօնէր հարսնեց փառքն հանդիսաւոր:

Ուրախ զըւարթ անյիշաչար,

Գայլին դիմաց իբրև ոչխար.

Նա կերգէր բաղզն ու բարին,

Իւր կեզեքիչ բըռնաւորին:

Ժամանակով Եգովբոսը առթիս յարմար,

Պատմել էր մի լաւ պատահար:

Որ արևը երկնից հըզօր ինքնակալ,

Ցանկացել էր ամուսնանալ.

Այդ համբաւոյն հըռչակն երբոր լըսւեցաւ,

Բոլոր աշխարհ իրար անցաւ:

Լըճի՛ գետի՛ ճահճաբընակ,

Ժողովուրդներ ամեն տեսակ,

Տեսնես իսկոյն մէկ առ մէկ,

Զարհուրեցան ահաբէկ:

«Վայ մեզ կասեն հասաւ մեր վերջ,

«Պիտ այրւինք երկնատարափ հըրոյ մէջ,

«Զի երբ արևն իրեն նըման.

«Հինգ տասը հատ ծընի գաւակ,

«Ան ատէնը մեզ անպայման, »

«Չըլինիր մի տեղ երկնքին տակ.

«Ծով՛ գետ ու լիճ,

«Ծանծաղ ճահիճ.

«Դառնան շողի՛ ցընդին զերդ ծուխ

«Իսկ մենք կըլնիմք սև ածուխ:

Զարմանքն այն է, որ այդ մասին,

Գորտեր՝ ձըկներ ի միասին,

Զուրախացան թոյլ՝ միամիտ՝ մարդկանց պէս,

Այլ ցոյց տըւին խեղք հեռատէս:



## ՂԹ

### ԿԱՆԱՆՅ ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹԻԻՆԸ

Կանանց բերնին մէջ կասէն՝ որ

Բակլան անգամ կը մնայ չոր:

Թոյլ է անոնց շըրթանցը կապ

Եւ լեղունին չունի չափ:

Սանդրոն օր մը առտու կանուխ զարթելով.

Դըրգեց կընոջն—«հա՛ քա՛ կասէր ել շուտով»:

«Գիտես՝ այնպէս մի արտառոց անսովոր՝  
 «Պատահեցաւ դիպած մի նոր,  
 «Որ աշխարհք՝ աշխարհք եղածէն ՚ի վեր,  
 «Այդպիսի մի բան, դեռ տեսնուած չէր:  
 Կինը կէս քուն, կէս գարթուն,  
 Թօթափելով ծանրը մըրափ աչերուն,  
 —Այ մարդ—կասէր—ի՞նչ է աս, ի՞նչ եղաւ,  
 «Կատակ կանես թէ իրաւ,  
 —Ի՞նչ կատակ՝ ի՞նչ, սիրելիս,  
 «Եթէ լըսես կը սառիս:  
 «Բայց դա այնպէս մի գաղտնիք է սըրբազան:  
 «Աստուծմէ գատ, ոչ ոք չպտի գիտնայ զայն:  
 «Ասան հով մարդ զիս մի տանջէր,  
 «Աստուած վըկայ, ոչ ոքի բան չեմ ասէր:  
 —Եթէ կերդնու լըսէ ու տէս,  
 «Ահա այս ձուն ածեցի ես:  
 —Ձունը գըլուխս, այդ ի՞նչ կասէս,  
 «Վայ ինձ ի՞նչպէս:  
 —Այնպէս՝ ինչպէս մի ածան հաւ  
 «Ածեցի ձուն կըրելով ցաւ:  
 «Սո՛ւս ե լուռ կաց, Աստուած սիրես,  
 «Ապա թէ ոչ ծաղը ու ծանակ կը լնիմ ես:  
 «Գիտցած եղիր յետոյ մարդիկ անիրաւ  
 «Իմ անունըս կը դնեն հաւ:  
 —Աստուած չանէ դու ի՞նչ կասես,  
 «Միթէ այդքան յիմար եմ ես:  
 Բայց երբ Սանդրոն գընաց գործին,  
 Կինը իսկոյն իւր գըրացին,  
 Կընքամօրը մօտ շունչն առաւ,  
 Դէմքն անլըւայ քաղցած՝ ծարաւ,

«Գիտէս —կասէր—ան կընքամար,  
 «Մեզ պատահեց այնպիսի մի պատահար,  
 «Որ աշխարհք՝ աշխարհք եղածէն ՚ի վեր,  
 «Այդպիսի մի բան դեռ պատահած չէր:  
 —Վա՛յ՛ շուտ եղիր սանամար,  
 «Ասան Աստուծու սիրուն համար:  
 —Բայց գիտէս դու, քուրիկ-մարիկ,  
 «Պա մի խորին է գաղտնիք:  
 —Թո՛ղ կարկամի լեզուս՝ բերանս՝ սանամար:  
 «Եթէ մէկու մ՝ ասեմ մի խօսք ձեզ համար:  
 «Փութա՛ խընդրեմ զիս մի մաշէր:  
 —Ուստի ուշ դիր այս գիշեր,  
 «Մարդըս Սանդրոն ցաւ քաշելով կըծու՝ կըծու՝  
 «Ածեց խոշոր երկու ձու:  
 Կընքամայրը այդ որ լըսեց,  
 Աչեր մեծ՝ մեծ՝ պատառեց:  
 Առջի բերան կարծեց հանաք,  
 Յետոյ երբոր մընաց մենակ,  
 Իսկոյն գընաց իւր մօրքըրոջ փութալով  
 Հէւքը հէւքին բարևելով.  
 «Գիտէս կասէր ան մօրքուր,  
 «Ես լըսեցի այնպէս մի լուր,  
 «Որ աշխարհք՝ աշխարհք եղածէն ՚ի վեր,  
 «Այդպիսի մի բան իսկի լըսած չէր:  
 —Ասան ա՛ղջիկ մի նեղէր զիս,  
 «Թո՛ղ որ լեզուս կպշի բըմբիս,  
 «Եթէ որ ես այդ մասին  
 «Մի ուրիշի բան մ՝ասիմ:  
 —Ուստի լըսէ հոգիս՝ մօրքուր,  
 «Բայց երեսիս մի բերէր մուր:



Սանամարիս մարդը Սանդրոն այս գիշեր,  
 «Երկար երկունք, սաստիկ ցաւեր,  
 «Քաշելէն վերջ մահացու,  
 «Ածել է չորս խոշոր ձու.  
 — Ի՞նչ կասես դու,  
 «Չորս խոշոր ձու:  
 — Այն մօրքուր, այն հոգիս,  
 «Յուսամ. որ դու չես մատնէր զիս:  
 Ասաց, գընաց:  
 Իսկ մօրքոյրը առ ժամանակ ապուշ մընաց:  
 Յետոյ վազեց իւր հօրքըրոջ,  
 Հօրաքոյրը իւր տալոջ,  
 Տալը քըրոջ՝  
 Քոյրն ըսկեսրոջ՝  
 Այսպէս սոքա օղակելով պոչառպոչ,  
 Խեղճ Սանդրոյին ածած մի ձուն  
 Հարիւրեցին մինչև իրկուն:



ԱՌԻԻԾ ԵՒ ԷՇ

Առիւծն ամեհի անառախն բոլոր,  
 Ահեղ բըռնաւոր,  
 Շատ տարիներ նա յաջ ու ձախ,  
 Կը սրփուէր մահ՝ ահ ու վախ,  
 Միշտ ներկելով ժանիք՝ ճիրան,  
 Արիւնի մէջ ջերմ ու ծիրան  
 Չըկար մի օր,

Որ չըլափէր զո՞ն մի նոր:  
 Սա պատուհաս մ էր անագին  
 Խեղճ կենդանեաց ամբողջ ազգին:  
 Բայց ինչպէս որ չար թէ բարի,  
 Չըկայ մի ուժ վիթխարի,  
 Որ չը դառնայ ժամանակին անւոյն ներքև  
 Մարմին տրկար և տըձև:  
 Այս պէս առիւծն ալ սէգ և անաւոր  
 Կորուց ուժն ու կար եղաւ ալւոր:  
 Ժանիք՝ ճիրան՝  
 Երկաթաթել կիտւած ջըղեր և իրան,  
 Տըկարացան թըլցան բոլոր,  
 Մարեցաւ հուր աչերուն խոր:  
 Նա իւր ոտեր՝ ժամանակով արագավազ,  
 Քարշ կը տանէր հազիւ հազ:  
 Այդ տարաբախտ միջոցին՝  
 Հանդիպելով խըրոխտ ձին  
 Կից մը տըլաւ խեղճ առիւծին հեգնօրէն,  
 Որնոր տըքաց սըրտին խորէն:  
 Յետոյ եկաւ եզ մ'յաղթանդամ  
 Եւ կօտոշեց քանի մ'անգամ:  
 Նորամէ վերջ ուղտ մը կոկոզ՝ անբարտաւան՝  
 Եկաւ թըքեց խեղճին վերան:  
 Արիւն կերթար ալւորին սըրտին խոր,  
 Մինչ կը տանէր անարգանքներ նորէնոր:  
 Այդ միջոցին տեսնաս մի էշ  
 Գըծուծ՝ խենէշ,  
 Վեհ ծերունոյն եկաւ զիմաց  
 Չըզըռալով ցըռուկը ցած,  
 Մինչ պատրասուէր տալ հարւած,

Մէկ մ'ալ յանկարծ,  
 Վերդովեցաւ վեհ ծերունին անաւոր,  
 Ժողկեց իւրեան ուժը բոլոր,  
 Յետին անգամ ամպի նըման  
 Գոռաց իշուն յանդիման,  
 «Մի յանդըգնիր էշ սինկեբոր,  
 Թագաւորիդ դէմ անզօր  
 Թէպէտ և տէր, բայց բընութեան եմ ծառայ,  
 Մահը միայն թող ծիծաղի իմ վերայ,  
 Բայց մեռանել անարգ կիցէն իշակի  
 Դա կընի ինձ մահ կըրկնակի:  
 Գիտցիր, սատկած առիւծին լէշ  
 Կարժէ այն՝ մի քանի ողջ՝ յիմար էշ:

ՃԱ

ԷՇՈՒՆ ՆԱՆՆԻԿԸ

Գարնան ժամանակ  
 Խիտ ծառերուն տակ,  
 Գիղջկին ընտանիք  
 Նընջէր երջանիկ:  
 Օրօրոցը ծառէն կախւած  
 Կը տատանէր կամաց-կամաց:  
 Գեղջկին կինը քաղցըր ձայնով  
 Կերգէր նաննիկ օրօրելով:  
 Նորա անուշ գեղգեղին մեղմ ելկէջ,  
 Նրբատերև ծառերուն մէջ,  
 Ծաւալելով ալիք՝ ալիք՝  
 Գերազանցէր սոխակին իսկ դայլայլիկ:  
 Քընեց երեխան քընով անուշակ,

Գիշերը բացաւ իւր սև դըրօշակ.  
 Լըռեց բընութիւն և մարդիկ բոլոր,  
 Կանցնէին ժամեր խաղաղ և սնդորը:  
 Տեսնես երեխան՝ զարթելով քիչ վերջ,  
 Ըսկըսաւ թընծկալ օրօրոցին մէջ,  
 Զայդ որ լըսեց իշակը,  
 Որ կը քընէր ծառին տակը.  
 Մահըրաւէր և անկոշ  
 Ուղեց անել ծառայութիւն մ'իւր տիկնոջ:  
 Օրօրոցին գալով մօտիկ  
 Եւ զըռալով խորթ ու սաստիկ.  
 Կերգէր նաննիկ և օրօր,  
 Թընտաց գեղջկին տուն բոլոր.  
 Տըղան կուլար լեղէպատառ,  
 Մայրը ցատկեց շընչասպառ,  
 Եւ հազիւ-հազ իւր տիրասէր իշակին  
 Նա արժանի վըճարեց գին:  
 Երբոր էշը կերգէ օրօր ու նաննիկ,  
 Իսկ խողը տաղ՝ մեղեդիկ  
 Այդ շնորհքին անասնաձիր  
 Ականջ բեր ու զիմացիր:



ՃԲ

ՀՈՎԻԻՆՆԵՐ ԵՒ ՀՕՏԵՐ

Յուրտը վըչեց սաստիկ ձըմեռ,  
 Զիւնը ծածկեց դաշտ՝ ձոր ու լեռ,

Սառեցաւ բոյս, արօտ, տերև,  
 Թանձրը ամպով բողբոջ արև:  
 Հովիւները՝ երբոր տեսան,  
 Որ սովի սև օրեր հասան,  
 Ըշտապեցին դարձան փարախ  
 Շէն և ուրախ:

Անդ պատրաստած էր շար ու շար  
 Յարդ ու չոր խոտ մեծ պաշար:  
 Օր ըստ օրէ կոխեց ձրմեռ.

Բընութիւնը կարծես շընչէր կիսամեռ:  
 Հովիւները ոչխարներուն  
 Ըսկըսան տալ յարդ ու խոտ,  
 Ոչխարները ցըրտէն մըրսած  
 Կը խըռնէին միմեանց մօտ:  
 Այդ դըժլարին գըրութեան մէջ,  
 Ջըմրան ընկեր՝ գայլերն անգէղջ,  
 Լուսնեակին պող շողերուն տակ՝  
 Սարքերով մեծ ասպատակ,  
 Ոչ քիչ անգամ տային մեծ ջարդ  
 Խեղճ հօտերուն տարապարտ:  
 Հովիւները յուզուած բոլոր

Այդ սոսկալի հարուածներէն օրը նոր,  
 Առ 'ի չըտալ հօտերն գայլոց կերակուր,  
 Հաւաքեցին մի մեծ ժողով ընդհանուր:

Շատ խօսեցան՝ փըրփըրեցան՝

Եւ վըճռեցին ձեռք բերել գէնք՝ հըրացան,  
 Ըսպառնացան տալ ջարդ ու թակ,  
 Գայլոց բոլոր հանել սատակ:

Տեսնես՝ ելաւ մի պերճախօս պատանի  
 Առաջարկեց այս մի խորհուրդ պիտանի:

«Քըսաներորդ դարուս 'ի ծագ՝  
 «Պէտք է թողնել գէնք ու դընդակ,  
 «Փընտռենք այն՝ այնպիսի մ'ելք,  
 «Որ գէնքի տեղ դորձածենք խելք:  
 «Քանչէր՝—ասաց— առհասարակ,  
 «Գայլի մահն է բոց ու կըրակ,  
 «Եթէ կուգէք յաղթել նորա,  
 «Ոտոն ու յարդը որայ՝ որայ՝

«Փարախին շուրջ պէտք է վառել գիշերն ի բուն,  
 «Դա կըլինի մեզ ճըշմարիտ յաղթութիւն:  
 «Այրիս— կանչեց խուժը բոլոր  
 Այն օրէն վերջ ամեն օր,  
 Յարդը՝ խոտը վառվըռեցին շար ու շար,  
 Դատարկեցին բոլոր պաշար:  
 Հօտը մընաց անխոտ՝ անյարդ,  
 Եւ գայլին տեղ սովը տըւեց սաստիկ ջարդ:  
 Թէպէտ լաւէ՛ գէնքի տեղ խելք,  
 Բայց գայլի տեղ—սով՝ չէ՛ մի ելք...




ՃԳ

ՓԻԼԻՍՈՓՍ ԵՒ ԷՇ

Ժամանակով մեծ իմաստուն  
 Փիլիսոփայ կար մի գիտուն,  
 Դա՛ իւր բոլոր կեանքին շըրջան,  
 Մեղւի նըման ժըրաջան,  
 Կաշխատէր միշտ  
 Բուժե՛ մարդկանց ցան ու վիշտ:

Բոլոր տարին ցորեկ՝ գիշեր՝  
 Իւր իշուկին վերայ նըստած կը շըրջէր:  
 Քաղքէ-քաղաք՝ գեղէ—գեղ՝  
 Մըտնէր՝ եխէր՝ ամեն տեղ:  
 Օրին մէկը այդ թափառիկ խիկարը ծեր  
 Իջևանեց իշխանի մ'օտ հիւրասէր,  
 Որուն տունը այդ գիշերը բազմամարդ:  
 Կար մի խընջոյք շատ զըւարթ:  
 Պար՝ խաղ ու տաղ, հարկ ու հարմնիք՝  
 Կէր՝ խում առատ, գինին տիկ՝ տիկ,  
 Աղբիւրի պէս բղխէր՝ հոսէր,  
 Եւ ծաւալէր խընդում ու սէր:  
 Երբ տան տէրը՝ հիւրեր բոլոր  
 Տեսան նորեկ հիւրն ալտոր,  
 Ելան խըմբով ընդառաջ  
 Խընկարկէին զինքն յարգանօք ձախ ու յաջ:  
 Հըրուէր պատիւ՝  
 Մողթանքներ անթիւ.  
 Կը խընդրէին շընորհ բերել ընդունել հաց,  
 Խըմել կենաց:  
 Ծեր խիկարը կամբով տըկար՝  
 Խընդիրքներու դէմ անկար,  
 Ըսկսաւ խըմել՝ պարել անդադար,  
 Մինչև ինքն իրեն ըզգաց նա օտար:  
 Տունն ըսկըսաւ զըլխուն դառնալ մանուսան  
 Եւ ցըրւեցան հիւրերն աչից յանդիման.  
 Վերջ ՚ի վերջոյ ալտորը բազմագետ,  
 Խեղքն ալ խըմեց գինւոյն հետ:  
 Թըմբութէնէն երբ արթընցաւ՝  
 Ըզգաց սաստիկ մեծ ամօթ,

Հեծաւ էշը ձըգեց փախաւ,  
 Մինչ չէր ծագել առաւօտ:  
 Ճանապարհին մըտնելով մի ջինջ գետակ.  
 Էշը ծարաւ փափաք՝ փափաք՝  
 Կը խըմէր շուր զով ու մարուր,  
 Կարծես կուզէր մարել սըրտին տապն ու հուր:  
 Ծերը կասէր—«Իշակ սիրուն,  
 «Մատաղ ես քո արևուն.  
 «Խըմէ՛ յագիր՝ որչափ կուզես,  
 «Անուշ լինի իշակ իմ՝ քեզ:  
 Տիրոջ ձայնին էջն անտարբեր,  
 Կաթիլ մ'անգամ իւր չափէն վեր  
 Չէր խըմէր:  
 Երբոր ելան գետակին ափ  
 Ծերը ճանչցաւ իւր խեղքին չափ.  
 Ծուկի գալով եշուն դիմաց  
 Այսպէս ասաց՝  
 Այս ժամէն վերջ դու փիլոսոփ՝ ես իշակ:  
 Դու իմաստուն՝ ես կոշտ մըշակ:




ՃԳ

Դ Ի Ո Գ Է Ն

Դիողենէն հարցին մի օր  
 Փիլիսոփայ ասա՛ մեզ,  
 Մահուանէդ վերջ ո՞ւր կամ ինչպէ՞ս՝  
 Կը ցանկաս որ թողենք քեզ:  
 Փիլիսոփան հեգնօրէն,

Այդ մեծ պատուոյն փոխարէն,  
 Ասաց — չարժէր խօսելն անգամ այդ մասին  
 Ձի խընդիրմ' է փուճ և սին:  
 Բայց ասէք ինձ կաղնին միջուկն որ ուտէք  
 Անոր կեղևն ո՞ւր կը պահէք.  
 Ո՞ւր պիտ պահենք բոլորն ասին միաբերան,  
 Կամ աղբանոց՝ կամ վառարան:  
 Դիողէնը — եթէ — ասաց՝  
 Կաղնին կեղևն է անարգ,  
 Ինչ՞ պատճառաւ հողւոյն կեղև  
 Ունեցել է այդքան յարգ:  
 Ուստի լաւ է իմ կեղևն ալ նետել դաշտ  
 Եւ չըլինել մարմնապաշտ:  
 Հապա — ասին — եթէ՞ մարմինդ  
 Ուտեն թրջուուն կամ գազան,  
 Ուրեմն տսաց դուք անոր մօտ,  
 Իրէք մի հաստ գաւազան:  
 Այն՝ անշունչ մարմնոյ համար,  
 Զուր են ծախքեր անհամար,  
 Այդ ծախքերով լաւ է օգնել ողջերուն  
 Որոնք կապրին մարդկան օգտին և սիրուն:




ՃԵ

ԻՇԽԱՆ ԵՒ ԾԱՌԱՅ

Իշխան մ'ունէր շքեղ խընջոյք փառաւոր,  
 Իւր ծըննդեան տօնին օր,  
 Նա պալատի ծառաներուն մեծ բանակ,  
 Սըփռեց՝ ցըրւեց բոլոր քաղաք

Բաժնել տոմսակ՝ հըրաւէր՝  
 Կանչել հիւրեր:  
 Ծառաներուն թրւոյն մէջ  
 Կար մինը շատ տըգեղ ու խեղճ,  
 Ուր կաղ՝ քամաքը կոր,  
 Մի աչը կուր՝ միւսը խոր՝  
 Կըզակը սուր՝  
 Դէմքը ծուռ:  
 Իշխանն որ տեսաւ՝ պըշգալով սոսկաց,  
 Երեսը դարձուց և այսպէս ասաց՝  
 «Միթէ՞ տէրըք բեգնից ի դատ,  
 «Չունէր ուրիշ մի մարդ ազատ:  
 Խոցւեց ծառան սըրտին խորէն,  
 Ասաց այսպէս հեգնօրէն:  
 «Վըսեմ իշխան շընորհ բեր մեզ,  
 «Մարզը մարդու ուղարկեցին, իսկ ինձ քեզ:  
 Պապանծեցաւ իշխանն յիմար  
 Եւ ներս փախաւ ամօթահար:  
 Քիչ մ'ըզզոյշ եղիր և խօսէ չափով,  
 Թէ դըրդես մատով՝ կըստանաս ափով:




ՃԶ

Ո Ս Կ Ի

Անցեալ դարուն մէջ մի հարուստ տիկին  
 Ուզելով կարգել իւր միակ որդին,  
 Առաջարկեց նա իւր մարդուն, որ յարմար  
 Փամանակ է՝ արդէն փընտուել որդւոյն համար

Մի կոյս ազլիկ գեղաշընորհ,  
 Իւրեանց տոհմին արժանաւոր:  
 Իշխանն ասաց— «աչքիս վերան,  
 «Բայց կարևոր կայ մի պայման,  
 «Մինչ չաշխատի որդիս քըրտամբ մի ոսկի,  
 «Ես չեմ յօժար, որ պըսակւի նա իսկի:  
 Հօրը կամքը մայրը որդուն  
 Յայտնեց՝ տըւեց ոսկի մի նոր,  
 «Գընա՛— ասաց— ասա՛ հօրդ,  
 «Որ դա քըրտանցդ է շընորհ:  
 Որդին առաւ ոսկին՝ թռաւ հապշտապ  
 Գընաց հօրը, որ նըստել էր ծովին ափ,  
 «Ահա— ասաց— քեզ հայրիկ,  
 «Իմ ճակատիս քըրտանց խայրիք:  
 Հայրը առաւ ոսկին փոքր ինչ մըտածեց,  
 Յետոյ յանկարծ ծովը նետեց:  
 Որդին դըրդըւեց, բայց անտարբեր,  
 Ոսկւոյն հետքից կը նայէր:  
 Հայրը կանչեց սուտէ՛, գընա՛ բեր իստակ,  
 Ճակտիդ քըրտանց արդար վաստակ:  
 Շըւարեցաւ որդին գընաց  
 Գըլուխը ցած:  
 Տեսնելով մայրն որդուն տըխուր՝ ակընկոր,  
 Մի ամսից վերջ դարձեալ տըւեց ոսկի նոր:  
 Եկաւ որդին դարձեալ հօրը,  
 Գարձեալ հայրը նետեց ոսկին ծովին խորը.  
 Որդին սպշած, բայց անվըրդով,  
 Անշարժ նայէր դէպ ՚ի ծով:  
 Հայրը կանչեց դու մինչև երբ,  
 Կուգես խաբել ինձ այս կերպ.

Մինչև որ դու չկատարես իմ հրաման,  
 Մի երևար՝ այլևս աչիցս յանդիման:  
 Որդին տեսաւ, որ չըկայ ճար,  
 Հօրը խաբելն է անհընար,  
 Այն օրէն վերջ փոխեց ըզգեստ իւր բոլոր՝  
 Եւ հասարակ դարձաւ բանւոր.  
 Աշխատեցաւ ամբողջ մ'ամիս անդադար,  
 Եւ շահեցաւ ոսկի մ'արդար:  
 Եկաւ հօրը անս ասաց ճակտիս իստակ  
 Արդար վաստակ:  
 Մինչդեռ հայրը առաջուան պէս  
 Կուզէր նետել ծովն ի խոր՝  
 Վազեց որդին՝ կայծակ կարծես,  
 Զօրեց՝ գըրկեց ոտքերն հօր.  
 Ողորմէ՛ ինձ կասէր հայրիկ՝  
 Այդ իմ քըրտանցն է խայրիք:  
 Հայրը ժըպտաց՝ գըրկեց որդին  
 Հիմա ասաց դու քո ճակտին  
 Արդար քըրտանց  
 Ըստացար գանձ:  
 Օտարին վաստակ ջուր է սըրավազ,  
 Իսկ սեպհակունը ծանրը է գերդ աւազ:



ՃԵ

ՊԱՌԱՒ ԵՒ ՈՍԿԻ

Կար մի աղքատ՝ այրի կընիկ ալևոր,  
 Որնոր կապրէր շատ չըբաւոր.  
 Թէպէտ ունէր երեք հատ

Ժիր աղջիկներ հարազատ,  
 Բայց աղջիկներն ամեն տարի,  
 Զերդ պըտղատու ծառ բարի,  
 Կը ծընէին մի մի գաւակ գեր-գըլոր,  
 Նոր չարչարանք պառաւ մօր:  
 Խեղճ պառաւը գիշեր-ցորեկ անդադար,  
 Աղջկանց դիմաց ծառայի պէս ման կըզար:  
 Սաստիկ ծանր էր ալեորին  
 Բոլոր տարին.  
 Վեր-վար վազել Սասժուն իր—օր,  
 Կէս-յագ՝ կէս-փոր:  
 Այսպէս՝ թողած պառաւն անյուշ  
 Հարեանին գըրաւեց ուշ.  
 Որնոր մի օր՝ խըղճալով խոր,  
 Ասաց անոր:  
 «Մայրիկ ան քեզ հինգ ոսկի,  
 «Բայց ոչ ոքի չասես իսկի,  
 «Որ գաւակիդ որ դու գընաս մօտ՝  
 «Գիշեր, վաղ քաջ առաւօտ,  
 Այդ ոսկիներ քանի մ'անգամ  
 Համբէ, շարժէ, քո ձեռքին մէջ գեթ կէս ժամ,  
 Երբ աղջիկներդ լըսեն ոսկոյն ձայն անուշ,  
 Այն վարկեանէն քեզ ցոյց կըտան սէր քընքոյշ:  
 Լուրջ պառաւը այդ խօսքին տակ,  
 Հասկանալով հարեանին նըպատակ  
 Նա իւր դերը կատարեց շատ յաջողակ.  
 Տարաւ շքեղ յաղթանակ:  
 Զի աղջիկներն ոսկոյն ձայնն որ լըսեցին  
 Այն վայրկեանէն ծըրագիրը փոխեցին:  
 Սկսան մօրը ցոյց տալ մեծ սէր ու պատիւ

Գութ և գորով համբոյր անթիւ:  
 Զայնն որ լըսեն՝ կէնեն դիր-դող,  
 Կը խոնարհին մինչ ոտքին հող.  
 Ծաշի ժամանակ առաջին աթոռ,  
 Կերակուրներուն հէն պարարտ կըտոր,  
 Օղի և գինի լեփ-լեցուն բաժակ  
 Խըմեն և մաղթեն կեանք և ախորժակ:  
 Ժամանակով խեղճ պառաւը կիսափոր,  
 Եզի՛ մեղրի մէջ կը լողար ամեն օր:  
 Այսպէս՝ մայրը իւր գաւակներէն հարազատ,  
 Ոսկոյն ձայնով գընեց իրեն կեանք ազատ:  
 Ոսկին ունի երկու դիմակ  
 Մինը սատան՝ միւսն հրրեշտակ:



ՃԸ

ԹՌՉՆԱՍԷՐ ԻՇԽԱՆ

Կար մի իշխան միլլիոնատէր՝  
 Մեծ մասնագետ—թըռչնասէր,  
 Որն իւր կեանքին կէսը ամբողջ  
 Նըւիրել էր այդ գործին ողջ:  
 Ամեն կողմէ հեռաւոր  
 Միշտ կըտանար թըռչուններ նոր.  
 Որոնցմով նա կը զարդարէր կամարակապ  
 Թըռչնարանը մի քաղքի չափ:  
 Լայնատարած դահլիճ՝ սըրահ՝ կըրկնակի,  
 Զեղւան բոլոր լուսամուտներ ապակի.  
 Գըմբեթ շքեղ բարձրադիտակ,

Շէնքին վերայ հանգչէր մի թագ.

Հագարաւոր վանդակ տիպ՝ տիպ,

Կախուած էին կիպ առ կիպ:

Վանդակներուն վերայ զըրւած

Թռչնոց անուն մանրամաս,

Ամեն թռչուն իւր ցեղովը

Բաժանել էր դաս առ դաս:

Օր մ'իշխանին թռչնասէր՝

Բարձրատոնմիկ եկան հիւրեր,

Երբ տեսան այդ քաղաքի շափ թռչնարան.

Մատ խածին և ապուշ հարան:

— Իշխանն ասաց «վաղը ես ձեզ

«Յուսամ ցոյց տալ մի առաւել մեծ հանդէս.

«Իմ ծըննդեան քաղցր օրւան 'ի շընորհ,

«Սեղճ գերիներն այդ փետրաւոր.

«Կուզեմ գատ՝ գատ՝

«Թողուլ ազատ:

Վըճիոն որ լրսեց անդ մի փորձ թուղակ,

Որնոր կը ձօձէր մեծ զըմբեթին տակ.

Ժողուեց զըլխուն տասը—քըսան կաշաղակ,

Յայտնեց անոնց այդ ուրախ լուրն յաջողակ:

Կաշաղակներն իսկոյն թըռան ցան ու ցիւր,

Կէս ժամւան մէջ տարածեցին նոր վըճիոն:

'Ի շարժ ելաւ դահլիճն ի բուն

Սարսեց պատեր և ձեղուն.

Ամեն կողմէ խինդ և հըրճանք

Ամենուն սիրտ տըրփէր կեանք,

Դայրայիկներ՝ երգ սըրտառուշ,

Սուլմունք՝ նըլազ քաղցրամըրմունջ,

Ազատութեան երջանիկ ձայն,

Ամեն բերնէ թըռչէր միայն:

Այդ հըրճուանքը տեեց երկար՝ գիշերն ի բուն,

Թըռչնոց աչից թօթափեց քուն:

Առաւօտը երբոր ծագեց ոսկելոյս,

Երևեցաւ տէրը թռչնոց միակ յոյս,

Ծառաներուն տըլեց իսկոյն պատուիրան,

Վանդակներուն բանալ բերան.

Թըռչունները թողնել գատ՝ գատ,

Թըռչնարանին մէջ ազատ:

Թըռան թէպէտ թռչներ բոլոր

Գըմբեթն ի վեր՝ դահլիճն ի խոր,

Քայց շատ տըրտում և տըխուր,

Այդ շնորհը չեկաւ նոցա սըրտին դուր.

Դադարեցաւ երգ և նըլազ քաղցրալուր.

Տիրեց կարծես սուզ մի լուռ.

Ամեն կողմէ բողոք՝ գանգատ,

Ամեն բերնէ տըրտունջ ազատ,

«Այդ Ի՞նչ շընորհ—կանչեն—տիրոջ մեր անգեղջ,

«Փոքր վանդակէն մեզ փոխադրել մեծին մէջ:

Այդ միջոցին մի փորձ արծիւ ծերունի,

Ուշ տըլէք ինձ կանչեց ձայնով տէրունի:

Դուք որ առաջ փոքրիկ ու նեղ

Վանդակին մէջ պատէ պատ,

Փափախուէիք՝ ոստոստէիք,

Ձեր շուրջը փակ՝ թել պողպատ,

Հիմայ ինչու իզուր բողոք և գանգատ,


Մինչ գեռ արձակ և ազատ,

Դահլիճներուն մէջ լուսաւոր՝ ընդարձակ,

Թըռչիք՝ թափք՝ համարձակ.

Համբերեցէք կըզայ այն ժամանակ

Երբ առաւել կընտելանաք,  
Այն ատենը բացւին փեղկեր լայնաթև,  
Եւ դուք ազատ ու թեթև,  
Լուրջ՝ անմոլոր՝ ձուլւած մի սիրտ  
Զուգուած սիրով ճըշմարիտ.  
Թըւչիք արծակ յալիս օգուն,  
Բայց չէք թողնել ձեր բընիկ սուն:



ՃԹ

ԼԱԶԵՐ ԵՒ ԴԱՏԱԻՈՐ

Դատաւորին գէնքն է լեզուն,  
Իսկ խելքը ուժ աննըկուն.  
Որնոր առանց վէրքի՝ արեան, այլ սիրով  
Կը նըրածէ ամեն շրփոթ և խըռով:  
Փամանակով Բուրսայի մէջ  
Բարձրացաւ մի ահագին վէճ,  
Հային մէկը ըսպաննել էր խիստ կատաղած  
Շուն մի գած:  
Այդ որ տեսան տըգետ լազեր խըղճահար  
Հաւաքեցան մեծ գումար:  
Գեաւուռ օղու Գեաւուռ կասեն վըրդոված  
Անխիղճ դահիճ անասուած,  
Այդ դու ինչպէս յանդըգնեցար անմեղ շան  
Արեամբ ներկել քո ձեռքերը անարժան:  
Գընանք՝ դընանք և պահանջենք դատաւորէն.  
Սաստիկ պատիժ սորա մեղքին փոխարէն.  
Ասին այդպէս և անգորով՝

Թակթըկելով՝ զօրով-մօրով,  
Խեղճ շունասպան հային տարին  
Դատաւորին:

Երբ ամփոխը աղաղակով  
Դատարանին մըտաւ բակ.  
Դատաւորը անով՝ դողով՝  
Դուքս նետեցաւ յանկարծակ.  
«Ի՞նչ կուզէք արդեօք կասէր՝ ա՛ տըղաք,  
«Ինչո՞ւ այդքան մեծ աղմուկ աղաղակ:  
«Հագերն ասին, ահա բերինք մահապարտ՝  
«Որն ըսպաննեց մի շուն անմեղ և անպարտ:  
«Կը պահանջեմք արիւն արեան փոխարէն,  
«Որպէս պարան է և օրէն:  
«Ուրախութեամբ Խաղին ասաց, այ՛ որդիք՝  
«Բայց մի վայրկեան ինձ ուշ դէք.  
«Իրաւի՛ դա շատ մեծ մեղք է և ոճիր,  
Այո՛ պէտք է տալ անաչառ խիստ վըճիւ:  
«Գնամ փընտոեմ օրէնք յարմար,  
«Անօրէնին մեղքին համար:  
Ասաց դընաց սանդուխն ի վեր:  
Լազերը լուռ կըսպասէին անհամբեր.  
Մի քիչ վերջը Խաղին եկաւ և ասաց՝  
«Գըտայ պատիժ դորա մեղքին փոխադարձ.  
«Բայց օրէնքը կը պահանջէ անաչառ՝  
«Բազմութեան հետ չըբռնել ճառ:  
«Ուստի այդ ձեր լուսահոգի շան՝ բողոր  
«Հարազատներ մերձաւոր.  
«Հայրը՛ եղբայր՝ քեռին՝ փեսան,  
«Եղբօրորդին՝ թողը Դամ սան.  
«Թող հրամմեն գան սենեակ մի գատ,

«Լըսել իմ դատ.

«Իսկ օտարներն, որ շունին չեն հարադատ,

«Բողորն իսկի են ազատ.

Խաղիին այս խօսքին վերան

Խեղճ լագերը ափ ի բերան,

Մըտածեցին խուճբ՝ խուճբ՝ գատ-դատ,

Ոչ ոք չուզեց շանը լինել հարազատ.

Կամաց՝ կամաց՝ ցիր—ցան եղան և գացին

Շունասպանը միայն մընաց առանձին:



ՃԺ

Ի Կ Ա Ր

Աթէնքի մէջ կար մի շատ փորձ

Դենդալ անւամբ մեքենագործ.

Որն իւր բոլոր կեանքն անդադար

Բընութիւնը գըրքի նըման կը կարգար:

Քըննէր թուչնոց թըռիչ թեթև

Պարզ օդուն մէջ ամպոց ներքև.

Կը մըտածէր և գուշակէր ակներև,

Որ հնարէ մարդոյ մամնոյն թուչնոյ թև:

Գիշեր-ցերէկ չափեց՝ ձևեց՝ և գըծեց,

Նա վերջապէս հարցը լուծեց:—

Այդ օրէն վերջ չանցաւ երկար,

Շինեց թևեր իրեն յարմար.

Նուրբ թաղանթով մեղրամոմի,

Ծածկեց թևերն նա մի առ մի:

Յերիւրելով իւր սեպհական ուսերուն,

Դարձաւ եղաւ մարդ-թըռչուն:

Ըզգուշութեամբ առջի բերան՝ քիչ առ քիչ,

Իւր թևերուն աըւաւ թռիչ,

Յետոյ ելաւ ու բարձրացաւ օդուն մէջ՝

Միջին դիրքով կ'անէր շըքեղ ելևէջ:

Այդ տեսնելով որդին ի կար,

Հիանալով դարձաւ ի քար.

Թախանձելով խընդրեց հօըը իրեն համար

Շինել թևեր իւր հասակի չափուն յարմար:

Երբ թևերը եղան պատրաստ

Ըզգաց ինք զինք բարեփաստ

Եւ պնդելով զանոնք իրեն ուսերուն

Մի հըրեշտակ դարձաւ սիրուն:

Նա հօըը հետ զոյգ կազմելով անվեհեր,

Թռան քիչ՝ քիչ՝ օդն ի վեր:

Քաջ իկարը լինելով շատ կորովի

Առաւ ընթացք իւրովի.

Հըրապուրեաժ ազատ օդով ընդարձակ,

Միշտ դէպ ի վեր կը խոյանար համարձակ:

Կը սաւաննէր արծուի նըման

Ծիրանեծիր ամպոց մէջ,

Լոյս արևին դէմ յանդիման

Կանէր արագ ելևէջ:

Հայրը կանչեց ըզգուշ իկար,

Բըռնէ միջին ճանապարհ,

Թէ արևուն դու ելնես մօտ,

Կայրիս՝ մըրկիս՝ գերդ չոր խոտ:

Խակ՝ տաք—գըլուխ՝ պատանին

Ուշ չըտալով իւր փորձ հօըը հըրամանին,

Քանի գընար արևն ի վեր

Կը բարձրանար անվեհէր:  
 Բայց ափսոս՝ որ ջերմ շողեր արևուն  
 Հալեցին թաղանթ նորա թևերուն,  
 Որով յամառ և յանդուզըն խեղճ Իկար  
 Գահապիժեց և ջախջախեց անդ՝ ի քար:  
 Ազատութեան արևուն դէմ լուսավառ  
 Պէտք է չափով բըռնել միջին ճանապարհ,  
 Լաւ կը լինի յիշել անբաղդ Իկարին,  
 Որ ջախեցաւ ՚ի բարին:



ՃԺԱ.

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ի Ր

Օր մ'առիւծը ծեր կաղնոյն տակ  
 Որոտաց խիստ հըրովարտակ,  
 Որ անյապաղ բոլոր երկիր՝  
 Լինի՝ նդհանուր աշխարհագիր:  
 Կենդանիներն ըշտապեցին անով՝ դողով,  
 Կազմեցին շատ մասնաժողով,  
 Տարածւեցան ընդ սար՝ ընդ ձոր,  
 Եւ ըսկըսան գիշեր-ցուրեկ  
 Գիր անցնել մէկ առ մէկ  
 Շատ անասուն՝ վայրի գազան  
 Եւ ընտանի չորքոտանի գանազան:  
 Խըմբերէն մինն գործակատար,  
 Մի արջ՝ ազուէս՝ գայլ քանասար,  
 Տեսան քոթոտ մ՝ որ ծառին տակ,  
 Պառկած կըրծէր թռչնոյ դիակ.  
 Արջն եկաւ մօտ բարեւ ասաց՝ պոչաւոր,

Ըստ հրամանի թագաւորին մեր հըգօր:  
 Ո՞վ լինելըդ ասա՛ դու մեզ,  
 Որ ըստ կարգին գըրեմք քեզ:  
 «Ե՞ս... Ես... ասաց բոթոտն արջին,  
 «Մեր ցեղին մէջ իմ պապըս էր առաջին,  
 «Բոլոր ազգիս փառք և պատիւ.  
 «Քաջ և արի գործովս անթիւ.  
 «Նա թագաւորին մեր վեհազուն,  
 «Խորհըրդականն էր սիրասուն»:  
 «Ո՛չ— ասաց— դայլն այդ պէտք չէ մեզ,  
 Պապըդ՝ մամդ՝ թող մընան քեզ.  
 Դու ասա՛ քո անձիդ մասին՝  
 Քեզ ո՞վ կասին:

Քոթոտն ասաց— ուշ դիր՝ փոքր ինչ՝ ամիրայ,  
 Թող ինձ ասել մի քանի խօսք բեռոյս վերայ,  
 Կասեն՝ որ նա հըսկայ մ'էր քաջ,  
 Արջու ցեղէ եկած առաջ:  
 Խընդաց ազուէսն՝ ասաց— յարգոյ բարեկամ,  
 «Այդ կը պատմես ուրիշ անգամ.  
 «Իսկ հիմայ դու ասա՛ մեզ՝  
 Անձամբ ո՞վ ես:  
 «Ես... Ես... ասաց— հայրըս էր շուն:  
 «Բաւականէ՛ ճանչցանք հիմայ ո՞վ ես դուն:




ՃԺԲ

ՆԺՈՅԳ ԵՒ ԳՐԱՍՏ

Կարւածատէր մ'ունէր ձիանք շատ տեսակ,  
 Ամեն մի չափ և հասակ,

Ոմանք էին տոկուն գրբաստ՝  
 Աշխատաւոր՝ բիրտ ու հաստ:  
 Ոմանք էին սիրուն նրժոյգ,  
 Մեզ—սիգածեմ և առոյգ:  
 Նրժոյգներէն մինն առաւել զեղատես,  
 Արուն տէրը կը սիրէր իւր տըղուն պէս.  
 Կը համեաէր գայն համեաով ասոյնեգործ  
 Եւ կը պըճնէր ճարմանդներով ոսկեգօծ:  
 Հեծնէր՝ լըծէր կառքի թեթև  
 Արծիւ անթև:  
 Նրժոյգն իրեն փառքերուն ծայր,  
 Մոռացաւ քոյր և եղբայր:  
 Բայց ինչպէս որ բաղդն է անիւ,  
 Որ կը փոխէ տիւը գիշեր, գիշերը տիւ,  
 Այսպէս ալ մեր վեհ նրժոյգին գիրգ իրան,  
 Մի օր ընկաւ գայլին բերան:  
 Մաքառեցաւ Հեկտորի պէս քաջապանծ  
 Ըստացաւ շատ վերք՝ հարւած:  
 Տեսքն ու շնորհք խեղճը կորուց չարափաստ,  
 Դարձաւ եղաւ մի գրբաստ:  
 Մի քանի օր տէրը ցըցուց գութ և ցաւ,  
 Յետոյ շուտով մոռացաւ:  
 Ղըրկեց նորա գրբաստներուն մութ ախոռ,  
 Ուր որ Ղըկար ուրիշ սընունդ՝ քանց խոտ չոր:  
 Առջի բերան՝ նրժոյգն իրեն անգութ բաղդին,  
 Չէր հաւատար և խոժոռէր իւր չորս դին.  
 Մէկին խածնէր, միւսին կից տար՝  
 Հըրէր՝ դըրգէր՝ անդադար.  
 Չըղիմացաւ հոն մի գրբաստ,  
 Ասաց—խնդրեմ քիչ մ'ըզգաստ.

Տէս՝ որ հիմայ մենք հաւասար  
 Եմք եղբայր:  
 Եղբայր—կանչեց սէգ նրժոյգը բարկասասա,  
 Ծանիր՝ որ ես չեմ քեզ նըման բիրտ ու հաստ:  
 Միւս օրն երբոր նրժոյգն ընդ ձին  
 Ծանր արօրին լըծեցին.  
 Խեղճն ախամայ հերկէր երկիր մըտրակին տակ,  
 Քըրտինքն հոսէր վըտակ, վըտակ.  
 Յոգնած՝ դադրած՝—ասաց—եղբայր,  
 Օգնէ փոքր ինչ դեռ ես խակ եմ և տըղար.  
 Եղբայր՝ կանչեց գրբաստը խորթ,  
 Գիտցած եղիր՝ ես չեմ նրժոյգ թուլամորթ:  
 Լըռեց նրժոյգն ճանչցաւ իւր փաստ,  
 Որ ինքն արդէն՝ ոչ նրժոյգ էր՝ ոչ գրբաստ:  
 Ինչ չափով որ գայլըս չափես՝  
 Նոյն չափովը կը չափեն քեզ:



ՃԺԳ

ՉԻԵՐ ԵՒ ԳԱՅԼԵՐ



Մութ թաւաստև անտառին մօտ,  
 Հինգ—տասը ձի կարածէին թարմ արօտ.  
 Բոլորը ժիր՝ առոյգ՝ պարարտ,  
 Շէն զըւարթ:  
 Տեսնես յանկարծ երևեցաւ անդ ի սար  
 Մի քանի գայլ քանասար:  
 Մոքա երբոր տեսան ձիեր  
 Մատղաշ ու գեր.

Գաղտ ու գողի իջան լեռնէն  
 Պաշարեցին ամեն կողմէն,  
 Կըրճտէին ժանիքներ սուր,  
 Բայց ափսոս որ էր ի զուր,  
 Ձի ձիերէն մինն՝ առաւել հեռատես,  
 Չար թըշնամին տեսնելուն պէս՝  
 — «Տըղաք — կանչեց — կապեցէք պար,  
 Գըլուխ-գըլխոյ-պինդ պատւար:  
 Ձիերն իսկոյն կատարեցին  
 Ինչ որ ասաց փորձառու ձին.  
 Իսկ երբ գայլերն յարձակեցան  
 Փոխան մըսի՝ սաստիկ կիցեր ըստացան.  
 Արիւն-լըւայ իրար անցան

Յիրուցան:

Ուր գըլուխներ ձիգ-միանան

Անդ ոտքերը գէնք կը դառնան:

Ուր սերտ բանակ

Անդ յաղթանակ:



### ՃԺԴ

#### ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒՒՄ

Օր մի գայլը սաստիկ քաղցած

Երբ կերթար պոչը կախ,

Խոժոռ աչերն իւր չորս բացած

Լուրջ կը նայէր յաջ ու ձախ:

Տեսնես յանկարծ հանդիպեցաւ աղուէսին

Եւ ըսկըսեց գանգատ անել իւր մասին.

«Գիտես — կասէր — խընամի,

«Բողորովին գործս է քամի.

«Մէկ շաբաթ է՝ որ պահեմ ծոմ,

«Օ՛ֆ հալեցայ քանց մեղրամոմ.

«Աչքէս թըռչէն գառան միսն ու տըմակը

«Անուշ քունը, զով ծառերուն ծըմակը:

«Տեսար դու այն երկոտանի

«Չար զագաններն ընտանի.

«Ոչխարներուն սիրեն հօր պէս

«Նոցա սիրուն կը զոհեն մեզ:

«Եթէ այդ պէս մեզ միշտ ջարդեն չարաչար

«Կը լինի օր՝ որ ոչ մի գայլ չի մընար:

Խընդաց աղուէսն սըրտին խորէն,

Բացազանչեց հեգնօրէն:

«Մարմնով խոշոր,

«Խելքով փըշոր»

«Փառք տուր որ մարդիկ չեն սիրել ըզձեզ,

«Եթէ սիրէին ոչխարներուն պէս,

«Այն ատէնն իրաւ՝

«Չեր կեանքն էր գրաւ:

«Անոնց միայն մարդիկ ցոյց տան սէր ընտանի,

«Որոնք նոցա քըմքին լինին պիտանի,

«Տէս, որ նոքա իւրեանց սիրած դառնէրէն

«Իբրև սուրբ պարտք կամ օրէն,

«Ամեն մի օր

«Մորթէն՝ ուտէն բիւրաւոր:

«Ինձ թըլի լաւ՝ սովել ազատ

«Քանց որ մարդոց լինել գերի հարազատ:

«Ուստի մի ցանկաք դուք մարդոյ սէրին  
«Որն որ կը սիրէ՝ յօգուտ իւր փորին»:



### ՃԺԵ

#### ՎԱՐԴԵՆԻԿ ԵՒ ԵՂԵԻՆ

Պարտեղի մէջ երկու հատիկ,  
Դըրացիներ միմեանց մօտիկ,  
Մինն եղևին սիւս վարդենիկ,  
Կապրուէին երջանիկ:  
Եղևինը ձըմեռ ամառ,  
Իւր բնութեամբ կարծես յամառ,  
Միշտ կանանչ էր գեղանի:  
Վարդենիկը բոլոր գարուն,  
Չարդը-գարդին պըճնէր սիրուն,  
Վառին վարդեր ծիրանի:  
Վարդենիկը ոգևորւած վարդերով,  
Կարծես շարժած ՚ի գորով,  
«Ուշ դիր կասէր այ դըրացին,  
«Քեզ խօսք մ'ունիմ առանձին.  
«Բայց չընի թէ կարծես, որ ես  
«Կուզեմ գատել՝ բամբասել քեզ.  
«Ես կը խօսիմ շարժած ի գուլթ,  
«Որ քո կեանքն է անօգուտ:  
«Կաճիս՝ մեծնաս՝ կապ-կանանչ,  
«Կապրիս՝ մեռնիս միշտ անձանչ:  
«Ո՛չ մի ծաղիկ՝ ոչ մի պըտուղ,  
«Լաւ է՝ գըլխուդ դընես կընկուղ...»

Եղևինը ասաց «քուրիկ» մի վըրդովեր,  
«Ամեն—մէկին իւր ճակտին գիր»:

«Օրը գայ՝ բարին հետը,  
«Պէտք է տեսնել վերջին կէտը»:

Անցան օրեր, ամիսներ,  
Ձիւնախաղաղ տիրեց ձմեռ,  
Վարդենիկը թափեց տերև  
Մընաց չիպ-չոր և սիպ-սև:  
Ան ատէնը եղևինը իւր կարգին»:

Ասաց այսպէս վարդենիկին:

«Ո՛ւր քո վարդունք փառաւոր,  
«Թէպէտ սիրուն, բայց անցաւոր:  
«Իսկ ես դու տես, թէպէտ անձանչ  
«Բայց դարձեալ թարմ ու կանանչ:  
«Ժամանակէն չեմ առնէր փոխ.  
«Եւ միշտ կապրիմ անփոփոխ»:



### ՃԺԶ

#### ՄԱՏՆԻՉ ԳԱՅԼ

Գայլին մէկը մըսագործի պէս ճարտար,  
Յօշատելով մի գեր ոչխար,  
Նորա գանգուր մորթը ամբողջ  
Հանեց ողջ՝ ողջ:  
Ըստէպ անգամ այդ մորթոյն տակ,  
Ծըպտէր՝ քալէր՝ համարձակ.  
Նա շանց մօտով կանցնէր անվախ  
Ոչխարներուն մըտնէր փարախ»:

Գողնար գառներ.

Միմեանցմէ գեր:

Օր մ' այդ գայլը խոր մըթուն,

Որ կը հըսկէր միշտ անքուն.

Դարձեալ մորթը վըրան բարձաւ

Եւ բարեսիրտ ոչխար դարձաւ:

Գընաց որսի անտառին մօտ

Ուր կարածէր բազմաթիւ հօտ.

Այդ գիշերը մեծ ժողով կար հօտին մէջ,

Շատ խընդիրներ, շատ հարց ու վեճ.

Այժ մի կանգնած աղբաբլրին ի կատար,

Կարծես պատգամ կորոտար,

Եղբայրք կասէր մինչև երբ

Մենք միակերպ.

Կէր պիտ լինեմք մարդոց անկուշտ,

Կամ գայլերուն արիւնոտուշտ.

Ժամանակ է բազմադարեան

Շըղթայն կոտրել գերութեան.

Զուգենք խառնենք մեր ուժն ու կար,

Միութեան դեմ չընիր ինչ ոչ անհընար:

Այս խօսքէն վերջ դարձան կըրակ,

Եւ խօսեցան երկար—բարակ.

Մըրազրեցին ելք և միջոց փըրկարար,

Ազատութեան օգտին համար:

Գայլ—ոչխարը լըսեց բոլոր

Գաղանիքները, և միւս օր

Գընաց մատնեց ընկերներուն քանասար,

Որոնք եկան կէս գիշերին, չարաչար

Ոչխարներուն տըւին մեծ ջարդ

Տարապարտ:

Այն ժողովուրդն է անբազա և թըշառ,

Յորմէ կը ծընի մարդու տեղ Բեկիար,

Դէմքով Բուդդայ,

Սըրտով Յուդայ:



### ՃՓԷ

Պ Ա Տ Կ Ե Ր

Նուիրեալ իմ անդրանիկ որդւոյն Յովհաննու  
Նալբանդեանին (\*)

Պատմութիւնը թողել է մեզ մի աւանդ,

Որն հոգեկան կեանքումն է թանգ ազամանդ:

Ժառանգութիւն մ'է դա Յուլիոս Կէսարէն,

Նա՛ որ կուտար պատգամ երկրիս համօրէն:

Այդ մեծ անձը, գործէ ազատ ժամանակ,

Շատ կը սիրէր ալեծուփ ծով կապուտակ.

Ըստէպ անգամ սարքէր զըւարճ ըզբօսանք,

Յորմէ կըզգար մեծ խընդութիւն և հըրճանք:

Փոքրիկ նաւակ, ինքն ՚ի դէկին նաւապետ,

Մի նաւասարի—բաջ՝ կորվի՛ ծովագետ:

Անդ տեսնըւի խաղաղ ծովուն ջինջ երես

Լողայ նաւակ մի վիթխարի ձուկի պէս:

Ակոսելով սըրսկէ ջուրը ցիր ու ցան,

Կաթիլներուն մէջ շողշողի ծիածան:

Պայծառ երկինք, քիչ՝ քիչ՝ արփին դէպ ի մար:

\*) Զութակահար—վիրտուօղ՝նուագապետ Պետեր-բուրգի կոնսերվատորիային:

Կը խոնարհի ամպոց մէջէն վարդավառ,  
 Մեղմաշըրթնիկ սիւզ գեփիւռին քաղցրաբոյր,  
 Փայփայելով կարծես այլաց տայ համբոյր:  
 Մէկ մ' ալ յանկարծ սև՝ սև՝ ամպեր լեռան պէս  
 Հորիզոնէն փրթան ի վեր դէզ առ դէզ:  
 Լուսածաւալ քօղեցին դէմք արևոյն,  
 Գիշեր տիրեց աշխարհ բոյոր մըղտագոյն:  
 Խեռ փոթորիկ գահավիճեց ծովն ի վայր,  
 Ծովուն ծոցէն բարձրացաւ ջուրն իբրու սար:  
 Գոռան երկինք, կոծեն այլք անաւոր,  
 Հոսանքին դէմ հեծէն ժայռից հիմունք խոր.  
 Վեհ Կեսարին փոքրիկ մակոյկ շեւղի պէս,  
 Կը ծածանէր ալեաց վերայ փրփրադեզ:  
 Էր զի՛ սահէր իջնէր անդունդ անյատակ,  
 Էր զի՛ ելնէր և բարձրանար ալեաց ծագ:  
 Փոթորիկը անդուլ փըչէր՝ որոտար,  
 Օձապըտոյտ թռչին շանդիք վեր ու վար.  
 Տեղատարափ անձրև՝ կարկուտ ուժգնահար  
 Կոծկոծէին նարակն իսպառ չարահար:  
 Կեսարը այդ խոր ժրխորին ժամանակ,  
 Ղէկն ի ձեռին պահէր ուղին անսայթաք,  
 Կը մաքառէր խէռ — ամեհի ծովուն հետ,  
 Իբր անվեհեր և փորձառու նաւապետ:  
 Իսկ նաւաստին՝ որն իւր բոլոր կեանքն ի բուն  
 Շատ էր կըրել վրտանդ մեծ-մեծ ծովերուն.  
 Նա չէր տեսել այդպէս մի չար ժամ ժրխոր,  
 Չէր ըզգացել այդպիսի վախ սըրտին խոր.  
 Նորա համար թէպէտ իւր կեանքն էր վայրկեան,  
 Բայց Կեսարին թրւէր նըմա յաւիտեան,  
 Նա կը սոսկար, երբ կը տեսնէր, որ Կեսար,

Իւր հայրենի երկրին բոլոր տէրն ու հայր,  
 Խաղ էր եղել ալեաց կատար միզամած  
 Ամեն ըողէ մահն ըսպառնար իւր հարւած:  
 Նա ըսկըսաւ յանկարծ ըզգալ կամք տըկար,  
 Սըրտին տըրոփ կարծես լըռեց առ մի վայր,  
 Թըլցած թևեր, դողար մարսինն իւր բոլոր,  
 Գէմք մահագոյն, կընճուտ ճակատ քըրտընաթոր.  
 Նըւաղեցան աչերուն լոյս հեռատես,  
 Եւ սառեցաւ արիւնն բոլոր ջուրի պէս:  
 Շարժին թիեր տատանելով՝ հազիւ-հազ,  
 Եւ կանգ առաւ նաւակն իսկոյն սըրավազ:  
 Տեսաւ Կեսար հեզ նաւաստոյն խեղճ վիճակ,  
 Եւ աներկբայ վըտանդ մահուն դըժընդակ,  
 Թողուց դէկը՝ իբր ինչ հերոս զիւցազուն,  
 Ուղղեց ակնարկ վեհատեսիլ աչերուն,  
 Որոտաց նա, կարծես ամպոց հաւասար՝  
 «Մի լըքանիր, զի կը տանիս դու Կեսար»:  
 Ահագնագոչ ձայնէն կարծես նաւաստին,  
 Երկնազդեցիկ տըրոփ մ՝ ըզգաց ՚ի սրտին.  
 Եռաց արիւնն ալեկոծեց ծովի պէս,  
 Ուժ ընթացաւ անդամոց մէջ հըրակէզ:  
 Յոյցլացին աչեր նըւաղ յուսահատ,  
 Ձիզ — սլնդեցան բազուկները իբր երկաթ,  
 Ճըռնչեցին թիեր ճըկուն ձեռքին տակ,  
 Ճեղքեց զընաց նաւակն ալեաց գու.մարտակ:  
 Չանցաւ երկար Յուլիոսին լաստափայտ,  
 Կագ յուզելով փոթորկին դէմ գայթ ի գայթ,  
 Ողջ՝ անվրտանդ անցաւ՝ ելաւ՝ ի ցամաք,  
 Վեհ Կեսարին ձայնին հըլու հըպատակ:  
 Այսպէս կեանքն է ծով մըշտակոծ՝ ալեսաստ,

Իսկ մարմինը մի զիւրարէկ՝ փոքրիկ՝ լատտ,  
 Ուր շատ անգամ կամբը իբրև նաւաստի,  
 Ալեաց ընդդէմ յուսահատուած վըհատի.  
 Բայց հոգոյ խոր կայ վեհագուն մի կեսար,  
 Որուն ձայնը երկնից ձայնին հաւասար,  
 Կը ներշնչէ թոյլ նըւաստոյն ոյժ ու կեանք  
 Եւ ի ցամաք կը հանէ զայն անվրտանգ:



Յ Ո Ւ Յ Ա Կ

|                         | Երես |
|-------------------------|------|
| 1. Պսակ                 | 9    |
| 2. Հարսնիքու որ էշ      | 11   |
| 3. Մարդացեալ կապիկ      | 13   |
| 4. Քոթոտ մեծախօս        | 14   |
| 5. Սարգ և ճանճ          | 15   |
| 6. Օձ և ձուկ            | 17   |
| 7. Գաճաճ և սաղասողն     | 19   |
| 8. Գործունեայ կատու     | 20   |
| 9. Կապիկ և հայելի       | 21   |
| 10. Կոյր և կաղ          | 23   |
| 11. Հնդկահաւ և սիրամարդ | 24   |
| 12. Մսագործի որդին      | 26   |
| 13. Գործունեայ էշեր     | 27   |
| 14. Ստախօս              | 29   |
| 15. Ծառ և ազուաւ        | 30   |
| 16. Օձ՝ զորաւ և այծեր   | 32   |
| 17. Մայր և որդի         | 34   |
| 18. Ուղտ և ճանճ         | 34   |
| 19. Գեղջուկ՝ ձի և եղ    | 36   |
| 20. Կալ                 | 38   |

|                                 |    |
|---------------------------------|----|
| 21. Գայլ և աղուէս               | 39 |
| 22. Կաղամախ և ազոաւ             | 40 |
| 23. Յոպոպ                       | 42 |
| 24. Թռչնոց պատերազմը            | 43 |
| 25. Ուղտ և աղուէս               | 45 |
| 26. Թրթուրներ և մեղուներ        | 46 |
| 27. Արհ                         | 48 |
| 28. Լուսին                      | 49 |
| 29. Արաքիլ և սագ                | 50 |
| 30. Քար                         | 51 |
| 31. Զին                         | 53 |
| 32. Ոստեր և արմատներ            | 54 |
| 33. Գայլ և այծ                  | 55 |
| 34. Գայլ և աղուէս               | 57 |
| 35. Փիթիաս                      | 59 |
| 36. Համբերատար աղուէս           | 60 |
| 37. Ծեր՝ խոզ և գառ              | 62 |
| 38. Երկու շուներ                | 63 |
| 39. Հեռատես կատու               | 65 |
| 40. Առջ և աղուէս                | 66 |
| 41. Խաչափառ և բաղ               | 68 |
| 42. Ճանճ և թուղակ               | 69 |
| 43. Կրթեայ արջ                  | 70 |
| 44. Զիեր և էշեր                 | 72 |
| 45. Գրոշակ                      | 74 |
| 46. Գործունեայ պատանիներ        | 75 |
| 47. Օձ և աղբուկ                 | 78 |
| 48. Մի պատկեր կեանքի ճանապարհից | 79 |
| 49. Ուղտ և էշ                   | 81 |
| 50. Մասնաժողով                  | 84 |

|                          |     |
|--------------------------|-----|
| 51. Պանդորայ             | 87  |
| 52. Տղոցկան ուղտ         | 89  |
| 53. Ժայռ և կաթիլներ      | 90  |
| 54. Առուակ և ճիւղ        | 92  |
| 55. Առիւծ և խլուրդներ    | 93  |
| 56. Հաւ և սագ            | 96  |
| 57. Զկնորս պատանի        | 67  |
| 58. Թիթեռնիկներ          | 98  |
| 59. Հաւ՝ սագ և կատու     | 99  |
| 60. Կոսմոսպոլիտ հաւ      | 100 |
| 61. Յառաջադէմ ձի         | 102 |
| 62. Յառաջադիմութիւն      | 104 |
| 63. Ֆաքիր                | 106 |
| 64. Լեռ և դաշտ           | 108 |
| 65. Որթ և ոստեր          | 100 |
| 66. Արջ և պիճակ          | 111 |
| 67. Ազոաւ և աղուների     | 113 |
| 68. Եզներ և աղուէսներ    | 115 |
| 69. Իշխան և մուրացկան    | 116 |
| 70. Առիւծ՝ գայլ և աղուէս | 117 |
| 71. Աքաղաղ և աղուէս      | 118 |
| 72. Աղուէս և աքաղաղ      | 119 |
| 73. Ագան                 | 121 |
| 74. Գեղջուկ և օձ         | 122 |
| 75. Գորտ և եգ            | 123 |
| 76. Ազոաւ և աղուէս       | 125 |
| 77. Կատու և մկներ        | 126 |
| 78. Աքաղաղ և մարքարիտ    | 128 |
| 79. Ճպուռն և մրջիւն      | 129 |
| 80. Շուն և կուռնիկ       | 130 |

|                             |     |
|-----------------------------|-----|
| 81. Մեղու և օրիորդ          | 132 |
| 82. Շուն                    | 133 |
| 83. Ծեր և մահ               | 134 |
| 84. Երկու տակառներ          | 135 |
| 85. Գայլ և կռունկ           | 139 |
| 86. Վարժապետ և աշակերտ      | 145 |
| 87. Աղուէս և կիտարձան       | 139 |
| 88. Որսորդ և շուն           | 140 |
| 89. Գորտերուն բողոքը        | 142 |
| 90. Գայլ և գառն             | 144 |
| 91. Երկու շուներ            | 145 |
| 92. Գայլ և արջուկ           | 148 |
| 93. Էջ և սոխակ              | 149 |
| 94. Փիղ և քոթոս             | 150 |
| 95. Խօզը կաղնուռն ներքևը    | 151 |
| 96. Ալֆոնս թագաւոր          | 153 |
| 97. Երկու շուներ            | 154 |
| 98. Արև և ջրային կենդանիներ | 156 |
| 99. Կանանց զաղանապահութիւնը | 157 |
| 100. Առիւծ և էջ             | 160 |
| 101. Էշուն նաննիկը          | 162 |
| 102. Հովիւներ և հօտեր       | 163 |
| 103. Փիլիսոփայ և էջ         | 165 |
| 104. Դիողէն                 | 167 |
| 105. Իշխան և ծառայ          | 168 |
| 106. Ոսկի                   | 169 |
| 107. Պառաւ և ոսկի           | 171 |
| 108. Թռչնասէր իշխան         | 173 |
| 109. Լագեր և Դատաւոր        | 176 |
| 110. Իկար                   | 178 |


|                       |     |
|-----------------------|-----|
| 111. Աշխարհագիր       | 180 |
| 112. Նժոյգ և զրաստ    | 181 |
| 113. Ձիեր և գայլեր    | 183 |
| 114. Գայլ և աղուէս    | 184 |
| 115. Վարդենիկ և եղևին | 186 |
| 116. Մատնիչ գալլ      | 187 |
| 117. Պատկեր           | 189 |



| Երես. | Տող | սխալ         | ուղիղ       |
|-------|-----|--------------|-------------|
| 5     | 20  | Դո՛շ         | Դո՛շ        |
| 8     | 4   | Թերութեանանց | Թերութեանց  |
| 8     | 9   | Չերմաբուբոբ  | Չերմաբորբոբ |
| 8     | 11  | ցողմի        | ցողմի       |
| 10    | 16  | Փնշեր        | փրղեր       |
| 48    | 2   | տարբներն     | տարերբներն  |
| 59    | 13  | անցնաւ       | անցաւ       |
| 72    | 4   | գիտութիւն    | գիտութեան   |
| 77    | 24  | ուրագիծ      | ուրուագիծ   |
| 79    | 4   | քնադատներ    | քննադատներ  |
| 79    | 24  | գիսէր        | գիմէր       |
| 107   | 17  | փոսիս        | փոսիս       |
| 108   | 8   | ընդարկակ     | ընդարձակ    |
| 108   | 19  | անընդախոր    | անդընդախոր  |
| 167   | 16  | ծուկի        | ծունկի      |
| 183   | 3   | բարկասասա    | բարկասասա   |
| 192   | 6   | նւաստոյն     | նւաստոյն    |



\*) Սրբագրողը, իւր աչերուն տկարութեան պատճառաւ, սպրդած բառերու և կէտագրութիւններու տրւած պարական վրիպակներուն համար, կը խնդրէ ընթերցողներուն ներողամտութիւնը:



45628

